Azg Ազգ

21 ՅՈՒՆԻՍ 2008 ՇԱԲԱԹ 118 (4012)

Ադրբեջանական կազմակերպությունները պահանջում են դադարեցնել բանակցությունները

Ադրբեջանի մի շարք հասարակական-քաղաքական կազմակերպություններ պահանջում են դադարեցնել դաժանագույն հակամարտության կարգավորման խաղաղ բանակցությունները: «ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների հայամետ դիրքորոշումը եւ Ադրբեջանի վրա միջազգային կազմակերպությունների գործադրած ճնշումը հնարավորություն չեն տալիս շարունակելու բանակցությունները», նշվում է այն հայտարարության մեջ, որն ընդունվել է Ադրբեջանի այսպես կոչված Ղարաբաղի ազատագրման կազմակերպության նախաձեռնությամբ հասարակական-քաղաքական կազմակերպությունների անցկացրած համաժողովի արդյունքների վերաբերյալ: Հայտարարության մեջ նշվում է, որ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ ընթացող բանակցությունները միտված են, որ «Ադրբեջանին սպիտակ գիջումների գնալ», հաղորդում է Առմենպրեսը:

Լեւոն Տեր-Պետրոսյանը Համաժողովրդական շարժման հանրահավաքում ներկայացրեց ընդդիմության բազմիցս հնչեցրած պահանջները

Ոստիկանությունը՝ հանդուրժող, իսկ կազմակերպիչները՝ ոչ ագրեսիվ

ԳՈՌԻՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մարտի 1-ի սարսափելի դեպքերից հետո Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորած Համաժողովրդական շարժման կենտրոնը երեկ, ինչպես հայտարարել էր նախապես, հանրահավաք էր հրավիրել Մաշտոցի պուրակի առջեւ, որը քաղաքապետարանը չէր արտոնել: Դեռ կեսօրից սկսած Մաշտոցի պուրակը շրջափակած ոստիկանները մինչեւ 17.45 որեւէ մեկին թույլ չէին տալիս բարձրանալ Մաշտոցի բարձունք: Հանրահավաքի հայտարարված ժամից բավական ժամեր առաջ Մաշտոցի պուրակի հարող տարածքում հավաքված շարժման մասնակիցները ժամը 18-ի սահմաններում լցվեցին-փակեցին փողոցը, իսկ Զուտաբյան-Աֆյան բանակցությունների արդյունքում հանրահավաքի մասնակիցներին թույլատրվեց բարձրանալ Մաշտոցի բարձունք եւ իրականացնել հանրահավաքը: Թեեւ նախապես Մաշտոցի պուրակի մոտ հանրահավաք անցկացնելու առաջարկը քաղաքապետարանը չէր արտոնել, այդուհանդերձ այդ վայրում հանրահավաքը հրավիրելու «ճանապարհը», փաստորեն, իշխանությունները բացեցին, ինչը երեւի թե կանխավ մտածված հնարք էր:

Հանրահավաքների ամենավիճակելի հարցին՝ մասնակիցների քանակին, չենք անդրադառնում: «Մաթեմատիկական» հաշվարկը թողնելով մյուսներին՝ միայն նշենք, որ հանրահավաքի մասնակիցները Մաշտոցի պուրակի բարձունքից մինչեւ «Գրանդ Քենդի»-ի մոտ էին հասնում, մասնակիցներ կային նաեւ Մաշտոցի պուրակին հարակից խոտածածկ տարածքում:

Տես էջ 2

ԳԵՍՊՍԵՆՍՈՒԹ՝ ԿՈՆԳՐԵՍԻ ՍՈՍՈՒ

«Մեծ եղեռն» ձեւակերպումը «ցեղասպանության» փոխարեն

«ԱՄՆ կառավարությունը եւ, իհարկե, ես ճանաչում եւ սգում ենք զանգվածային սպանությունների, էթնիկ զտումների եւ բռնի տեղահանության համար, որն Օսմանյան կայսրության վերջին շրջանում խլեց 1,5 միլիոն հայերի կյանք: ԱՄՆ-ը ճանաչում է այդ իրադարձությունները որպես 20-րդ դարի ամենամեծ ողբերգություն, «Մեծ եղեռն», ինչպես շատ հայեր անվանում են», ասել է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանի թեկնածու **Մարի Յովանովիչը**՝ ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում կայացած լսումներում: Ըստ նրա՝ վարչակազմը հասկանում է, որ շատ ամերիկացիներ հավատում են, որ այդ իրադարձությունները պետք է կոչվեն ցեղասպանություն: Նախագահ Ջ. Բուշը հավատում է, որ զոհերին հարգելու ամենալավ եղանակն անցյալը հիշելն է եւ դեռի առաջ նայելով՝ փոխըմբռնում ու համաձայնություն հասնելը հայերի եւ թուրքերի միջեւ, ասել է Յովանովիչը նշելով, որ դրա բանալին Հայաստանի մեկուսացմանը վերջ դնելն է եւ սահմանների բացումը: Դեսպանի թեկնածուին հարցեր է ուղղել դեմոկրատ սենատոր **Ռոբերտ Մենենդեսը**, որը ժամանակին երկու անգամ արգելափակել էր նախագահ Ջորջ Բուշի առաջարկած նախկին թեկնածուի՝ Ռիչարդ Հոգլանդի հաստատումը: Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Յովանովիչի նշանակման հարցով քվեարկությունը կանցկացվի, երբ դիվանագետը կոչտաստանի նաեւ գրավոր հարցերին, որոնք նրան հղել են մի շարք սենատորներ, այդ թվում՝ Դեմոկրատական կուսակցությունից ԱՄՆ-ի նախագահի թեկնածու **Բարաք Օբաման**, Կալիֆորնիայից ընտրված դեմոկրատ սենատոր **Բարբարա Բոքսերը** եւ այլք:

Պլանային դիտարկում ԼՂՀ եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում

ԼՂՀ իշխանությունների հետ նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ԵԱՀԿ առաքելությունը պլանային դիտարկում է անցկացրել ԼՂՀ եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծի Մարտակերտի շրջանի ուղղությամբ՝ Սեյսուլան բնակավայրից արեւելք: Ըստ Առմենպրեսի, ԼՂՀ պաշտպանության բանակի դիրքերից դիտարկումն իրականացրել են ԵԱՀԿ գրասենյակի հավակարգող փոխգնդապետ Իմրե Պալաշինուսը եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի դաշտային օգնական Անթալ Հեորիչը: Ադրբեջանական կողմից դիտարկման խումբը ղեկավարել է ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրչիկը: Դիտարկման ժամանակ կակի դադարեցման ռեժիմի խախտումներ չեն արձանագրվել: Սակայն, ի տարբերություն դաշտային կողմի, ադրբեջանական կողմը ԵԱՀԿ առաքելությանը չի առաջնորդել առաջավոր գիծ, խմբի անդամները սպիտակած են եղել դիտարկում իրականացնել ավելի մեծ հեռավորությունից: Իմրե Պալաշինուսը դեսպան Կասպրչիկի ուղեւորությունը հրավիրել է այդ փաստի վրա:

Սեֆիլյանը դիմել է հաղթահացիության համար

Ժիրայր Սեֆիլյանի գրասենյակից հաղորդում են, որ ոստիկանության անձնագրերի եւ վիզաների վարչության աշխատակիցները ընդունել են ՀՀ հաղթահացիություն ստանալու վերաբերյալ Ժիրայր Սեֆիլյանի երրորդ դիմումը: Նախորդ երկու դիմումներից առաջինը Ռոբերտ Քոչարյանը անհաստատուն էր թողել 2004-ին, իսկ երկրորդը անհիմն մերժել էր 2006-ին: Մի փորձ էլ Ժիրայր Սեֆիլյանը արել էր բանտարկության օրերին, սակայն անձնագրերի եւ վիզաների վարչության աշխատակիցները տարբեր պատճառաբանություններով հրաժարվում էին ընդունել դիմումը: Հայաստանի հաղթահացիություն ստանալ-չստանալու հանգամանքից անկախ, ՀՀ օրենսդրության շրջանակներում, առնվազն 16 տարի Ժիրայր Սեֆիլյանին հնարավոր չէ արտաքսել հայրենիքից, ասված է հաղորդագրության մեջ:

Սմբատ Այվազյանի կալանքը երկարաձգվեց

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը, դատավոր Գայանե Կարախանյանի նախագահությամբ, մասնակցորեն քննարկել է նախաքննության մարմնի միջնորդությունը եւ «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի անդամ Սմբատ Այվազյանի կալանքը երկարաձգել է եւս 20 օրով: Ըստ Վճռաբեկ դատարանի մամուլի քարտուղար Ալինա Եղոյանի, Ս. Այվազյանը կալանքի տակ է փետրվարի 27-ից:

Նյու Յորքի «Ռուբի» պարախումբն իր 15-ամյակը կնքի Երեւանում

Երեւանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հուլիսի 3-ին հանդես կգա Նյու Յորքի Ս. Վարդան մայր տաճարի «Ռուբի» պարախումբը: Դաշերգը, որը կկայանա «Հայաստան» համահայկական հիմնադրամի հովանու ներքո, կնվիրվի պարախմբի ստեղծման 15-ամյակին: Ինչպես Առմենպրեսին հայտնեցին համահայկական հիմնադրամի հասարակայնության հետ կապերի բաժնից, համերգի ընթացքում ելույթ են ունենալու հանդիպի 50 պարող-պարուհիներ, ծանաչված երգիչներ, այդ թվում՝ Նյու Յորքի օպերային թատրոնի երգիչ Վաղարշակ Օհանյանը եւ Լեյլա Սարիբեկյանը: Հանդես կգա նաեւ Երեւանի «Վահագն» հարվածային խումբը:

Մեղադրանք է առաջադրվել կաշառք ստանալու համար

Գլխավոր դատախազության մամուլի ծառայությունից հաղորդում են, որ ոստիկանության ճնշական գլխավոր վարչությունում ավարտվել է Սյունիքի մարզի Կապանի եւ Սիսիանի տարածաշրջանի ուսումնական հաստատությունների զինղեկների որակավորման ճնշությունների ընթացքում, դրական գնահատական նշանակելու համար նրանցից կաշառք պահանջելու եւ ստանալու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը: Պարզվել է, որ Կրթության ազգային ինստիտուտի նախնական զինվորական պատրաստության՝ ֆիզկուլտուրայի, անվտանգ կենսագործունեության բաժնի պետ Վաչագան Ասատյանը, Կապանի տարածաշրջանի ուսումնական հաստատությունների զինղեկների որակավորման ճնշություններից առաջ նրանց բավարար գնահատականներ նշանակելու համար պահանջել է յուրաքանչյուրից 30.000-ական դրամ՝ սպառնալով հակառակ դեպքում անբավարար գնահատականներ նշանակել: Ընդհանուր առմամբ ստացել է խոշոր չափերի 320.000 ՀՀ դրամ կաշառք: Քննությունների ընթացքում բավարար գնահատականներ նշանակելու համար Վ. Ասատյանը կաշառք է պահանջել նաեւ Սիսիանի տարածաշրջանի ուսումնական հաստատությունների թվով 20 զինղեկներից՝ յուրաքանչյուրից 25.000-ական դրամ եւ նույն օրը ստացել պահանջված գումարը՝ ընդհանուր առմամբ 500.000 դրամ: Ձեռք բերված առաջադրանքների հիման վրա Վ. Ասատյանին մեղադրանք է առաջադրվել: Քրեական գործն ուղարկվել է Հարավային քրեական դատարան:

ՄՈՒԹՔԱՐԵՔ

Թերեւս չդառնանք ձայնազուրկ ԵԽԽՎ-ում

Բայց ի՞նչ ենք ասում ու լսում մեր երկրի մասին...

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Կա կատարված աշխատանք, որը շատ դրական է: Պետք է գնալ ավելի հեռուն՝ մինչեւ վերջ, որ Հայաստանի վստահելիությունը ճանաչվի ինչպես հենց հայաստանցիների, այնպես էլ միջազգային կառույցների, առաջին հերթին՝ Եվրոխորհրդի կողմից», օրերս նման կարծիք էր հայտնել Եվրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովի մոնիտորինգի հանձնաժողովի համազեկուցող Ժորժ Կոլոմբիեն՝ խոսելով Հայաստան կատարած այցից եւ Հայաստանի իշխանությունների կողմից թիվ 1609 բանաձեւի կատարման ընթացքի մասին:

Կոլոմբիեն նշել է նաեւ, որ Հայաստանն ակնկալում է նաեւ հաջողեցնի՝ շարունակելու այն, ինչ սկսել է թիվ 1609 բանաձեւի ընդունումից հետո: «Ես իրոք ցանկանում եմ, որ եվրոխորհուրդը, ԵԽԽՎ-ը կարողանան ենթադրել շարք առնվազն նրանց տալ շատ ծգտիչ հանձնարարականներ, որպեսզի նրանք շարունակեն գնալ ժողովրդավարության ճանապարհով: Դա անչափ կարեւոր է: Համոզված եմ, որ Հայաստանի իշխանությունները ակնկալում կլինեն եւ մինչեւ վերջ կիրակնացնեն այն, ինչ իրենցից պահանջվել է», նշել է Կոլոմբիեն, ավելացնելով. «Հայաստանն ակնկալում է, որ մենք իրեն օգնենք եւ ոչ թե միայն դատապարտենք»:

Եկող շաբաթ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը կգումարի իր ամառային նստաշրջանը, որի ընթացքում էլ կնշարկի, թե որքանով է Հայաստանը կատարել դեռեւս արդեն 17-ին ԵԽԽՎ գարնանային նստաշրջանում ընդունված Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների գործունեության առնչությամբ բարձրաձայնված պահանջները: Դատելով համազեկուցող Ժորժ Կոլոմբիեի խոսքերից, Հայաստանն ամենայն հավանականությամբ կպահպանի իր ձայնի իրավունքը, բայց թե որքանով են իրագործվել ԵԽԽՎ բանաձեւի պահանջները՝ այդ առնչությամբ դեռեւս կարող են խիստ գնահատականներ հնչել:

Հիշեցնենք, որ ըստ բանաձեւի ընդհանուր բաժնի դրույթների, «Հայաստանում փետրվարի 19-ի նախագահական ընտրություններից հետո հանրային վրդովմունքի արտահայտությունն ու դրա հետեւանքով մարտի 1-ի ողբերգական իրադարձությունները անտարակույս կարող էին լինել, եթե ճգնաժամի խորհրդային պատճառները չլինեին պետական հիմնական ինստիտուտների գործունեության անհաջողության հիմքում՝ ընդգրկելով խորհրդարանն ու դատարանները...»:

Տես էջ 3

Հրանուշ Խառատյան. «Գլոբալ իմաստով Լևոն Տեր-Պետրոսյանը հասարակության հետ երկխոսության ընդունակ չէ»

«Հայելի» ակումբում երեկ հյուրընկալված ՀՅԴ պատգամավոր **Ալվարդ Պետրոսյանն** ու **Հրանուշ Խառատյանը** բանավիճել են ներհաղթական իրավիճակի շուրջ՝ մասնաբաժնելով երկրի առջև ծառացած խնդիրները: Ալվարդ Պետրոսյանը նշել է, որ իշխանությունները մարտի 1-ի դեպքերից հետո ժամանակ չեն ունեցել շունչ քաշելու, ներքին իրավիճակն ու միջազգային հանրության ճնշումը թույլ չեն տվել սթափ մտածելու, բայց այդ ամենի ֆոնին անգամ առկա է հասարակության հետ երկխոսելու իշխանությունների ջանքը: «Նոր մարդիկ են, նոր կարգախոսներով: Սրասենք, տեսնենք, որովհետև նրանք ակնհայտ ճիգ են թափում իրավիճակը փոխելու համար», ասել է Ալվարդ Պետրոսյանը՝ հավելելով, որ ինքն ընդդիմության կողմից երկխոսություն չի տեսնում:

«Գլոբալ իմաստով՝ երկխոսության հասարակության հետ Լևոն Տեր-Պետրոսյանն ընդունակ չէ, վկա՝ նրա իշխանության շրջանը: Ուղղակի ես պետք է նաև ասեմ, որ իշխանություն-հասարակություն երկխոսությունը նույնպես ոչ միայն չի կայանում, այլեւ հասարակությանը վերաբերվում են ուղղակի բռունցք ցույց տալով, մաս թափ տալով, երբեմն հացի տալով, երբեմն կյանքերի հետ խաղալով: Ես այս տեսնենք, որովհետև նրանք պատգամավոր, նորից վերադառնալով հասարակությանը, կասեմ, որ մենք ունենք իշխանության ճգնաժամ առհասարակ, եւ դա 93-ից շարունակվող երեւույթ է», ասել է Հրանուշ Խառատյանը:

ՀՅԴ-ական պատգամավորը նշել է, որ որեւէ երկրում իշխանության հետ չի կարելի խոսել վերջնագրերի ու պահանջատիրության լեզվով: «93-94-ի շրջանում Դաշնակցությունն այդ ժամանակվա իշխանությունների հետ վերջնագրով չի խոսել», ասել է Ալվարդ Պետրոսյանն ի պատասխան հարցին, թե ինչպես էր խոսում ՀՅԴ-ն իշխանության հետ 93-94-ին: Նրա խոսքով, Դաշնակցությունն ասում էր ինչը ճիշտ չէ, բայց միաժամանակ իշխանության բանակում մարդ էր ուղարկում կռվելու, Հայ օգնության միությունն էլ օգնություն էր ուղարկում. «Այսինքն, մենք չէինք համաձայնում շատ հարցերի, բայց լիով մասնակցում էինք մեր ժողովրդի առաջ ծառացած խնդիրները լուծելուն»:

Հրանուշ Խառատյանը, սակայն, հակադրվելով Ալվարդ Պետրոսյանին՝ շեշտել է, որ ինքը վերջնագիր ունի իշխանություններին սահմանադրությունն ու օրենքները հարգելու հարցում. «Եթե իշխանությունը չի կատարում, առյա ես այդ կարգադրությամբ ունեմ վերջնագիր եւ ասում եմ, որ եթե օրենքները չեն հարգվում, առյա խաղաթղթերը նաեւ փողոց դուրս կգան՝ իրենց իրավունքը պաշտպանելու համար», ասել է Հրանուշ Խառատյանը, կասեմ, որ մենք ունենք իշխանության ճգնաժամ առհասարակ, եւ դա 93-ից շարունակվող երեւույթ է», ասել է Հրանուշ Խառատյանը:

ՀՅԴ-ական պատգամավորը նշել է, որ որեւէ երկրում իշխանության հետ չի կարելի խոսել վերջնագրերի ու պահանջատիրության լեզվով: «93-94-ի շրջանում Դաշնակցությունն այդ ժամանակվա իշխանությունների հետ վերջնագրով չի խոսել», ասել է Ալվարդ Պետրոսյանն ի պատասխան հարցին, թե ինչպես էր խոսում ՀՅԴ-ն իշխանության հետ 93-94-ին: Նրա խոսքով, Դաշնակցությունն ասում էր ինչը ճիշտ չէ, բայց միաժամանակ իշխանության բանակում մարդ էր ուղարկում կռվելու, Հայ օգնության միությունն էլ օգնություն էր ուղարկում. «Այսինքն, մենք չէինք համաձայնում շատ հարցերի, բայց լիով մասնակցում էինք մեր ժողովրդի առաջ ծառացած խնդիրները լուծելուն»:

Հրանուշ Խառատյանը, սակայն, հակադրվելով Ալվարդ Պետրոսյանին՝ շեշտել է, որ ինքը վերջնագիր ունի իշխանություններին սահմանադրությունն ու օրենքները հարգելու հարցում. «Եթե իշխանությունը չի կատարում, առյա ես այդ կարգադրությամբ ունեմ վերջնագիր եւ ասում եմ, որ եթե օրենքները չեն հարգվում, առյա խաղաթղթերը նաեւ փողոց դուրս կգան՝ իրենց իրավունքը պաշտպանելու համար», ասել է Հրանուշ Խառատյանը:

Գ. Գ.

Մայրաքաղաքային գնդում մեկնարկեց «Պատիվ ունեմ ներկայանալու» միջոցառումը

ՀՀ վարչապետի եւ պաշտպանության նախարարության մտահղացմամբ որոշվել է զինուժի բարեփոխումների շրջանակներում կազմակերպել «Պատիվ ունեմ ներկայանալու» խորագրով միջոցառումների շարք, որը նախատեսված է անցկացնել հանրապետության բոլոր զորամասերում, բոլոր հրամանատարների համար:

Երեկ մայրաքաղաքային գնդում շարքի անդրանիկ միջոցառումը մեկնարկվեց Մարտական խաչ առաջին աստիճանի շքանշանակիր, 89-րդ Թամանյան դիվիզիայի անվան 4-րդ հատուկ հրաձգային գնդից: Միջոցառման նպատակն էր սերտացնել բանակ-հասարակություն կապը, ամրապնդել զինծառայողների եւ հարազատների եւ ՀԿ-ների փոխհամագործակցությունը, նպաստել հասարակության գիտակցության մեջ հրամանատարների դրական կերպարի ձեւավորմանը, թափանցիկ դարձնել զորամասի մի շարք ավանդույթներ զինծառայողների ծնողների հարազատներ:

Թեմուր Շահնազարյանը՝ մայրաքաղաքային գնդի հրամանատարն է եւ «Պատիվ ունեմ ներկայանալու» շնորհանդեսի առաջին ներկայացնողը: Նա պատմեց գնդի անցած մարտական ուղին, առօրյա զինվորական ծառայության ընթացքը, պատասխանեց նաեւ զինծառայողների ծնողներին հուզող շատ հարցերի եւ խոստացավ լուծում տալ այն խնդիրներին, որոնք ի հայտ են եկել ծառայության ընթացքում:

Վարչապետ Տիգրան Սարգսյանը, պատասխանելով լրագրողներին հետաքրքրող հարցերին, նշեց, որ բոլոր գնդերը պետք է վարակվեն նմանատիպ միջոցառումներ անցկացնելու գաղափարով, որպեսզի բավարարվեն ծնողներին մտահոգող հարցերը. «Պափազանց կարեւոր է, որ հրամանատարները ստիպված ծնողների հետ սրտաբաց պատասխաններ տան մտահոգող հարցերին: Բնականաբար դա կստեղծի ավելի ջերմ մթնոլորտ, ծնողները ավելի հանգիստ կլինեն՝ իմանալով, թե ինչպիսի հրամանատարներ են կարգավորում իրենց զավակների կյանքը»:

ՆԱՐԻՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Լեւոն Տեր-Պետրոսյանը Համաժողովրդական շարժման ...

1-ին էջից

Տեխնիկական խնդիրների պատճառով հանդիպումը մեկնարկեց մեկուկես ժամ ուշացումով:

Հանդիպումի հարթակին՝ Մատենադարանի բարձունքում, ինչպես նախկինում, այս անգամ էլ կանգնած էին Տեր-Պետրոսյանին սատարող քաղաքական ուժերի ղեկավարները, ելույթ ունեցան ՀԺԿ ղեկավար **Ստեփան Դեմիրճյանը**, «Հանրապետություն» կուսակցության նախագահ **Արամ Սարգսյանը**, «Նոր ժամանակներից» **Հռիպսիմե Սարգսյանը**, «Պահպանողական» կուսակցությունից **Զավեն Վարդանյանը**, «ՀՇՈՒԿ» փոխնախագահ **Վարդան Գրիգորյանը**, դերասան **Երվանդ Մանարդանը**, խաղաղության **Հովսեպ Հովհաննիսյանը**, ՍԴՀԿ ատենադպիր **Լյուդմիլա Սարգսյանը** եւ Շուբիի առանձնակի գումարտակի նախկին հրամանատար **Ժիրայր Սեֆիլյանը**: Ելույթներն ընդմիջվում էին երաժշտությամբ, խորհրդավոր ձեւով իր ծիսախումբ վայելող եւ Մատենադարանի բարձունքում շրջող Լեւոն Տեր-Պետրոսյանը մեկընդմեջ մոտենում էր հարթակին եւ ձեռքով ողջունում հանրահավաքի մասնակիցներին:

Հանրահավաքի մյուս մասնակիցների ելույթներին չենք անդրադառնում, որովհետեւ որեւէ նորություն չկար եւ կրկին հաստատվում էր հայրենասիրությունը, ինչի մասին արդեն բանի անգամ տեսնում է ՀՀՇ-ական մամուլը: Սակայն ուշադրավ եւ նոր խոսք էր Ժիրայր Սեֆիլյանինը, որը անկեղծ էր ու տիպակ: Այս շարժումը Սեֆիլյանը բնորոշեց դիմադրական ժողովրդական շարժում. «Ժողովրդական շարժման հետ կապված պետք է ասվում, թե չկա գաղափար, չկա ծրագիր, եւ իհարկե պետք հայասանում քաղաքական գործընթացներ տեղի չեն ունենում: Կա ժողովրդին կեղեքող համակարգ եւ կա դրան դիմադրող ժողովուրդ: Սա դիմադրական ժողովրդական շարժում է»: Սեֆիլյանը հայտարարեց, որ Տեր-Պետրոսյանին նախագահ դարձնելը ոչ թե նպատակ է, այլ միջոց, ու հիշեցրեց, որը ինքը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանն է պատասխանատվություն հայտնել որոշ գործիք ծառայելու:

Սեֆիլյանն անդրադարձավ նաեւ իր եւ առաջին նախագահի միջեւ տարաձայնությունների առկայության մասին լուրերին՝ ընդգծելով, որ նման տարաձայնություններ իրականում կան, բայց դրանք «մեզ չեն սփոփում անքաս լինել այս պայքարում»: Սեֆիլյանը հատուկ խոսեց Արցախը հանձնել-ծախելու լուրերի մասին՝ ասելով, որ հայ որեւէ նախագահ չի համարձակվի Արցախը վաճառել, բացի «այն ֆիտահոլակ երկուսից, որոնց անունները ես չեմ ուզում տալ»: Եթե որեւէ մեկը նման մտադրություն ունենա, Սեֆիլյանի խոսքով, իրենք իրենց պայքարով կկանխեն այդ դավադիր ձեռքը:

Հանրահավաքի վերջում ելույթ ունեցավ Լեւոն Տեր-Պետրոսյանը, որը գրեթե որեւէ նոր բան չասաց՝ կրկնելով ընդդիմադիրների մինչ հանրահավաքը հնչեցրած պահանջները: Տեր-Պետրոսյանի հնչեցրած միակ նորությունը թերեւս այն էր, որ նա իշխանություններից պահանջեց Հայաստանի ազգային հերոսի կոչում տալ մարտի 1-ի զոհերին, ինչպես նաեւ փոխհատուցում նրանց ընտանիքներին՝ այն էլ ոչ թե պետբյուջեից, այլ իշխանավորների գրպանից:

Համաժողովրդական շարժման ղեկավարը կրկին նշեց իրենց պահանջները. «Այս իրավիճակն առաջացել է ընտրությունների արդյունքում եւ կարող է լուծվել արահերթ խորհրդարանական եւ նախագահական ընտրություններով»: Նոր ընտրություններին զուգահեռ շարժման ղեկավարը խիստ կարեւորեց եհխվ բանաձեւի պահանջներից գոնե մեկի՝ քաղաքացիական ազատ արձակման պահանջի կատարումը, ինչից հետո ոչ միայն քաղաքական պայքարը կտեղափոխեն քաղաքացիական փուլ, այլեւ պատրաստ կլինեն երկխոսելու: Նա անգամ եհխվ-ին կոչ արեց, որ եթե մինչեւ հունիսյան նստաշրջանը Սերժ Սարգսյանն ազատի կալանավորներին, եվրոկառույցը չդիմի մեր երկրի նկատմամբ սանկցիա կիրառելու քայլին:

«Մենք հասկանում ենք, որ այս իրավիճակը վտանգավոր է: Վտանգավոր է ոչ միայն ֆիզիկական բախումներ լինելու առումով, այլեւ նրանով, որ այս իրավիճակում իշխանությունները չեն կարող իրենց պարտականությունները կատարել, այս հարցադրումով հավաքված մարդիկ էլ չեն կարող իրենց պարտքը կատարել իրենց ընտանիքների առաջ: Երկխոսության պատրաստ ենք, բայց «բազարների» մեջ չենք մտնելու... Երկխոսությունը կարող է լինել խաղի կանոնները համաձայնեցնելու, դեմոկրատիայի ուղը», հայտարարեց Լեւոն Տեր-Պետրոսյանը: Հիշեցնենք, որ օրերս ոստիկանների հետ հանդիպումից հետո լրագրողներին տված ճեպազրույցում նա երկրի ղեկավար Սերժ Սարգսյանն ասել էր, թե երկխոսությունը կարող է լինել խաղի կանոնները ճշտելու ուղը: Երկուսի նման արտահայտությունները, վստահ ենք, բոլորովին տարբեր բաներ են նշանակում, սակայն այս պահին դժվար է ասելը, թե այդ արտահայտության տակ ով ինչ էր հասկացնում:

Հավանաբար իրենց պայքարի հետագա հեռանկարը մատնանշելու համար առաջին նախագահը հայտարարեց, որ իրենց պայքարի միջոցը հանրահավաքներն են լինելու, եւ իրենք այնքան են պայքարելու մինչեւ հասնեն իրենց նպատակին. «Միայն այս պայքարը կարող է վերջնական հաղթանակ բերել մեր երկրին ու ժողովրդին»: Անդրադառնալով երկիրը իր լքելու հավանականությանն էլ՝ նշեց, թե ինքը վերջին մարդը կլինի, որ կհրաժարվի պայքարից եւ կլքի երկիրը: Որոնց առաջարկ էլ հայտարարեց հաջորդ հանրահավաքի օրը՝ հուլիսի 4-ին, ժամը 19-ին:

Մի հանի ամսվա դադարից հետո Տեր-Պետրոսյանի ելույթն իր ագրեսիվությամբ հաստատ զիջում էր նախորդ անգամներին: Ավելին, մյուս ելույթ ունեցողներն ավելի ագրեսիվ էին՝ իշխանությունների հասցեին մեղադրանքներն այս անգամ էլ իր չէին: Այս պահին դժվար է ասել, թե Տեր-Պետրոսյանի հանդեսաբար ինքնազուսպ պահվածքն ինչի նշան էր՝ պայքարի հետագա հասակ ծրագիր չունենալո՞ւ, միանգամից զիջման չգնալո՞ւ, թե՞ տեսական քայլերով դեռի սեփական նպատակի սլացում, որն իրեն ընտրած ձեւով երեկվա հանրահավաքով սկսվեց նորից «ահազանգել», ինչպես դա եղավ ընտրություններից առաջ:

Բանակցում ենք...

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
հրատարակչության մէջ ստացի

Դիմեցեք եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Հեռ. 374 10 562663
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱՎՈՒՇ ԱՐԵՏՐԵԼԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՎՈՐԵԱՆ / հեռ. 529221

Հաշվապահութիւն (գրասենեակ) / հեռ. 582960

Լրագրողների սենեակ / հեռ. 581841

Հանձնարարութիւն / հեռ. 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ. 529353

Հանձնարարելի տարածք
«Ազգ» թերթ

Թերթի նիւթերի ամբողջական եւ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռարձակութեամբ առանց խմբագրութեան գրաւոր հաստատութեան խստիւ արգիլւում են հանձայն ՀՅ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

Գ տարով յորդաւոր գրանցագրային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Վարչապետն ու բնապահպանները

Ընդարկեցին Թեղուտի հանքավայրի շահագործման վերաբերյալ հարցադրումներն ու հիմնավորումները

Բնապահպանական կազմակերպությունները շարունակում են իրենց հարցադրումներն ու մտահոգություններն արտահայտել Թեղուտի ոսկեմոլիբդենային հանքավայրի շահագործման հնարավոր բացասական բնապահպանական հետևանքների մասին: Երեկ այդ հարցադրումները կազմակերպությունների ներկայացուցիչները վարչապետ **Տիգրան Սարգսյանի** հետ ճնշակեցին կառավարությունում, որին մասնակցում էին նաև բնապահպանության, էներգետիկայի եւ բնական պաշարների, էկոնոմիկայի նախարարները ու նախարարության մասնագետները: Մինչ բնապահպանների հարցադրումները լսելն ու դրանց պատասխաններ տալը, վարչապետը նշեց, որ Թեղուտի հետ կապված որոշումները պետք է հավասարակշռված լինեն: Նա հայտարարեց, որ պատասխանում է բոլոր հարցերին տալ համոզիչ պատասխաններ, եւ առաջարկեց ներկաներին կառուցողական խոսակցություն վարել: Առաջ անցնելով նշենք, որ նավալվող երկխոսությունը իսկապես կառուցողական էր:

Հարցադրումներից առաջինը, որ ներկայացրեց երկխոսության թերեւս ամենաակտիվ մասնակիցը՝ Կանանչների միության նախագահ **Հակոբ Սանասարյանը**, այն էր, որ հանքավայրի շահագործման դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը կատարվել է 8 տարվա կտրվածքով, մինչդեռ հանքավայրի շահագործումը տրված է 25 տարով: Բնապահպանության փոխնախարար **Սիմոն Պապյանը** փորձեց արդարացումներ գտնել, սակայն արձագանգ Տիգրան Սարգսյանի հակազդեցությանը: Վարչապետն ընդունեց հարցադրումը եւ ասաց, որ անհրաժեշտ է անցկացնել միասնական փորձաքննություն 25 տարվա համար:

Մյուս հարցն այն էր, որ հանքավայրը շահագործելիս անտառահատումների վնասը հաշվարկվի այն չափով, որով օրենքով պահպանվող է սահմանված աղբյուրների անտառահատումների համար: Դրան, սակայն, Տիգրան Սարգսյանը չհամաձայնեց, ասելով, որ չի կարելի նույն հարթության վրա դնել աղբյուրություն թույլ տվողներին եւ օրինական գործունեություն իրականացնողներին: Թեեւ դժվարությամբ, բայց այս անգամ էլ բնապահպանները համաձայնեցին Տիգրան Սարգսյանի մոտեցմանը: Միաժամանակ կողմերը միակարծիք էին, որ, այդուհանդերձ, սահմանվեն վնասի հաշվարկման նորմատիվներ եւ, որ այժմ սահմանվածները ցածր են:

Շնող գեսը արդյունաբերական ձկնորսության համար ոչ պիտանի ճանաչելու բնապահպանների առաջարկին կառավարության ներկայացուցիչները համակարծիք էին: Մյուս մտահոգությունը այդ նույն գեսի կռունկ վսակի կիրառը թափոնների վայր վերածվելուն էր վերաբերում: Դրան բնապահպանության փոխնախարարը պատասխանեց, որ թափոնների որեւէ տեղաբաշխում այդ կիրառում նախատեսված չէ:

Բնապահպանների մտահոգությունների մի ամբողջ խումբ վերաբերում էր Թեղուտի հանքավայրի շահագործման տնտեսական նպատակահարմարությանը եւ արդյունավետությանը, նկատի ունենալով բնապահպանությանը, գյուղատնտեսությանը, վարչապետը նշեց, որ Թեղուտի հետ կապված որոշումներ է ընդունվելիք վնասները եւ համեմատելով դրանք հանքավայրի շահագործման ժամանակ ներդրումների, վճարելիք աշխատավարձերի չափի եւ ընդհանրապես վերջնական արդյունքի հետ: Այս առթիվ վարչապետը հակառակ համոզմունք հայտնեց, ասելով, որ այս նախագիծը համապետական նշանակություն ունի: Նա միաժամանակ հայտնեց, որ Թեղուտի հանքավայրի շահագործման համապետական նշանակությունը հիմնավորող հատուկ շնորհանդես կկազմակերպվի:

Մեկ այլ հուզող խնդիր էր բնապահպանական վճարների հարցը: Փաստորեն, գործող օրենսդրությամբ, թափոնների համար հանքավայրը շահագործող ընկերությունը բնապահպանական վճարներ գրեթե չի վճարելու: Այդ մասին բնապահպանության փոխնախարար Սիմոն Պապյանը նշեց, որ լուրջ խնդիր է եւ օրենսդրական կարգավորում այս պահին դրան տրված չէ: Օրենքի փոփոխությամբ դա նախատեսվում է: Իսկ մինչ այդ, ընդունելով խնդրի առկայությունը, վարչապետը նշեց, որ պետք է արվեն համապատասխան հաշվարկներ եւ համաձայնեց այդ հաշվարկները կատարելու համար հիմք ընդունել Հակոբ Սանասարյանի ներկայացրած մեթոդիկան:

Թեղուտի հանքավայրի շահագործումը կարող է մի շարք միջազգային օրենքներ խախտել, եւ առաջացնել մեր հարեւան երկրների դժգոհությունը, հեռագրում ստիպելով մեզ կանգնեցնել այդ նախագծի իրականացումը: Բնապահպանների այդ մտահոգությունը ընդունելով, Տիգրան Սարգսյանը հավաստիացրեց, որ հանքավայրի շահագործման ժամանակ բացառվում է անդրսահմանային ազդեցությունը:

Բնապահպանները դժգոհ էին Թեղուտի հանքավայրի շահագործումը ԱՀՊ-ին հանձնելու փաստից, նշելով, որ այդ ընկերությունը չի կատարել Ալավերդու կոմբինատը շահագործելու ժամանակ բնապահպանական արտանետումները սահմանափակելու իր պարտավորությունները: Սիմոն Պապյանը նշեց, որ այդ պարտավորությունները սահմանող ժամանակացույց է կազմվել նախարարությունում, եւ եթե ընկերությունը չկատարի դրանով նախատեսված միջոցառումները, արդեն 2009-ի համար կվճարի 3 անգամ ավելի բնապահպանական վճարներ: Տիգրան Սարգսյանն էլ ավելացրեց, որ իսկապես բնապահպանության նախարարության ժամանակացույցով նախատեսված պարտավորությունները չեն կատարվել: Սակայն հավանական է, որ ԱՀՊ-ն այդպես էլ չկատարի իր այդ պարտավորությունը, այլ պարզապես փակի Ալավերդու կոմբինատը, ինչի հավանականության մասին հավաստեց նաեւ բնապահպանության նախարարության ներկայացուցիչը:

Հանդիպմանը նաեւ ձեռք բերվեց պայմանավորվածություն կրկին հանդիպելու եւ ճնշակումները շարունակելու:

ԱՐԵՎ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայաստանի տնտեսական աճը՝ 9,8 տոկոս

Արտահանման ծավալները գրեթե չեն ավելացել

Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության օպերատիվ տվյալների, այս տարվա հունվար-մայիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Հայաստանի տնտեսական աճը կազմել է 9,8 տոկոս: Այն ընդհանուր մոտեցել է մի քանի տարի շարունակ արձանագրվող երկնիշ ցուցանիշին, որը միանիշ էր դարձել այս տարվա փետրվարից, ինչը պայմանավորված էր հեռընտրական շրջանում հրահրված անկարգություններով: Համախառն ներքին արդյունքը կազմել է 982 մլրդ դրամ:

Շարունակվում է ամենաբարձր աճն արձանագրել շինարարությունը՝ 14,9 տոկոս: Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը փոքր անկում է արձանագրել՝ 0,4 տոկոսով: Առանց էներգետիկայի արդյունաբերության անկումն ավելին է՝ 1,4 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրությունն աճել է 2,3 տոկոսով: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը հունվար-մայիսին աճել է 1,9 տոկոսով: Ծառայությունների ոլորտում արձանագրված աճի ցուցանիշը երկրորդն է շինարարությունից հետո, կազմելով 10,6 տոկոս: Մանրածախ առեւտրաշրջանառության աճը կազմել է 4,3 տոկոս:

Արտաքին առեւտրաշրջանառությունն ավելացել է 29,6 տոկոսով եւ կազմել 1 մլրդ 982 մլն դոլար: Արտահանման ծավալներն ավելացել են ընդամենը 0,2 տոկոսով եւ կազմել մոտ 422 մլն դոլար: Ներմուծումը կազմել է 1 մլրդ 560 մլն դոլար, աճելով 40,8 տոկոսով: Բացասական հաշվեկշիռը գերազանցել է 1 մլրդ դոլարը, կազմելով 1 մլրդ 138 մլն դոլար: Այստեղ հատկապես մտահոգիչ պետք է համարել արտահանման ծավալների աճի գրեթե բացակայությունը:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում մարտին կազմել է մոտ 87 հազար դրամ, մասնավոր հատվածում կազմել է 109 հազար դրամ, բյուջետայինում՝ մոտ 61 հազար դրամ: Աշխատավարձերի միջին աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է 22,9 տոկոս:

Ե. Ս.

ԼՂՀ

Փոփոխությունների նպատակը համակարգի օպտիմալացումն է

ԼՂՀ կառավարության հերթական նիստում հավանության է արժանացել կառուցվածքային փոփոխության այն օրինագիծը, որով կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների շարքում կձեւավորվեն երեք նոր՝ արտադրական ենթակառուցվածքների, գրոսաշրջության եւ կոմիտեալ շինարարության վարչությունները:

Զուգահեռաբար՝ կառավարությանն առընթեր մարմինների ցանկից հանվել են արխիվային գործի, ինչպես նաեւ՝ միգրացիայի, փախստականների եւ վերաբնակեցման վարչությունները: ՄՓՎԿ-ն տեղափոխվելու է սոցապնախարարության կառուցվածք, իսկ արխիվային պետական վարչությունը կվերածեւավորվի ՊՈԱԿ-ի ու կգործի արդարադատության նախարարության կազմում: Նախատեսվում է պետական կենսաթոշակային հիմնադրամը եւս տեղափոխել սոցապնախարարության համակարգ: Բացի դրանից, «Ցրային տնտեսություն» պետական կոմիտեն վերակազմակերպվելու է վարչության: Այս մասին տեղեկանում ենք կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության հաղորդագրությունից:

Նշված փոփոխությունները թելադրված են ԼՂՀ նախագահի՝ պետական կառավարման համակարգի օպտիմալացման կարգադրության պահանջներով, նիստում ասել է վարչապետ Արա Հարությունյանը: Վարչապետի պարզաբանմամբ, մասնավորապես, կոմիտեալ շինարարության առանձին վարչության ստեղծումը նոպատակ ունի եռաթեւ բարելավելու գործընթացները հաղթահաղթության ոլորտում եւ ուժեղացնելու շինարարական աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը:

Նա նաեւ կարեւորել է զբոսաշրջության վարչության ստեղծումը, նշելով, որ այդ բնագավառը պետության համար այլեւս գերակա ուղղություն է եւ անհրաժեշտ է համակարգված կառավարում իրականացնել ոլորտի առաջ զարգացման համար:

Արա Հարությունյանը կառավարության անդամներին տեղեկացրել է, որ մինչեւ տարեվերջ գործադիրում էլի կլինեն կառուցվածքային ու կադրային փոփոխություններ:

Նույն նիստում կառավարությունն ընդունել է որոշումների մի փաթեթ, որով հաստատվել է տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության նոր կարգ, համաձայն որի՝ այսուհետեւ ավտոտրանսպորտային միջոցների տեխզննությունն իրականացնելու է ոչ թե ճանապարհային ոստիկանությունը, այլ՝ մրցույթով հաղթած տնտեսվարող սուբյեկտը:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ստեփանակերտ

Թերեւս չդառնանք ձայնազուրկ ԵԽԽՎ-ում

1-ին էջից

Բանաձեւում դատապարտվում են մարդկանց ձերբակալություններն ու կալանքները առանց հարմարեմ դատական վերահսկողության, որ կարող են հաղթականաբես մոտիվացված ձերբակալությունների տրավորություն թողնել: 1609 բանաձեւն ընդգծում է Հայաստանի հասարակության հաղթական ուժերի միջեւ կառուցողական երկխոսության նախաձեռնության անհրաժեշտությունը, երկխոսություն սկսելու մի շարք նախապայմանների ներկայացմամբ: Մասնավորապես, մարտի 1-ի իրադարձությունների եւ դրանց բերած հանգամանքների, այդ թվում՝ ոստիկանության կողմից ուժի անհամարժեք կիրառման անկախ, թափանցիկ եւ վստահելի հետաքննությունը: Ընդ որում, միջազգային հանրությունն, ըստ բանաձեւի նախագծի, պատրաստ է դիտարկելու եւ աջակցելու այդ հետաքննությանը, ինչի անհրաժեշտությամբ վերջերս էլ ափսոսանք հայտնեցին Հայաստան այցելած ԵԽԽՎ ներկայացուցիչները, ընդգծելով, որ անգամ առավել հարմար ու ճիշտ կլիներ հետաքննությամբ զբաղվող հանձնաժողովը ձեւավորել բացառապես միջազգային փորձագետներից:

Հաջորդ նախապայմանը վերաբերում է այդ իրադարձություններին առնչվող մարդկանց անմիջապես ազատ արձակելուն, այդ մասին պնդում կա, թե ձերբակալությունը քաղաքական մոտիվացիա ունի կամ էլ արհեստական է: Եվս մեկ նախապայման ընդգծում է հանրահավաքների առնչությամբ օրենսդրական վերջին փոփոխություններն անմիջապես չեղյալ հայտարարելուն, որը ցայսօր մնացել է չիրագործված, բայց ընթացքի մեջ:

«Քանի դեռ այս պայմանները չեն բավարարվել եւ բարեփոխումների մասին բաց երկխոսություն չի սկսվել Հայաստանի քաղաքական ուժերի միջեւ, Հայաստանի հանդեպ վստահությունը որոշես եվրոպայի խորհրդի անդամի կասկածի տակ է: Ուստի հանձնաժողովի կարծիքով, վեհաժողովը կարող է ամառային նստաշրջանում քննարկել վեհաժողովում Հայաստանի պատվիրակության վերակալության իրավունքի ժամանակավոր դադարեցման հարց, եթե մինչ այդ նշված պահանջների առնչությամբ չլինի նշանակալի առաջընթաց Հայաստանում», նշվում էր բանաձեւում:

ԵԽԽՎ-ն բանաձեւում հորդորում էր Հայաստանի իշխանություններին հետեւյալ բարեփոխումների իրականացման հարցում: Մասնավորապես, քաղաքական համակարգը պետք է բարեփոխվի ընդդիմությանը պատշաճ տեղ եւ իրավունքներ տրամադրելու նկատառումով, հիմնավոր բարեփոխման կարիք ունի նաեւ ընտրական գործընթացը: Պահանջվում է երաշխավորել հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ու հեռուստատեսության եւ ռադիոյի հանրային խորհրդի անկախությունը, ընդ որում, այս երկու կառույցների վերանայումը՝ իսկապես հայ հասարակությունը ներկայացնելու տեսանկյունից: «Վեհաժողովը վերահաստատում է, որ այս ոլորտում օրենսդրական բարեփոխումներին զուգահեռ իշխանությունները պետք է քայլեր ձեռնարկեն հանրային հեռուստատեսության ազատությունն ու բազմակարծությունը ապահովելու ուղղությամբ: Բացի այդ, պետք է դադարեցվեն էլեկտրոնային եւ տպագիր ընդդիմադիր լրատվամիջոցների նկատմամբ հարկային մարմինների ճնշումները», նշվում է բանաձեւում:

ԵԽԽՎ բանաձեւի պահանջով ընդդիմադիր բոլոր ուժերը պետք է ընդունեին նախագահական ընտրությունների առնչությամբ Սահմանադրական դատարանի որոշումը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան բողոքարկելու հնարավորությամբ: Իսկ երկխոսության կոչերն էլ միայն իշխանության ներկայացուցիչների հանդեպ պարտադրիչ չեն, այլեւ համագործակցության գնալու երկուսթեք համաձայնություն:

Թե ընդհանրական ֆոնին, թերեւս բավականին կարճ ժամանակահատվածում ինչ է արվել Հայաստանում, եւ ԵԽԽՎ բանաձեւի որ պահանջներն ու «նշանակալիության» ինչ չափով են բավարարվել, կդատեն ու կորոշեն ԵԽԽՎ նստաշրջանում, իսկ մեր հասարակության համար ակնհայտ է, որ անելիքները ավելի շատ են, քան կատարվածը: եվ դա բնավ էլ ոչ միայն ԵԽԽՎ բանաձեւին է վերաբերում, այլեւ ընդհանուր իրավիճակին, որում հայտնվածներս իրականում չգիտենք ո՛չ վաղվա օրվա, ո՛չ իսկ ընթացիկ օրվա ինչպիսին լինելը, քանի որ անորոշությունն է դեռ հիմնական բնութագրականը մի շարք հարցերի հետագայի առումով:

«Մեր երկրի ամենամեծ արժեքը տաղանդավոր մարդն է»

Ասում է վարչապետ Տիգրան Սարգսյանը

Այն պահին, երբ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում երկրի վարչապետն ուշի-ուշով լսում էր իրենց գիտական եւ կենսական պայմաններից տհաճացող գիտնականներին, էստոնիայի ամենախուլ գյուղերից մեկի ընտանիքի հայրը միացրեց իր տան համակարգիչը, բացեց գյուղական դպրոցի ինտերնետային էջը՝ տեղեկանալու իր զավակի ստացած շաբաթվա բոլոր գնահատականների եւ այլ բաների մասին: Վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ հինգշաբթի օրը հանդիպման եկած ԳԱԱ փիլիսոփայության եւ սոցիոլոգիայի ինստիտուտի տնօրեն **Գեւորգ Պողոսյանը** նախորդ օրն էր վերադարձել էստոնիայից, որտեղ կայանվեց առաջ է շարժվում նույն ոիթմով, ինչով ապրում է առաջադեմ աշխարհը: Մենք ապրում ենք հայաստանյան նույն եւ ալարկոտ ոիթմով, համակարգիչ չունի ոչ միայն մեր հեռավոր գյուղի բնակիչը, այլեւ հայերի գիտնականը, ինտերնետից զրկված է ոչ միայն գյուղը, այլեւ գիտական օջախը: Էստոնիայի բուհում դասավանդող պրոֆեսորը ստանում է 2 հազար եվրո աշխատավարձ ու դժգոհում, իսկ մեր պրոֆեսորներն այլեւս բողոքելու տեղ չունեն, որովհետեւ նրանց հանձնաս, կարելի է ասել, ոչինչ են ստանում:

Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ **Ռաֆիկ Մարտիրոսյանն** այս անգամ իր կամ գրքեր չխոսեց աշխատավարձից, որպեսզի համար այն մայնությունը, թե ակադեմիայում երկրի ղեկավարների հետ հանդիպելիս միայն այդ թեման է շոշափվում: «Այսօր մեզ համար շատ ավելի հրապարակ են գիտական եւ տեխնիկական պայմանները, որոնցով կարողանանք գիտական լավ արդյունքներ տալ», ասաց ակադեմիայի նախագահը: Նրա ելույթից հետո իրենց հուզող հարցերի մասին խոսեցին Գյումրու երկրաֆիզիկայի ինստիտուտի տնօրեն **Սեւադա Հովհաննիսյանը**, ԳԱԱ էկոնոմետրային հետազոտությունների ինստիտուտի տնօրեն **Արմեն Սաղաթելյանը**, ԳԱԱ ակադեմիկոս, քարտուղար **Վլադիմիր Բարխուդարյանը**, ԳԱԱ արեւելագիտության ինստիտուտի տնօրեն **Ռուբեն Սաֆրաստյանը**, փիլիսոփայության եւ սոցիոլոգիայի ինստիտուտի տնօրեն **Գեւորգ Պողոսյանը**, ԵՊՀ ռեկտոր **Արամ Սիմոնյանը**, թոքակից անդամ **Բաբկեն Հարությունյանը**, ակադեմիկոս **Սերգեյ Համբարձումյանը** եւ ուրիշներ: Հայագիտությունից մինչեւ ինֆորմատիկայի ոլորտ հասնող հարցադրումները պատասխաններ էին ստերում, որ անհնար էր նույն պահին սանամ, հենց այն պատճառով, որ ապրում ենք ուրիշ ռիթմով ու շատ խորն ենք խրվել հայաստանյան ճահճում:

Վարչապետ **Տիգրան Սարգսյանը** փորձում է հասարակությանը դուրս բերել անտարբերության թմբիրից, ասելով, թե կառավարությունը պատրաստ է արժեւորել տաղանդավոր մարդուն, գիտնականին: «Արդեն հայտարարել ենք, որ մեր երկրի ամենակարեւոր արժեքը տաղանդավոր մարդն է: Գիտական ամեն մի ոլորտում, որ կունենանք նոր գաղափարներ, հաջողություններ, ես անձամբ եմ խրոգելու, որովհետեւ դա է ճանապարհը հասարակությանը ցույց տալու, որ գիտությամբ կարող ենք զբաղվել մեր երկրի զարգացումը: Այսինքն՝ առաջին հերթին պետք է փոխել հասարակության վերաբերմունքը գիտության հանդեպ: Մինչեւ դա չանենք, ոչինչ չի փոխվի, իսկ այդ հիվանդությունը մեր մեջ է, որովհետեւ մենք արժեւորում ենք ոչ թե գիտնականին, մասնագետին, այլ այն մարդուն, որը կարճ ժամանակում հասցրել է վաստակել մեծ գումարներ, չունենալով գիտելիքներ, ինչը, բնականաբար, հոգեբանական բարդույթ է ստեղծել հասարակության մեջ: Մանավանդ՝ երիտասարդների: Երիտասարդները չեն կարեւորում գիտելիքը, որովհետեւ չեն գիտակցում, որ գիտելիքի շնորհիվ հրենց առջեւ դռներ են բացվելու: Տգեղ մարդը միայն կարող է թալանել, փախցնել: Սեփական գյուղքերքերների արտադրության միջոցների, անթափոն կենսատեխնոլոգիաների արտադրությունների զարգացմանը, արտադրվածառոր կարերի ամրագրմանը, տուրիզմի հետ կապված՝ հուշանվերների արտադրատեսակների ստեղծմանը:

Հայտնի է, որ ազգային ոլորտն ունենալու է արգելոցային, ռեկրեացիոն (հանգստի եւ տուրիզմի), մասնագիտական եւ աշակերտության կամ բուֆերային գոտիներ: Խիստ կարեւորվում է այս գոտիաբաժանումը մասնագիտորեն ճիշտ ու ամբողջական ուսումնասիրություններով հիմնավորված կատարելու խնդիրը, որի հարցում եւ Սեւանի, եւ Դիլիջանի ազգային պարկերի պարագայում լուրջ դժգոհություններ կան: Գեւորգ Պետրոսյանի կարծիքով՝ ամենակարեւորն այն է, թե որքան կլինի արգելոցային գոտին (իր գնահատմամբ՝ պետք է լինի ողջ տարածքի 25-30 %-ը): Որպեսզի կատարվող ողջ աշխատանքը հետո ջուրը չլցվի, այս խնդիրը նախապես երկար քննի հետազոտվի ու կշռադատվի, հաշվի առնելով հատկապես կենդանիների բնակության եւ միգրացիայի բոլոր հնարավոր ուղիները, թռչունների բնադրման վայրերը, բուսատեսակների տարածվածությունը եւ այլ հանգամանքներ: Հարցադրումների մյուս խումբը վերաբերում է մասնագիտական էկոմոնիտորինգի եւ հսկողության արդյունավետ համակարգի ստեղծմանը: Այս նպատակով առաջարկվում է ավելացնել դիտակետերը՝ կատարելով բնամիջավայրի բոլոր բաղադրիչների համակարգային մոնիտորինգ, կանխել տարածաշրջանի կենսաբազմազանությանը սպառնացող վտանգների առաջացումն ու զարգացումը, ստեղծել հսկողության արդյունավետ համակարգ եւ խստացնել բնամիջավայրային տեսչական գործունեությունը տարածաշրջանում՝ դրա մեջ ներգրավելով նաեւ ոստիկանության գյուղապետարանների իրավական հաշվարկ՝ չվստահելով պատասխանատու հաշվետվությունների, հետեւողական աշխատանք կատարել հողամշակման նոր տեխնոլոգիաների ներդրման, կենդանիների պետական պատվաստման մակարդակի բարձրացման հաշվին նրանց գլխաքանակի աստիճանական կրճատման, առանձնացված կայուն կառավարման ուղղությամբ, վերահսկել այլ երկրներից ու մարզերից այս տարածաշրջան բերվող անասնագլխաքանակը եւ կանխել առանձնացված գերառաջացումը, կատարել ոռոգման ցանցերի նորոգում եւ ոռոգման հասակ ոլանավորում, ինչը թույլ կտա, անկախ այդ տարվա ջրառատությունից, կանխել Արփի լճի ջրամակարդակի կտրուկ տատանումները:

Ռեկրեացիոն գոտիների ստեղծման եւ տուրիզմի զարգացման առումով մասնավորապես առաջարկվում է ենթակառուցվածքներ ստեղծել ոչ թե անմիջաբար լճի մոտ, այլ հարակից գյուղերում, որպեսզի դրանք զարգանան: Տարածաշրջանի ողջ կենսաբազմազանությունը կարելի է ցուցադրել՝ ստեղծելով բնության թանգարան: Առաջարկվում է զարգացնել էկոտուրիզմը եւ գյուղական տուրիզմը (ագրոտուրիզմ), արկածային տուրիզմը եւ հատկապես դրա ձմեռային տարատեսակները (դահուկային, սահնակային եւն), ալպինային տուրիզմը եւ այլն: Եվ, վերջապես, բնամիջավայրային գոտիները կարեւոր են համարում տարածաշրջանի էներգետիկ ապահովվածության խնդրի լուծումը ի հաշիվ էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների ներդրման: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է հողմաէլեկտրակայանների ստեղծմանը, արեգակի էներգիայի օգտագործմանը, կենսագազի արտադրությանը եւ այլն:

ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Գյումրի

Ինչպիսին պետք է լինի «Արփի լիճ» ազգային պարկը

Մտահոգվում, առաջարկում են շիրակցի բնապահպանները

«Ազգի» հունիսի 7-ի համարում ծավալուն անդրադարձել ենք Շիրակի մարզի հյուսիսում «Արփի լիճ» ազգային պարկի ստեղծման նախապատրաստական աշխատանքներին, որոնց մասին խոսվել էր մարզի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ օրերս Գյումրիում կազմակերպված հանդիպման ժամանակ: Արփի լճի երջանում եւ Վխտոյան գետի վերին հոսանքներում գտնվող բնության այդ եզակի տարածքի պահպանումից բացի, որը հայտնի է նաեւ բուսական ու կենդանական աշխարհի բազմաթիվ հազվադեպ եւ անհետացող տեսակներով, ստեղծվելիք ազգային պարկը կարող է դառնալ հանգստի ու զբոսաշրջության մի նոր հետաքրքրական գոտի, դրանով նպաստելով նաեւ Թուրքիայի ու Վրաստանի սահմանի երկայնքով ձգվող ռազմավարական առումով կարեւոր տարածաշրջանի սոցտնտեսական զարգացմանը:

Հիշյալ հանդիպումը ցույց տվեց Գյումրու առավել ակտիվ ՀԿ-ների լուրջ գործնական շահագրգռությունը, նաեւ որոշ մտահոգությունները նման մի ձեռնարկի կազմակերպման իրականացման եւ անարատ այդ բնության ապագայի հարցում: Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ **Լեւոն Բարսեղյանի**, Սախարովի անվան հայկական իրավապաշտպան կենտրոնի Շիրակի մասնաճյուղի ղեկավար **Սեյրան Մարտիրոսյանի** գնահատմամբ՝ Հայաստանում այս եւ նման նպատակները լրջագույն ոիսկերի են ենթակա: Խոսքն առաջին հերթին վերաբերում է կառավարական օղակների թույլտվությամբ այդ տարածքների նկատմամբ մայրաքաղաքային չինովնիկների ու փողատերերի հնարավոր ոտնձգություններին, որոնց դարը փորձը կա Սեւանում, Ծաղկաձորում, այլուր, ազգային պարկի գոտում ընդգրկվող այս կամ այն համայնքին չվնասելուն, նաեւ համայնքին ծրագրի շահագրգիռ մասնակիցը դարձնելուն ու նրա դիրքորոշումները ամենից կարեւորը համարելուն, ենթակառուցվածքների զարգացման, մասնավորապես ճանապարհների հետ կապված՝ բնության հաշվին նոր ճանապարհներ չպվեալացնելուն եւ այլն: Տարբեր ՀԿ-ներ նաեւ մշակութային, սոցիալական, կրթական, առողջապահական եւ այլ ուղղվածության բավական հետաքրքրական առաջարկություններ են ներկայացնում:

Գյումրիում վերջերս ստեղծված բնապահպանական կոալիցիայի անունից այս հանդիպման ժամանակ ազգային պարկի ստեղծմանն առնչվող լուրջ մշակված առաջարկությունների մի ամբողջական փաթեթ ներկայացրեց «Բիոսոֆիա» ՀԿ-ի եւ Գյումրու բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի ղեկավար **Գեւորգ Պետրոսյանը**: Մարզի բնապահպանները նախ եւ առաջ կարեւորում են այս ծրագրի իրականացման գործընթացի մասին տեղեկատվության հասանելիության եւ հասարակական մասնակցության ապահովումը: Այս նպատակով արված մի շարք առաջարկությունների հիմնական իմաստը բնակչությանը ծրագրի սկզբնական փուլերից ազգային պարկի ստեղծման, ապա եւ կառավարման ու վերահսկման գործընթացին մասնակից դարձնելն է, պարկի ստեղծման ընթացքի եւ ընդհանրապես տարածաշրջանի էկոլոգիական վիճակի վերաբերյալ հանրությունների իրազեկության մակարդակի բարձրացումը: Հանրությունների սոցիալ-տնտեսական զարգացումը եւ մարդկանց կենսամակարդակի բարձրացումն ապահովելու նպատակով արված առաջարկությունները վերաբերում են ինչպես ենթակառուցվածքների, այնպես էլ գյուղքերքերների արտադրության միջոցների տնտեսությունների, անթափոն կենսատեխնոլոգիաների արտադրությունների զարգացմանը, արտադրվածառոր կարերի ամրագրմանը, տուրիզմի հետ կապված՝ հուշանվերների արտադրատեսակների ստեղծմանը:

Հայտնի է, որ ազգային պարկն ունենալու է արգելոցային, ռեկրեացիոն (հանգստի եւ տուրիզմի), մասնագիտական եւ աշակերտության կամ բուֆերային գոտիներ: Խիստ կարեւորվում է այս գոտիաբաժանումը մասնագիտորեն ճիշտ ու ամբողջական ուսումնասիրություններով հիմնավորված կատարելու խնդիրը, որի հարցում եւ Սեւանի, եւ Դիլիջանի ազգային պարկերի պարագայում լուրջ դժգոհություններ կան: Գեւորգ Պետրոսյանի կարծիքով՝ ամենակարեւորն այն է, թե որքան կլինի արգելոցային գոտին (իր գնահատմամբ՝ պետք է լինի ողջ տարածքի 25-30 %-ը): Որպեսզի կատարվող ողջ աշխատանքը հետո ջուրը չլցվի, այս խնդիրը նախապես երկար քննի հետազոտվի ու կշռադատվի, հաշվի առնելով հատկապես կենդանիների բնակության եւ միգրացիայի բոլոր հնարավոր ուղիները, թռչունների բնադրման վայրերը, բուսատեսակների տարածվածությունը եւ այլ հանգամանքներ: Հարցադրումների մյուս խումբը վերաբերում է մասնագիտական էկոմոնիտորինգի եւ հսկողության արդյունավետ համակարգի ստեղծմանը: Այս նպատակով առաջարկվում է ավելացնել դիտակետերը՝ կատարելով բնամիջավայրի բոլոր բաղադրիչների համակարգային մոնիտորինգ, կանխել տարածաշրջանի կենսաբազմազանությանը սպառնացող վտանգների առաջացումն ու զարգացումը, ստեղծել հսկողության արդյունավետ համակարգ եւ խստացնել բնամիջավայրային տեսչական գործունեությունը տարածաշրջանում՝ դրա մեջ ներգրավելով նաեւ ոստիկանության գյուղապետարանների իրավական հաշվարկ՝ չվստահելով պատասխանատու հաշվետվությունների, հետեւողական աշխատանք կատարել հողամշակման նոր տեխնոլոգիաների ներդրման, կենդանիների պետական պատվաստման մակարդակի բարձրացման հաշվին նրանց գլխաքանակի աստիճանական կրճատման, առանձնացված կայուն կառավարման ուղղությամբ, վերահսկել այլ երկրներից ու մարզերից այս տարածաշրջան բերվող անասնագլխաքանակը եւ կանխել առանձնացված գերառաջացումը, կատարել ոռոգման ցանցերի նորոգում եւ ոռոգման հասակ ոլանավորում, ինչը թույլ կտա, անկախ այդ տարվա ջրառատությունից, կանխել Արփի լճի ջրամակարդակի կտրուկ տատանումները:

Ռեկրեացիոն գոտիների ստեղծման եւ տուրիզմի զարգացման առումով մասնավորապես առաջարկվում է ենթակառուցվածքներ ստեղծել ոչ թե անմիջաբար լճի մոտ, այլ հարակից գյուղերում, որպեսզի դրանք զարգանան: Տարածաշրջանի ողջ կենսաբազմազանությունը կարելի է ցուցադրել՝ ստեղծելով բնության թանգարան: Առաջարկվում է զարգացնել էկոտուրիզմը եւ գյուղական տուրիզմը (ագրոտուրիզմ), արկածային տուրիզմը եւ հատկապես դրա ձմեռային տարատեսակները (դահուկային, սահնակային եւն), ալպինային տուրիզմը եւ այլն: Եվ, վերջապես, բնամիջավայրային գոտիները կարեւոր են համարում տարածաշրջանի էներգետիկ ապահովվածության խնդրի լուծումը ի հաշիվ էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների ներդրման: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է հողմաէլեկտրակայանների ստեղծմանը, արեգակի էներգիայի օգտագործմանը, կենսագազի արտադրությանը եւ այլն:

ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Գյումրի

21 ՅՈՒՆԻՍ 2008 ԷՋ Ա

ՀԱՎԵԼՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹ

Դարբերականությունը՝ երկաբաթյա

Թիվ 9(52)

Բանավիճելու մշակույթ

Դժբախտաբար մեր մեջ շատ հյերն են տիրապետում բանավիճելու մշակույթին, ու թերեւս դա է պատճառը, որ մեր մամուլում՝ այլապես խիստ հետաքրքրական ու խիստ թերթային այդ ժանրը հազվադեպ է պատահում, իր տեղը զիջելով միջքերթային զզվոտցներին: Մեր խմբագիրները, սովորաբար, իրավամբ եւ իրավացիորեն զգուշանում են բանավիճային նյութեր տպագրելուց, խուսափելով ավելորդ գլխացավանքից, մանավանդ որ, գրեթե միշտ, եզրահանգումը դառնում է դժվար եւ, ինչ-որ տեղ, բանավեճ ծեռնարկելը դառնում է անիմաստ: Արդյունքում, եթե կարելի է արդյունք համարել դա, մնում է փոխադարձ վիրավորանքը, նեղացածությունը, իսկ երբեմն, ինչպես պատահում է կոմիկական ֆիլմերում, մրցակից բռնցքամարտիկներն իրար թողած հարձակվում են դասավորի՝ այս պարագայում՝ խմբագրի վրա:

«Դու ո՞վ ես- Բա դո՛ւ ով ես»: Ամենալուսջ թեմայով սկսված բանավեճը վերածվում է այսպիսի ամլորակների: Ու հանի որ մեր փոքրիկ երկիր Հայաստանում ամեն մարդ գիտի ամեն մարդու մասին, եւ վաս բաների հիշողությունն էլ հայերս սովորություն ունենք միշտ մտապահելու, իսկ շահերի բախումն էլ տեսապես առկա է, ուրեմն թեմայի մեջ կամ լուսանցքներում՝ բանավիճողները հիշում եւ հիշոցներ են արձակում միմյանց դեմ:

Նման ճակատագիր արժանացավ մեր թերթի մշակութային հավելվածում ամիսներ առաջ սկսված բանավեճը Նարիրի Զարյան-Հրաչյա Քոչար զույգի գործունեության գնահատման հարցի շուրջ: «Գրական թերթում» սկիզբ առած ու հանկարծակի դադրեցված բանավեճը տեղափոխվեց, անշուշտ մեր հասանելիությամբ՝ նկատի ունենալով թեմայի կարեւորությունն ու այժմեականությունը՝ «Ազգ»-ի հավելվածի էջեր եւ արժեքավոր շատ դիտարկումներ հեռզիեսե իրենց տեղը զիջեցին փոխադարձ՝ անձնամիջյան մեղադրանքների եւ միմյանց կենսագրական «թերությունների» առաջ: Բացառությամբ Գրիգոր Սեծեյանի ու գրականագետ Վազգեն Գաբրիելյանի, եւ որոշ չափով նաեւ Հրաչյա Քոչարի դստեր՝ Նվարդ Քոչարի, մյուս բանավիճողները՝ Ազատ Երիցազարյան, Ռուզան Արիսակեսյան, Դավիթ Գասպարյան եւ Դավիթ Գյուզալյան, գրականագիտական իրենց այլապես արժեքավոր դիտարկումները զուգահեռեցին փոխադարձ անբարտանություններով, անգամ անձնական բնույթի վիրավորանքներով: Դա ամենեին մեր ցանկությունը չէր, նմանապես՝ մեր հավատարիմ ընթերցողներից շատերի, որոնք նույնիսկ խնդրեցին վերջակետ դնել այդ անվերջակետ բանավեճին, ինչը անում ենք այժմ, հակառակ որ թե՛ Ռ. Արիսակեսյանից եւ թե՛ Դ. Գասպարյանից ունենք թեմայի վերաբերյալ նոր հոդվածներ, իսկ Ա. Երիցազարյանից մի բաց նամակ՝ ուղղված թերթի խմբագրին:

Սիրելի՝ եմ գնալ այդ հայլին, հանի որ, կրկնում ենք, մեր նոյտակը բոլորովին տարբեր է: Անցյալի, հակապես 30-ական եւ ավելի ուշ թվականների մեր գրողների ու գրականասարակական գործիչների վարմունքը, հաճախ տխուր եւ ոչ մի բանով չարդարացվող գործունեությունը արժանի է լուրջ եւ գիտական ճշգրության, ինչը մենք պատրաստ ենք անել ապագայում, եթե վստահ լինենք, որ հասնելու ենք փաստված եզրահանգումների: Անշուշտ, նման ծանրակշիռ թեմաների շուրջ բանավեճերը երբեմն ոչ մի եզրահանգման էլ չեն հանգում (հիշենք 2-րդ հանրապետական պատերազմի տարիների մասին Փեթենի գործունեության գնահատման շուրջ ֆրանսիացի մտավորականության առաջատար ներկայացուցիչների բանավեճերը): Սակայն հակադիր թեզերի, առարկությունների ու գիտական հակադարձությունների արձանագրումն անգամ օգտակար է ըստ ամենայնի: Հետագայում կփորձենք հենց այդպես էլ վարվել, երբ վստահ լինենք, որ բանավիճողները, թեկուզ ամենակտրուկ ձեւով իրենց թեզերն արտացոլելիս զերծ կմնան միմյանց վիրավորելու մղումից:

Մինչ այդ՝ բանավեճը փակված է:

Լիսիս:

< ԱՌԵՏՐԵՅԻՆ

Ս ինքազգային երկու կոնֆերանսներ, որոնց աշխատանքին ինձ վիճակվեց մասնակցել, հատատեցին այն ակնհայտ փաստը, որ արվեստաբանությունն այժմ դժվարին ժամանակներ է ապրում: Այսօր օրակարգում որոնս անհետաձգելի խնդիրներ կարելի է դնել այն հարցերը, որոնք կապված են նախ արվեստագիտության սոցիալական պահանջվածության եւ ապա՝ արվեստի ինչպես գործընթացների, այնպես էլ բուն արտադրանքի ուսումնասիրության մեթոդների վերանայման հետ: Որվագծվում է նաեւ մեկ ուրիշ ախտանիշ՝ արվեստագիտության մեջ անձնական, հեղինակային սկզբունքի թուլացումը, իսկ երբեմն էլ՝ գեղարվեստական երեւույթն անտարբերությամբ նկարագրող հետազոտողի անհատական դիտորդման հաճախադեպությունը: Եվ հասարակությունը չի դառնում արվեստագիտական նոր ախտանիշների եւ հրատարակությունների հայտնվելու հարցում առանձնապես շահագրգռված, հանգի հեղինակները կտրված են այդ հասարակության հոգեւոր պահանջմունքներից ու բացասական խնդիրներից եւ որոնս անհատներ իրենց մեջ չեն կրում դրական, ստեղծարար սկզբունք:

Իր հերթին պրակտիկայից կտրված եւ գնահատման գենգից ու գեղագիտական ճիշտ կողմնորոշումից զրկված «գիտության համար գիտությունը» հաճախ վերածվում է հայտնի գաղափարների ու դրույթների մեխանիկական կրկնության, որը ի վերջո հանգեցնում է գիտելիքի սլայդ հումանիտար բնագավառի իմաստնասիրությանը: Այդ դեմքում կարելի՞ է արդյոք հասարակությանը մեղադրել անտարբեր լինելու կամ արվեստագիտությունը չճանաչելու մեջ, եթե իրենք՝ գիտելիքակրողները, չեն պատրաստվում պրոֆեսիոնալիզմի եւ բանիմացության պատշաճ մակարդակ, եթե գիտականակերտ ամբողջ գործունեությունը հաճախ հոդարկման հարմար եղանակ է դառնում շահեկան սոցիալական դիրքի հասնելու համար:

Հումանիտար գիտությունների եւ մասնավորապես արվեստագիտության նմանօրինակ ընթացքի համար պակաս կորանարար չի դարձել վերջին տասնամյակներում խաղախիթ հասարակությունը համակած տեղեկատվական բուռն վերելքը: Կորանարարությունն այն է, որ արվեստաբանի մասնագիտության համար արժանական՝ արվեստի երեւույթների համակարգման ու ընդհանրացման մեթոդաբանության հեղինակ լինելը եւ ըստ այդմ զարգացման պատմական ինչ-որ տրամաբանություն գտնելը հաճախ նենգափոխվել են տեղեկատվության անհամակարգ կուտակմամբ: Արդի տեղեկատվական տարածքի տեխնոլոգիական մասչելիությունը բացասաբար է անդրադարձել արվեստաբանության, որոնս մարդու ստեղծարար գործունեությունն ուսումնասիրող գիտության, ինչպես նաեւ գեղագիտության եւ արվեստի տեսության միջոցով անմիջականորեն ստեղծարար գործունեության վրա ազդող գիտության գործառական դերի վրա:

Բացառված չէ, որ ինքնրնեցի համակարգի տեղեկատվության ներկայիս «աղբանոցը» (արվեստագիտության դոկտոր Ա. Ս. Սոկոլովի արտահայտությունն է), որը մեծ գոհունակությամբ փոորում են նաեւ Հայաստանի երիտասարդ «գիտնականները», մեկ-երկու տասնամյակ հետո վերջնականապես անհետք դառնա հումանիտար գիտության համար, թեեւ այժմ էլ ակնհայտ է դրա բացասական դերը գիտելիքների կատարելագործման մեջ: Ըստ էության, արդեն այսօր մարդկության պատմությունն ու մշակույթը հազարամյակների քանդաբերտի միջով ճանապարհ են հարթում միայն դեմի ափսոյտ վերելական մտի տեր հետազոտողներ: Եվ դա պատահական չէ: Չէ՞ որ, արվեստի ձեռակերտ երեւույթի նման, արվեստագիտությունը եւս իր էությամբ ձեռակերտ է, գիտականի միտմ ու խոնդ, ինչպես եւ բուն արվեստը, ծնվում են ոգու նույն հնոցում: Նման գիտությունը միշտ պահանջարկ է ունեցել, անհրաժեշտ է նաեւ հիմա:

Այդ բարդ գործընթացում ո՞րն է գիտաժողովների, սիմպոզիումների, «կլոր սեղանի» քննարկումների դերը, դրանք խթանո՞ւմ են արդյոք հումանիտար գիտության զարգացումը, ո՞րն է դրանց խնդիրը եւ գործնական արժեքը, ոմ՞տ են արդյոք հասարակությանը, այսինքն հասարակությունը կարիք զգո՞ւմ է արդյոք ինչ-որ վերացական ինտելեկտուալ գործունեության, թե՞ նրան պետք է մշակույթի մասնագետի կոնկրետ-պրակտիկ գործունեություն: Կարծում ենք, հասարակությանն ավելի շատ մտահոգում է երկրորդը. կոմպոզիտորի երաժշտության համերգը, կոնկրետ նկարչի գործերի ցուցահանդեսը ավելի պահանջված են, քան նրանց վերաբերող վերլուծական հոդվածը: Լավագույն դեպքում տպագիր հոդվածը գտնում է 100-200 ընթերցող:

Այսպիսով, հոդվածի մեջ մտավոր-ստեղծագործական զգալի ուժեր եւ շատ ախտանշեր նեղդրած հեղինակը հրապարակման փաստով բարոյական բավարարություն (նյութական հաստատումն այժմ բացակա է ոչ միայն Հայաստանում, այլեւ ածենուրեմ) պատճառում է փաստորեն ընթերցողների նեղ շրջանակին: Նրա գիտելիքներն ու գաղափարները հետաքրքրում են միայն պրոֆեսիոնալներին, եւ եթե հաշվի առնենք ծայրային մասնագիտացումների եւ արվեստաբանական միջծայրային հետազոտությունների առի բազմազանությունը, ապա ընթերցողների թիվը կիսով չափ կկրճատվի:

Ինչ վերաբերում է գիտաժողովների ունկընդիրների թվին, դրանց սովորաբար մասնակցում է երկու-երեք տասնյակ մարդ: Որոնս կանոն, դրանք հենց կոնֆերանսի մասնակիցներն են: Կոնֆերանսի նյութերի հրապարակումը փոքր-ինչ ընդլայնում է հիմնահարցի քննարկման մասնակիցների թիվը, բայց այդ դեմքում եւս գիտության «արտադրությունը» սահմանափակված է դրա հասարակական ազդեցությամբ եւ գործնական արդյունավետությամբ: Պատճառներն են ներկայիս փոքր տրամանակները, ինչպես նաեւ հեղինակի պրոֆեսիոնալիզմի կամ անհատականության ոչ միշտ գրահագուցիչ մակարդակը:

Այդման տխուր խորհրդածություններից հետո կարող է թվալ, թե գիտական կոնֆերանսը տուրք է անցած դարաշրջանին, քանի որ ներկայումս այժմեական է ինտերակտիվ ձեւումը: Բայց իրավիճակի սարսռելիությունը հենց այն է, որ մենաքանելով պահանջները եւ կոնֆերանսի հանրային կարեւորությունը, մեզ մասամբ կկարողանանք հարթահարել արվեստագիտության ընդհանուր ճգնաժամը: Բացի դրանից, այժմ խիստ անհրաժեշտ է բանավեճի, կարծիքների կենդանի փոխանակման, վիճելի հարցերի անկեղծ քննարկման մթնոլորտը, ըստ որում՝ հենց մշակույթի գործիչների, որակյալ մասնագետների մասնակցությամբ: Վերհիշենք նկարիչների եւ տեսաբանների զանազան «եղբայրությունների» դերը 20-րդ դարի առաջին տասնամյակներում: Դրանցում ձեւավորվում էին նոր գաղափարներ, որոնք ազդեցին արվեստի եւ գրականության բոլոր ոլորտների առաջընթացի եւ միասնության վրա: Հենց հարյուր տարի առաջ արվեստագիտության մեջ իր խորհրդանշական իմաստը ստացավ այսպես կոչված նոր արվեստի փիլիսոփայությունը:

Եվ այսպես, կուզենայի համառոտակի պատմել այս տարվա կոնֆերանսների մասին, որոնցից մեկը տեղի ունեցավ **Մոսկվայի** պետական կոնսերվատորիայում, մյուսը՝ Երեւանի պետական կոնսերվատորիայի **Գյումրիի** մասնաճյուղում:

Առի կրթության ու դաստիարակության հիմնահարցերին նվիրված մոսկովյան կոնֆերանսը պայմանավորված էր միջնակարգ եւ բարձրագույն կրթության օղակներում տիրող արժասական բարեփոխումներով: Այդ կոնֆերանսի մասնակիցները գլխավորապես Ռուսաստանի կոնսերվատորիաների, Մոսկվայի եւ Բելառուսի մանկավարժական համալսարանների, Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի, Արվեստների հետազոտության ակադեմիայի մասնավարժներն էին: Քննարկված հարցերը կարելի է բաժանել երեք խմբի: Առաջինը անցյալի եւ ներկայի փորձի համակարգված նկարագրությունն է: Այստեղ նշենք Ն. Միրոնովայի «Երաժշտական կրթության պատմական հայեցակարգերը եւ դրա ուղղությունները» զեկուցումը: Թեմաների երկրորդ խումբը նվիրված էր կրթության նորառական մոդելներին, երաժշտական բուհում նոր առարկաների ներդրմանը: Օրինակներ կարող են բերայել Ա. Խարուտոյի «Երաժշտական կրթության մեջ հնչյունի վերլուծման համակարգչային տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունների մասին» եւ ՄՊԿ երիտասարդ դասախոս Ա. Ջեռնիսովի «Մեդիաերաժշտությունը որպես ուսումնական առարկա» ելույթները: Վերջինս ճնության է առնում երաժշտության գործառույթները հեռուստատեսության, ռադիոյի, կինոյի, թատրոնի ոլորտներում, զանազան համադրական ժանրերում եւ առօրյա կյանքում: Ռուսաստանի մի շարք ուսումնական հաստատություններում «գրանցում» ստացած նոր առարկային էր նվիրված դրա հեղինակի՝ ՄՊԿ առաջատար դոցենտ Վ. Խոլոդովայի ելույթը («Ռուսաստանում երաժշտական բուհականության տեսության դասավանդման համակարգը»): Վերջապես, թեմաների երրորդ խումբը կապված էր կրթական գործընթացի կատարելագործման մեթոդաբանական առաջարկությունների հետ: Այդ խմբին էր վերաբերում նաեւ իմ «Երաժշտագետների բուհական ուսուցման մեթոդաբանական մի սկզբունքի մասին» զեկուցումը: Այստեղ խոսքը երաժշտական երաստաբների ստեղծագործական իմաստավորման մեջ ունի վերապատիզմի նշանակության մասին էր:

Ռուս-հայկական երաժշտական կապերին նվիրված Գյումրիի կոնֆերանսն ուներ մեծ թվով (31) մասնակիցներ (միշտ է, ծագված էր 41 հաղորդում): Կոնֆերանսի «Մշակույթների երկխոսություն: Ռուսաստան եւ Հայաստան» թեզիսը համագործակցության մեջ ներգրավեց տարբեր մասնագիտությունների տեր երաժիշտների, ինչպես նաեւ պատմաբանների, բանաստեղծների, կինոգետների, երաժշտագետների (մասնակցում էին Ա. Սիմոնիանյանի, Ե. Ջարենցի, Վ. Համբարձումյանի, Ե. Քոչարի տուն-թանգարանների տնօրենները ու աշխատակիցները):

Կոնֆերանսն անցնում էր գործնական լավ ոեժիմով, տամադրելով գիտական զեկուցումներ ու դիտարկումների համեմատության (դա հատկապես զգալի էր կոնֆերանսի երրորդ օրը) եւ ամենի կողմից ընկալելով որպես Գյումրիի մշակութային իրադարձություն:

Այդ պատճառով, չնայած զեկուցումների անհավասար մակարդակին եւ զեկուցումների թեմաների որոշակի խայտաբղետությանը, կոնֆերանսի գլխավոր դասը դարձավ Երեւանի, Գյումրիի, Գավառի տարբեր բուհերի եւ մշակութային կազմակերպությունների միջեւ շփումների հաստատումը: Պարզ դարձավ, որ մեր երկրի արվեստի մասնագետները պետք է ավելի հաճախ հանդիպեն, միմյանց ավելի լավ ճանաչեն, որպեսզի փոխգործողությամբ ընդլայնեն մեր հասարակության հոգեւոր խավի ոլորտը, որպեսզի հաստատեն կառուցողաբար ազդեն գիտության եւ մշակույթի առողջացման վրա, աշխուժացնեն ճարտարապետական հուշարձանների վերականգնման գործընթացը (լվված գլուխգործոցներից մեկը Հաղբատի վանքն է, դեռի ուր կազմակերպվեց էխկուրսիա), վերջապես, որպեսզի հասկանան, որ առանց անցյալի դրական փորձի կիրառման եւ ներկայի ճնաղաբական գիտակցման մենք չենք կարողանա ճիշտ սահմանել ապագայի հեռանկարը:

Հ. Գ. Նյութը պատրաստ էր տպագրության, երբ ստացվեց անսպասելի գույժը՝ անժամանակ եւ հանկարծակի կյանքից հեռացավ գիտաժողովի կազմակերպիչներից անվանի ֆոլկլորագետ, Երեւանի Կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի դոցենտ, ազգանվեր գործիչ եւ հրաշալի մարդ Հասմիկ Աբրնյանը: Խորապես ցավակցում ենք:

Հոդվածի հեղինակը արվեստագիտության դոկտոր է, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր

ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Ունի՞ արդյոք արվեստագիտությունը հասարակական պահանջ

Կոնֆերանս-հայացք ներսից

ՄԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՎ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիլյամ Սարոյանի ծննդյան 100-ամյակի առթիվ

ԶՐԻԳՈՐ ԱՃԵՄՅԱՆ

Նախաբան

Հեշտ չի եղել իմ սերնդի ճանապարհը շատ առումներով: Սակայն մի բանում նրան կարելի էր նախանձել: Նրանց համար սովորական բան էր Արևելյան փողոցում հանդիպել այսօր արդեն լեգենդ ու ֆանտակ դարձած անձնավորությունների, ասենք՝ ծաղիկ բաժանող-վաճառող Կարաբալային, հանդարտաբարո առաջացող, ձեռնափայտն ավելի որպես խորհրդանիշ, քան գործիք բռնած, աջ ու ձախ բարեհաճորեն բարևներ սփռող Ավետիք Իսահակյանին, առյուծաբաշ Մարտիրոս Սարյանին... բոլորին չես թվի...

Նշանավոր մարդկանց հետ իմ հանդիպումները դարձան ոչ պատահական եւ հաստատ գրեթե ուիլյամսոնության ասպիճանի 1954 թվականից: Երկու տասնամյակ ընդմիջումից հետո գրական կյանք վերադարձավ Գուրգեն Մահարին: Դա նոր մի շրջան էր ոչ միայն նրա, այլեւ իմ կյանքում: Չեմ կարող ասել, թե նրա համար ինչպես, բայց իմ համար այդ շրջանն այդպես էլ գիտակցական բնույթ չկրեց: Կարծես միշտ այդպես էլ եղել էր, որ «Ինտուրիստ»-ի բակի ռեստորանում մեզ պետք է մոտենար ողջ Երեւանին հիմիկվա դարերից ծանոթ մատուցողն իր սովորական, ասես երբեւէ չընդհատված հարցով՝

- Ծարավ ես, թե քաղցած, Գուրգեն-խան...

Եվ ասես միշտ էլ լսել էի ես նույն պատասխանը՝

- Ես ծարավ եմ, տղաս քաղցած...

...Եվ այն պահին, երբ սառին սկսվում էր պտտվել աչքերիս առաջ, իսկ ես ադարդյուն ճգնում էի կանգնեցնել այդ խելահեղ պտույտը, հանկարծ զարգվում էր, որ ամենն ինչ սկսվում է նորից, որպիսին... մեզ էր միացել Ավետ Ավետիսյանն իր խոսքաբաշ շախմբով, որին հասկանալը վեր էր արդեն իմ ունակություններից...

Ասես սովորական բան էր, որ Վարդան Աճեմյանի լեփ-լեցված բնակարանում, Այրարատ Աճեմյանի հարանիին, ուշացումով հայտնվեր Հրաչյա Ներսիսյանը, տեղ գրավեր իմ կողքին, եւ ես մտովի արձանագրեի նրա դրոյցող ու բաժակից-բաժակ ավելի վստահ գործող ձեռքերը...

Ասես «Ինտուրիստի» 505 համարում, որտեղ ժամանակավորապես ապրում էր հայրս, ես միշտ էլ տեսել էի Համո Սահյանին եւ Վահագն Դավթյանին, «Սեղանի սոիտակ» ուռուցիկ լիտրանոց շշերով, եւ սովորականի պես նրանք պիտի տնավարի նախասվեին՝

- Դա ինչ լրություն է...

Եվ սպացվեր նրանցից՝ հիմա չեմ հիշում՝ որ մեկի հանգավոր պատասխանը.

- Լրություն չէ, Գուրգեն-խան, նրություն է...

Իսկ Սեր խանգարյանն իր երիտքեղերն ուղղելով պետք է սեղանի մյուս ծայրից կանչեր.

- Արի, արի նստիր սրա կողքը, իմ ուսերենը սրա համար չէ...

(Խոսքը Մկրտիչ Առենի կնոջ՝ ազգությամբ ռուս, գեղեցկուհի Թամարայի մասին էր...):

1

Հեռուստատեսություն գրեթե չկար 60-ականների սկզբի Երեւանում: Լուրերի աղբյուրը թերթերն էին ու Արուքյան փողոցը:

- Վիլյամ Սարոյանը Երեւանում է...

Անծանոթ անուն չէր Սարոյանը: Ժամանակն է երկու խոսքով անդրադառնալու իմ երիտասարդական հափշտակություններին ու մոլորություններին: Մասնագիտությամբ ինժեներ էի՝ տեխնոկրատ-մտավորականներից շատերի նման՝ տարված ժամանակակից արեւմտյան գրականությամբ: Ռուսերեն թարգմանությունների միջոցով՝ նոր անուններ էի հայտնաբերում՝ Միշել Ուիլսոնից ու Վերկորից մինչեւ Կուրտուել ու Հեմինգուեյ: Սարոյանը գրավել էր իր մարդկային ու մարդասիրական, հոգի թափանցող պարզ, գրեթե պարզունակ խոսքով: Լույս էին տեսել արդեն նրա «60 մղոն ժամում» պատմվածքների ժողովածուն, «Վեսլի Ջեքսոնի արկածները», «Մարդկային կատակերգություն» վեպերը: Թվում էր՝ նման գործեր ով ասես կարող է գրել, եթե միայն մարդ կարողանա լինել իր սեփական հարուստարը...

Հայ գրականությունն ինձ համար մնացել էր դպրոցական ծրագրերի սահմաններում: Ոչինչ չէր ավելացել: Դասելով հրապարակի վրա թմբկահարվող գրքերից՝ ավելացնելու բան էլ չկար: Զգում էի միջակության ու գորշության այդ ֆոնի վրա Մահարու գոչի տարբերությունը, նրա շատ ձեռագրերի առաջին ընթերցողն էի, բայց տարբերությունը վերագրում էի ավելի գեղեցիկ հարազատությանը: Եթե ինձ որեւէ մեկն այն տարիներին ասեր, որ ես պետք է զբաղվեմ հայ գրականությամբ եւ ոչ մեկին չասեմ, ես կծիծաղեի նրա երեսին, բայց բանն էլ հենց այն է, որ մարդս միայն ենթադրում է, իսկ ամենակարողը՝ տնօրինում...

Երեւանյան սեպտեմբեր էր: Նոր էր հայրս վերադարձել ամառային հանգստից: Մտածեցի զարմացնել նրան իմ տեղակությամբ, բայց պատասխանը զարմացրեց արդեն ինձ.

- Մոսկվայում մենք մի շաբաթ միասին էինք: Մեզ ճանոթ են 30-ականներից՝ նրա առաջին Երեւան գալուց...

Նայեց, ինչ-որ բան կարդաց աչքերիս մեջ: Փոքրաց ու շարունակեց խորհրդավոր՝

- Վաղը կլինես Գողոնների տանը:

Եվ ավելացրեց որպես ավելի մեծ գայթնիք՝

- Քեզ կծանոթացնեմ նրա հետ...

Որքան երիտասարդ է մարդը, այնքան ինքնավստահ ու թեթեւամիտ: Ես վստահ էի, որ սարոյանական այդ օրն այնպես կդակվի իմ մեջ, որ թոքին որեւէ մանրամասնություն հանձնելը միայն պիտի նսեմացնի կատարածը: Երկար տարիներ հիշում էի այդ օրը ամենափոքր մանրամասնություններով, իսկ հիմա՝ հիշողության մեջ Գողոնների տան էլեկտրականացված, ոտի վրա կանգնած լեփ-լեցուն դահլիճն է, որը կլանում էր սարոյանական հայերենը: Հարթ չէր այդ խոսքը, բայց մարդկային էր, նույն պարզ, գրեթե պարզունակ, հոգի թափանցող խոսքությամբ: Նա բաժանում էր ունեցածն առատաձեռն, առանց ադամանանալու, իսկ դահլիճը հառաչանում էր չմոռացվող եւ մաքրագործող հուշարատառով:

Գողոնների տնից լիցքավորված բազմությունը Վ. Սարոյանի հետ հոսեց դեպի երվանդ Քոչարի արվեստանոցը, իսկ այնտեղից՝ Ալավերդյան փողոց, եթե չեմ սխալվում՝ «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրություն: Հայրս որսաց ինձ ամբոխի մեջ.

- Գնարես՝ միասին տեղ պիտի գնամ...

«Տեղը» բաստեղծ բիբլիոթեքի Առաքելոս Պարոյանի բնակարանն էր, որտեղ եւ ծանոթացա Սարոյանին երկուսով նկարվել: Ես այդ լուսանկարն այդպես էլ չեմ տեսել մինչեւ օրս, բայց հիմա էլ տեսնում եմ կողք-կողքի կանգնած խոսքի եւ բեմի մեր երկու մեծերին: Նման պահերի համար է բացակայությունը՝

- Կանգ առ, ժամանակ:

Իմ բերանն էր բաց, թե՞ ինչ-որ այլ ձեւով էի մատնել ինձ, որ Սարոյանը կանգնեցրեց իր հայացքն վրաս եւ մատով կանչեց.

- Եկուր, տղաս, մեզի հետ քաշվիր...

Կոկնել չպիտի, թռա առաջ՝ մտքումս մեկ անգամ եւս արձանագրելով Սարոյանի վերաբերությունը Ներսիսյանի նկատմամբ...

Անմոռանալի են ամենակարողի ճանապարհները: Լուսանկարչային անտարբեր գործիքը կողք-կողքի ֆիքսեց ինձ՝ հայ երկու մեծերի միջեւ...

«Ժամանակ անցավ, նրանք էլ անցան...»: Երիտասարդական անփութությունիցս երեւի քիչ բան կորցրի: Բայց հիմա ես շատ բան կտայի այդ լուսանկարը թեկուզ միայն նեգատիվի տեսքով ունենալու համար: Անցյալը չես վերադարձնի, եւ եթե մինչեւ հիմա այդ լուսանկարը լույս աշխարհ չի տեսել, արա դժվար թե հաստատ պատահի...

Այդ օրից ինձ հիշատակ մնաց Սարոյանի մակագրությունը «Վեսլի Ջեքսոնի արկածները» գրքի ռուսերեն հրատարակության վրա, որը ես հաստատորեն վերցրել էի հետս. «Իմ ընկեր Գուրգեն Մահարու որդուն, այժմյան իմ ընկեր՝ Գրիգոր Աճեմյանին, լավագույն ցանկություններով: Մշատոնս՝ Վիլյամ Սարոյան: 19 սեպտեմբերի 1960թ., Երեւան»:

2

Վիլյամ Սարոյանը եւ Գուրգեն Մահարին իրավունք ունեին իրենց հարաբերությունները կոչելու ընկերական: Առաջին անգամ Սարոյանը Երեւան եկավ 1935 թվականին: Պետք է որ զարմանալի ժամանակներ լինեին դրանք: Թերթերում ոչինչ չես գտնի այդ այցելության մասին: Այն ավելի շուտ եւ շատ նման էր սովորական մի զբոսաշրջիկի այցի: Թերթելով Սարոյանի մասին այսօր ստեղծված ողջ գրականությունը, կարելի է առանձնացնել այդ այցի ընթացքում նրա հանդիպումները միայն Ե. Չարենցի, Վ. Թոթովենցի եւ Գ. Մահարու հետ: Այս եռյակից ոչ մեկը չէր կարող «Իմ անունը Արամ է» լղարիկ եւ դեռեւս միակ պատմվածքների անգլերեն ժողովածուի հեղինակի մեջ տեսնել ապագա խոշոր արձակագրին, բայց չզգալ նրա մեջ անհատականությունը՝ չէին կարող: Գ. Մահարու հետ թափառումները Երեւանյան փողոցներում եւ Ղանթարում եղել էին այնքան հաճախ եւ անմիջական, որ երբ տասնամյակներ անց, վերոհիշյալ 1960-ին, նրանք հանդիպել էին Մոսկվայի «Նացիոնալ» հյուրանոցում, Սարոյանը բացականչել էր հին ծանոթի նման.

- Գուրգեն, դու ես քո գանգուրները...

Հեգնալագյան տարիներին Գ. Մահարին գրական կյանքին մոտենում էր բացառապես յարենցյան չափանիշներով եւ դա էլ եղավ գլխավոր պատճառը, որ սոցռեալիզմի հայ «գեներալներ» հետ այդպես էլ չհաստատվեցին փոքր ի շատ կանոնավոր հարաբերություններ: Վ. Սարոյանի հարցում Գ. Մահարին դժգոհելու առիթ չունեցավ: Դեռեւս անտեղյակ Երեւանի գրական աշխարհի կուլիսներին՝ մոսկովյան հարցազրույցներից մեկում նա դրական սեստրեց իրեն որպես մաքուր «չարենցական», ինչը անկասկած չմնաց Գ. Մահարուց. «Վ. Սարոյան՝ Չարենցի մասին... մաչադե՞ց, Վիլյամ»,- գրեց նա Մոսկվայից Վ. Նորենցին՝ նամակի ծարի վրա՝ որպես հետգրություն:

Սարոյան-Մահարի հանդիպումները Մոսկվայում եւ Երեւանում շարունակվեցին ընդհատված կետից: Դեռեւս Մոսկվայում Գ. Մահարին սկսեց իր փայլուն հուշագրություններից մեկը՝ «Վիլյամ Սարոյանի հետ», որը լույս տեսավ երբ նրանք՝ մեկն ինքնաթիռով, իսկ մյուսը՝ գնացքով ժամանեցին Երեւան: Երկրորդ դեպքը Գ. Մահարու կյանքում, երբ նրա հուշագրությունը լույս էր տեսնում հուշ-հեռուսի կենդանության օրոք: Առաջինը Չարենցն էր:

Երեւանյան հանդիպումների օրերին հուշագրությունը շարունակվեց եւ ծավալվեց, իսկ կատարը վերածվեցին հոգեւոր հարազատության, այն ասպիճանի, որ Գ. Մահարին հետ այդմ զգում էր Վ. Սարոյանի կենդանի ներկայության պահանջը: 1966 թվականի ամանորին էր, որ գրվեց «Վիլյամ Սարոյանին» հուշարեսկը.



Վիլյամ Սարոյան. 1960 թ., Երեւան: Լուսանկարը՝ Անդրանիկ Քոչարի

Այո, Վիլյամ, ո՞ւր ես, օրդ՝ կ,
Բեղերիդ հետ ո՞ւր ես շողում,
Ֆրեզնո՞, Փարի՞զ,
Վան ու Բիթլի՞զ.
Բա Երեւա՞ն... Չե՞ս եկ առել,
էլ մի ընկնի շատ դեմ ու դեմ,
Գինին թթվավ, սուրճը սառեց.
Էս տեսակ էլ եղբայրպեն՝...

Եթե Մահարին հնարավորություն ուներ կարդալու անգլիալեզու Սարոյանին գոնե ուսերեն, արա վերջինս զուրկ էր այդ հնարավորությունից էլ: Բայց ասել, թե նա չէր զգում, չէր ճանաչում Մահարուն, ճիշտ չի լինի: Մի կողմ թողնենք «ձկնորսների» հեռատեսությունը եւ անդրադառնանք սարոյանական յուրօրինակ «ընթերցմանը», մի ընթերցում, որը լուրացրեց նաեւ Գ. Մահարին եւ միշտ այդպես էլ կարդաց Շ. Շահնուրի ֆրանսալեզու գիրքը:

Որպեսզի հետագա խոսքում ամեն ինչ լինի հասկանալի՝ անդրադառնանք նախ Շ. Շահնուրի մի մանրավեպին.

«Օրին մեկը, սրճարան նստած էինք Գեղամ Ֆենդերեան եւ ես, մեջտեղնիս ունենալով տարեց բարեկամ մը (Ղարրեան), որ իբր ֆիզիկոս կը գործեր Sorbonne-ի laboratoires-ներուն մեջ: Մեր բարեկամը առաջարկեց նիւթական օգնություն մը խնդրել իր անձնական բարեկամ Որբերեանէն, ի նպաստ Ֆենդերեանին, որուն վիճակը դժնդակ էր: Ես ըսի թէ այդ բանը կարելի չէ, վասնզի Գեղամ ծանր ենթադրած էր Որբերեանը Պոլսոյ «Ժողովուրդի Ձայն» թերթին մէջ: Մեր չնաչխարհիկ ֆիզիկոսը իր աչքերը բացաւ խոշոր, խոշոր, եւ բացագանչեց թրխկարի շեշտով եւ ամենայն անմեղութեամբ. «Օհ դուն խենդ ես, չէ՞ տղամի՞ն ըրած ես, ասանկ հարուստ բանաստեղծ մը կը ենթադրուի՞: Մարդը միլիոն ունի, միլիոն՞...» (Գ. Մահարուն, 8 հուլիսի 1964 թ.):

Հիմա որ ժամանակն է անդրադառնալու, թե ինչպես Սարոյանը ոչ միայն Մահարի կարդաց եւ գնահատեց, այլեւ սովորեցրեց նրան կարդալ նման գրքերն իր չիմացած լեզվով եւ հայտնել արդեն իր, մահարիական կարծիքը Շ. Շահնուրին.

«Feux Contre Feux»-ը սեղանիս վրա է. 3-4 տարի առաջ. Մոսկվայում, Վիլյամ Սարոյանը «երիտասարդության սեմին» գիրս հրաժեշտ տալու ատեն՝ վերցրեց. «գիշերս

►

Հուշագրություն

կառամ, առավոտյան կբերեմ», ըսելով: Առավոտյան բերավ գիրը եւ շատ գովեց: Այո, ասացի, այդ գովասանքներդ ճիշտ են, բայց դու հայերեն այբ-բեն-գիմ չգիտես... Երեխայի դեմ, ճիշտ ինձի պես Ցարյանի դեմ «իր աչքերը բացավ խոշոր-խոշոր» եւ ըսավ. ես հայերեն չեմ գիտեր, բայց ո՞ գիրը կառդացի. տես (ցույց կուտա ինձի էջերը), ինչ կարմ գլուխներ են, կախման կեցեր... հուշատետր... թիվ-թվական... շա՛տ աղվոր, ոչավական գիրք է...

Ես էլ ճիշտ Վիլյամ Սարոյանի նման կառդացի գիրդ, սիրելի Շահնուր եւ հասկացա: Ավելի լավ՝ Երեւանի մե՛ջ...» (22 հուլիսի 1964 թ.):

Վերահաստատված գրական եւ մարդկային կապերը Վ. Սարոյանի հետ պահպանվեցին եւ հետագա տարիներին: Սարոյանն ուղարկեց իր գրքերը. «Բոլորն էլ անգլերե՛ն»,- բնորոշ մանկական անմիջականությամբ «զարմացավ» Մահարին: Նրանց միջեւ ժամանակ առ ժամանակ կապակցություն էր նամակների փոխանակում: «Բոլորն էլ անգլերե՛ն»... Ավելին ասել դրանց մասին հնարավոր չէ, քանի դեռ դրանք չեն հայտնաբերվել...

Վերոհիշյալ հուշագրությունում Վանի ու Բիթլիսի հիշատակումները պատահական չէին: Վ. Սարոյանը դեռ այն տարիներին, երբ հազվադեպ էին հայերի այցը Թուրքիա, եղավ այդ քաղաքներում: Թերթերն արտատպեցին նրա մի լուսանկարը Վանա «ծովի» ափին, լուսանկար, որ կտչում մտորումների տեղիք տվեց Գ. Մահարուն. «Մեծ հուզումով կարդացի Վիլյամ Սարոյանի այցելության մասին ի Վան եւ Աղթամար: Այնտեղ ալ միրգ կա եւ արեւ... Ինչո՞ւ չես արտատպեր այդ նյութերը» (Ա. Անդրեասյանին, 26 սեպտ. 1964թ.), «Վիլյամ Սարոյանը եղել է Բիթլիսում, Վանում: Մի սրիկա որ գրեմ այդ մասին կտրեմ՝...» (Վ. Դավթյանին, 27-28 հունիսի 1964 թ.):

Խոսքն «Էլեգիա» բանաստեղծության մասին էր, որը լույս տեսավ «Սվիրված Վիլյամ Սարոյանին՝ նրա Վանում եւ Աղթամարում հայտնվելու առթիվ» ծանոթագրությամբ («Գրական թերթ», 1964, 2 հոկտ., թիվ 40) եւ արտատպվեց Սփյուռքի բազմաթիվ պարբերականներում: Գ. Մահարուն ողջ կյանքում հետեւել էր Վանի կարոտը: Գուցե դա չլիներ այդքան մոռոռուն, եթե նրան հաջողվեր գեթ մի անգամ լինել ծննդավայրում, վերանայել եւ վերագնահատել իր մանկական եւ պատանեկական հիշողությունները... Ինչ իմանաս... Ամենաբ ես գրել եմ Համբուրգի ու Փարիզի, Լոս Անջելեսի ու Ինդիանապոլիսի մասին, բայց Վանի մասին... չգրվեց ոչ մի տող:

Վ. Սարոյանի արտաքուստ անխոռով լուսանկարը Վանա լճի ափին չէր կարող մտորումների տեղիք չտալ եւ ոչ մի տողում իրեն չկեղծած Մահարու մեջ չզարթնեցնել ոչ միայն տարակուսանք, այլեւ «հանդիմանություն».

Մի՞թե, մի՞թե, Վիլյամ,
չդառնացավ ցավից
Քո սիրտը, որ գիտե
մարդու վշտից տմկալ՝
երբ նայեցիր խաղաղ
Վանա ծովին ծանվի.
Մի՞թե չիրեցիր փոթորիկն
այն հսկա...

Եվ չնայած հետագա տողերում «մեղքը» գրեթե հանվում էր՝

Օ՜, ոչ, չե՛ն հավատում ո՞ր
աչերին խաղաղ.
Գալարվել է սիրտդ, իսկ
դու ժպտացել ես,
Տեսել ես ո՞ր մտքում դիմե՞
արնաբաղախ,
Ու անխնա գործող մահու
գնդացիրը...
...Տեսել ես ո՞ր հոգով
ու աչքերով արթուն
Ավե՞ր մի նախիր ու
մոխրացած տներ,
Կմախքնե՞ր ես տեսել
ճանփի եզրին, արտում...
Գիտեր չե՞ն ինել...»

Այնուամենայնիվ մեղադրականը հասել էր Վ. Սարոյանին, ինչի մասին վկայում է կանադահայ բանաստեղծ եւ մանկավարժ Մանվել Քեռսեյանի գրառումը.

«Օր մը, Հոկտեմբերի 6, կէսօրէ յետոյ դասարանէն ելայ ու մեր Դարեվանի բակին մէջ տեսայ կանգնած՝ Սարոյեանը: Երեւանեան ողջոյններով մօտեցայ իրեն. ըսի՝

- Պարո՛ն Սարոյեան, Ձեր Վան այցելութեան առիթով Մահարի բանաստեղծութիւն մը գրած էր, իմացա՞ր:

- Այո՛, բարեկամս թերթ մը բերաւ, կարդաց, յետոյ թարգմանեց, Գուրգէն կը յանդիմանէ ինծի. Գուրգէն իրաւունք ունի: Եթէ նամակ գրես իրեն, գրէ՛. Ուիլիըմ ըսաւ՝ Գուրգէն իրաւունք ունի, կը նդունեմ իր յանդիմանութիւն...» (Գ. Մահարուն, 14 դեկտ. 1965 թ.):

3

Ամերիկահայ գրողի հաջող եւ վերջին այցելությունը Երեւան 1976 թվականին էր: Գրողների միությունից նրան «կցվեց» Վ. Դավթյանը: Առաջին իսկ հանդիպման ժամանակ Սարոյանը նրան ասաց.

- Մահարու կարմիր մագերով տղայից նամակ ստացա: Մահարու նամակներն էր խնդրել...

- Դա կարմիր մագերով տղան չի, այլ սեւ մագերով,- ուղղել էր նրան Վ. Դավթյանը:

- Իրավ,- վերհիշել էր Սարոյանը,- ես նրան կուզեմ տեսնել...

Դավթյանը խոստացել էր կազմակերպել այդ հանդիպումը եւ «Իմ սիրտը լեռներում է» գեղեցկագեղ ժամանակ ինձ հայտնեց այդ մասին:

Կան հաջողված ներկայացումներ, որոնք արտաքին այս կամ այն կողմնակի գործոնի շնորհիվ վեր են բարձրանում գրեթե բոլոր դերասանական տեսակներից: Այդպես էր այդ երեկո Մհեր Մկրտչյանի, ցանկացած տարիքում անկրկնելի Ջոնի խաղացող Վարդերեսյանի, Աննա Սարյանի խաղը: Վ. Սարոյանի ներկայությունը ազդակ դարձավ նրանց համար այդ երեկո թատերական արվեստի աննախընթաց բարձունքները հասնելու...

Ներկայացումից հետո մոտեցա Սարոյանին եւ անխոս պարզեցի նույն «Վեսելի Ջեքսոնի արկածները»՝ նրա մակագրությամբ: Նա կարդաց տարիներ առաջ իր գրածը, եւ ջերմ ողջագուրվեց... ինչպես զգացի, բացակա Գուրգեն Մահարու հետ: Հետո հանեց գրիչը եւ գրեց. «Նորից մեծ բավականությամբ իմ մահացած ընկերոջ Գուրգեն Մահարու որդուն՝ Գրիգոր Մեծարյանին հաջողություններ եւ երջանկության մշտապես շարունակվող ցանկություններով նրան եւ նրա ընտանիքին...»

- Կին ունի՞ս,- ընդհատեց նա գրելը:

- Այո...

- Անունն ի՞նչ է:

- Նելի,- բացեցի ես անմահության ցուցակը...

«...Նելիին...»,- շարունակեց նա եւ նորից դարձավ ինձ.

- Էլ ո՞վ ունիս:

- Տղա...

- Քանի՞ տարեկան է:

- Տասնութ...

- Անունն ի՞նչ է:

- Գուրգեն...

- Հարկավ,- նույնպես միաբան երկխոսության անցավ պատասխանում թատերական հեքեւի

Սեղանի գիրք՝ մի կյանքի անհատնում նվիրումի

Վաղուէտը իր թանգարանի առաջին աշխատակիցների հետ, 1969 թ.

«Քայլող կինը», 1911 թ.

ԴՐԱՎԱՐՊ ՀԱԿՈԲՅԱՆ

Ճանաչված արվեստաբան Շահեն Խաչատրյանը կրկին հաճելի անակնկալ մատուցեց՝ արվեստասեր ընթերցողի սեղանին դնելով «Թանգարանի գինվորը» ինքնատիպ եւ էքսկլուզիվ գիրը: Դա վավերագրական պատմությունների շարք է՝ կապված Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանում եւ Ազգային պատկերասրահում տարիների իր գործունեության, ձգտելով նաեւ նոր՝ թանգարանները հարստացնող ցուցանմուշներ ձեռք բերելու ոչ դյուրին ափխաջանքի հետ: Որպես հին մատենադարանցի լավ գիտեմ, թե ինչ է նշանակում արվեստի եւ, ընդհանրապես, մշակութային որեւէ հուշարձանի հայտնաբերումը, նրա գնահատումը եւ պահպանումը:

Արվեստի գործը կենդանի մարդու նման իր կենսագրությունն ունի: Մատենադարանում, օրինակ, հայտնի է, թե ձեռագիր-մայանը երբ եւ որտեղ է ստեղծվել, ինչ փորձություններով է անցել, ովքեր են եղել դրանց պատվիրատուները: Միջնադարյան մատենագիտությամբ զբաղվող ամեն մի գիտնական, որպես ընդունված կարգ, առաջին հերթին այդ տեղեկությունների հետ է ծանոթանում: Դրանք մեր «հոգնաթեղ» եւ «փեռուն» գրիչների թողած մարգարտատար հիշատակարաններն են, որոնք 1986-ից մի դեմք: Լուր սանձալով Ֆ. Այվազովսկու կտավների մասին՝ Շահեն Խաչատրյանը մարահայալ բեռնատար մեքենայով (այդ ժամանակվա բեռնատար մեքենաների մասին պատկերացում ունենք), կտրում-անցնում է Մախաչկալա, Գրոզնի, Սավրոպոլ, Ռոստով, Թեոդոսիա, Սիմֆերոպոլ, Կերչ, Սուխումի՝ հայրենիք բերելով հանճարեղ վարպետի հայկական թեմաներով կտավները: Նման անուրանալի ջանքերի շնորհիվ է, որ այսօր երանցիներս հոյարանում ենք արվեստի մեր թանգարաններով: Ի դեմ, տեղին է հիշել նաեւ երախտավոր արվեստաբան, հասարակական եռանդուն գործիչ Հերնրիկ Իգիթյանի գործադրած ջանքերը, որը մեր մայրաքաղաքում ստեղծեց ժամանակակից արվեստի՝ իր տեսակի մեջ եզակի թանգարանը: Առանց տատանվելու կարող ենք ասել, որ վերոհիշյալ թանգարանները վաղուց արդեն համաշխարհային համարում են ձեռք բերել:

Հինգ կոմսուհիների դիմանկարը, 1917 թ.

Այսօր Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանն այցելած հազարավոր այցելուներ ըմբոխնում են նաեւ Հ. Խաչատրյանի բերած ափխաջանքները՝ «Աղբյուրի մոտ» (1904), «Տոր or. Ջրհորի մոտ» (1908), «Գիշերային բնանկար» (1911), «Հայկական գյուղը» (1927), «Խոտյան ձորում. Ծաղկած լեռներ» (1905), «Հայուհին սագով. Նստյուտմոտ» (1916), «Քայլող կինը» (1911, իր անձնական նվիրատվությունը թանգարանին), «Նինա Կոմուրջյանի դիմանկարը» (1917), «Արագածը» (1925), «Գեղամա լեռները» (1926), «Հայկական ազգային զորագնդերի լեռնային երթը» (1933), «Վ. Հալաբյանի դիմանկարը» (1930) եւ էլի ուրիշ, նաեւ փարիզյան շրջանի կտավներ: Եթե Շահեն Խաչատրյանն ուրիշ այլ բան առած չլիներ, միայն տարյանական թվարկված հավաքածուի ձեռք բերումը բավական էր նրան համարելու հայ մշակույթի երախտավոր:

1989-ին Շահեն Խաչատրյանը համաձեռնության կարգով նշանակվում է Հայաստանի Ազգային պատկերասրահի տնօրեն: Եվ ահա այստեղ էլ նույն եռանդով շարունակում է նկարների փնտրտուքը, ավելի քան 400 գեղանկարչական եւ գրաֆիկական գործեր տուն բերելու շնորհակալ գործը: Բավական է ասել, որ միայն Հովհաննես Այվազովսկուց պատկերասրահ է բերվել «Նոյը իջնում է Արարատից», «Փոթորիկը», «Առավոտը Գուրզուֆում», «Պետերբուրգյան տեսարան», «Բայրոնի այցը Սուրբ Ղազար կղզի», «Մրրիկը ծովում» ու եւս մեկ-երկու կտավներ: Հանելուկի նման մի բան է. Շահենը ինչպես է իմանում նկարների մասին, նրանց տեղը, գնում, ասես կախարդելով տիրոջը, վերցնում եւ բերում է: Այդպես, ափխարհի տարբեր ծայրերից երեւան եկան Օնորե Դոմյե, Բերնար Բյուֆֆե, Իսահակ Լեւիտան, Պավել Կուզնեցով, Արիլ Գորկի, Գառզու, Էդգար Շահին, Մինաս, Հակոբ Կոջոյան, Վարդան Մախոխյան, Ջաֆար Ջաֆարյան, Ստեփան Աղաջանյան, Գեւորգ Բաբինջաղյան, Հմայակ Արծաթպանյան ... Պատկերասրահի ցուցանմուշների համալրման, նաեւ դրա հեղինակության բարձրացման գործում Շահեն Խաչատրյանի վաստակը, իմ կարծիքով, թույլ է տալիս նրա անունը դնել այդ Պատկերասրահի երկարամյա տնօրեն եւ նկարահավաք երջանկահիշատակ Ռուբեն Դոմբյանի կողքին:

Երբ Մատենադարանի բարեւարներից կամ բարեկամներից մեկը ձեռագիր է նվիրում, նրա անունը գրվում է Պատվո հատուկ մայանում, նրան շնորհվում «Մեսրոպ Մաշտոց» մեդալը, հաղորդագրություն տպագրվում մամուլում:

Շահեն Խաչատրյանը ոչ թե մեկ, այլ բազմաթիվ գեղանկարչական «ձեռագրեր» է բերել պատկերասրահ, երբեմն էլ ավելի մեծ արժողությամբ, քան սովորական մի մայան... Եվ ահա, պատվավոր մայաններում տեղ գտնելու, մեդալների եւ այլ շնորհների արժանանալու փոխարեն նա հայտնվեց իր սիրած թանգարաններից հեռու: Բայց, որ ցավալի է, նրա շուրջը ողողվել է մթնոլորտը:

Որ Շահեն Խաչատրյանն ազատվել է Պատկերասրահի կամ Մարտիրոս Սարյանի թանգարանի տնօրենի պարականություններից, անկեղծ ասած, դրանում անսովոր որեւէ բան չեմ տեսնում: Այդ ոլորտի մեր մեծերը՝ Սարյան, Դրամբյան, Պարսամյան, Իսաբեկյան եւ այլք, ժամանակին թողել են պատասխանները: Պատասխանը հավերժական չէ եւ ոչ էլ պայմանավորվում է անուններով: Տեղին կատարված փոփոխությունները թարմ շունչ են հաղորդում ափխաջանքներին: Ես չգիտեմ՝ ինչպիսին է վիճակը Սարյանի տուն-թանգարանում, բայց որ Ազգային պատկերասրահում նոր տնօրենի խելամիտ նախաձեռնությամբ հետաքրքրական բազմաթիվ միջոցառումներ են իրականացվում, դա արդեն հաճելի իրողություն է: Չթվարկենք բոլորը. միայն հիշեցնենք Պատկերասրահի գիտական նորաստեղծ խորհուրդը, որի մեջ ընդգրկված են հանրաճանաչության հեղինակավոր արվեստաբաններ (*զարմանալի է, բայց առանց Շահեն Խաչատրյանի- խմբ.*):

Միանգամայն այլ խնդիր է, երբ վաստակաշատ մարդուն, այդ ասպարեզում մեծ ներդրում ունեցող մարդուն, մանր-մունր վրիպումների համար, մոռանալով նրա ծառայությունները փարկոծում են հեռուստատեսությամբ, մամուլով, դիմում նույնիսկ իրավապահ մարմիններին: Ինչ է պահանջվում, համոզված եմ, որ իր ամբողջ կյանքն արվեստին նվիրած մարդն արտառոց բաներ չէր կարող անել: Թեկուզ եւ ինչ-որ բան եղած լինի. հին իմաստությունն ասում է. «Չկա մեկը առանց սխալների. մեզանից լավագույնը նա է, ով դրանցից փոքր ունի», կամ՝ «Չի սխալվում նա, ով ոչինչ չի անում»: Ես ներողություն եմ խնդրում ընթերցողից, որ Շահենի հանդեպ անընդունելի վերաբերմունքը կառնելու եմ Հայաստանի այսօրվա հասարակական-քաղաքական լարված մթնոլորտի հետ: Երկուսդ՝ մեծ թե փոքր, նույն հոգեբանական խաթարված բնույթի արտացոլումն են, նույն անհանդուրժողականության, ատելության արտահայտությունը: Մի՞թե մեր ժողովուրդը այդքան հիշաչար ու փնոտ է դարձել: Մի՞թե մեր ճակատագրից մեզնից դասեր չենք քաղում: Ողջ պատմության ընթացքում մեր ուժերը երկու ճակատում ենք վատնել՝ արտաքին եւ ներքին: Մեր մեծերը, սկսած խորենացուց, խոսել են այդ մասին՝ կոչ անելով խոհեմության եւ միասնության: Երեւի թե ճիշտ էր Դ. Դեմիրճյանը, երբ գրում էր. «Հանելուկային արտաքին է հայը: Ինչպես ճանաչես նրան, ինչպես չափես: Իր չափը չափազանցն է. զարմանալի հավասարակշռություն, որը ծայրահեղության մեջ է»: Անհամբեր ենք դարձել, անգիջող:

Այդ հոդվածը անվանի արվեստագետի արժանապատվությունը պաշտպանելու է կոչված: Արդեն յոթանասունչորսը բոլորող Շահեն Խաչատրյանը հիսուն տարի անմնացորդ նվիրվել է հայ արվեստին: Դա է եղել նրա ընտանիքը, նրա զավակը, այս ափխարհում նա ուրիշ ոչինչ չի ունեցել: Չեմ ուզում Ավետարանից բարոյախոսական մեջբերումներ անել: Հարկավոր է մի պարզ բան. սիրել մարդկանց, առավել եւս ազգային ծառայություններ ունեցող մարդկանց: Տարիների դժվարին ափխաջանքով ձեռք բերված հեղինակությունը չի կարելի մի հարվածով սեւացնել: Շահեն Խաչատրյանի վաստակը մեր արվեստում բարձր է եւ ոչ մի բան չի կարող նսեմացնել այն:

Հոդվածի հեղինակը արվեստագիտության դոկտոր-պրոֆեսոր է, Մատենադարանի արվեստի բաժնի դեկավարը

Մասնավորեցում

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ
«Շափյուղա» ՓԲԸ բաժնետոմսերի մրցույթի անցկացման մասին
(ծածկագիր՝ 472-Ն-1)

Ի կատարումն ՀՀ կառավարության 2008թ.-ի մայիսի 22-ի թիվ 472-Ն որոշման 1-ին կետի՝ ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնակցելու ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Շափյուղա» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի մասնավորեցման մրցույթին (ծածկագիր՝ 472-Ն-1):

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Ընկերության հասցեն	ք. Վանաձոր, Թիտոսյան 7/1
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N 472-Ն, 22.05.2008թ.
1.3.	Ընկերության բաժնետոմսերի ընդհանուր թիվը (հատ)	8445.4
1.4.	Ջրաղեցված հողային տարածք (հա)	1.6 հա
1.5.	Անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համարը եւ տրման ամսաթիվը	N988267, 25.09.2001թ.
1.6.	Գործունեության հիմնական տեսակը	կենցաղային սարքերի առաջադրում
1.7.	Գնահատման ամսաթիվը	30.01.2008թ.
1.8.	Ընկերության բաժնետոմսերի գնահատված արժեքը (հազ. դրամ)	120 399

2. Ընկերության հաշվեկշռի ցուցանիշներ (01.10.2007թ. դրությամբ)

(հազ.դրամ)

Հ/Հ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Ընդ. ընթացիկ ակտիվներ , այդ թվում	4348.044*	131121.2
2.1.1.	Կանխավճարներ, այդ թվում՝	4348.044	131121.2
•	շենքեր եւ շինություններ /1 հա/	3262.453	123983
•	մեքենաներ եւ սարքավորումներ /100 հա/	836.858	5486.01
•	արտ. մաս. գույք, գործիք եւ այլն /63 հա/	248.733	1652.19
2.1.2.	Անշարժ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	-	-
2.1.3.	Ոչ նյութական ակտիվներ	-	-
2.1.4.	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	-	-
2.2.	Ընթացիկ ակտիվներ	5596	5596
2.3.	Ընդ. ընթացիկ պարտավորություններ	30720	-
2.4.	Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում	16318	16318
•	ՀՀ բյուջեի նկատմամբ	2296	2296
•	սոց. ապահովագրության գծով	1630	1630
•	անձնակազմին ափաձանի վարձատրության գծով	4315	4315
•	կրեդիտորական պարտեր գնումների գծով	7810	7810
•	այլ կրեդիտորական պարտեր	267	267

* Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները

2.5. Համաձայն ՀՀ կառավարության 22.05.2008թ.-ի N472-Ն որոշման, Ընկերությունը 2000 թվականի սեպտեմբերի գծով վճարման ենթակա 144.6 հազ. դրամի չափով պարտավորություն:

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը (տես 8.1 եւ 6.2 կետերը) եւ 6.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցույթի պայմանագիր (ԱՊՊ կարգի գույքի կառավարման վարչությունից, 438 սենյակ), որը ներառում է հետեւյալ փաստաթղթերը՝
- գրավոր առաջարկ մրցույթի պայմանների վերաբերյալ (տես՝ 4.12 կետը),
- նախավճարի մուծումը հաստատող փաստաթղթի պատճենները,
- գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները (իրավաբանական անձանց համար), հարկատուների համար՝ անձագրի պատճենը, սոցիալական քարտի պատճենը,
- հայտատուի կողմից տրված լիազորագիր (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը),
- գործարար նպատակ,
- իրավաբանական անձանց համար նաեւ գրավոր հաստատում առ այն, որ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ դիմորի (հայտատուի) կանոնադրությամբ ակցիա գույքի ակցիա ձեռք գնելու համար պետական համապատասխան մարմինների կամ նրանց մարմինների (խորհուրդ, ընդհանուր ժողով) հանձնարարությունը չի պահանջվում, կամ պահանջվող հանձնարարությունները ստացված են՝ կցելով այդ հանձնարարությունը:

4. Մրցույթի մասնակցության հայտերի ներկայացման կարգը

4.1. Մրցույթի մասնակցության հայտերը ներկայացվում են ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալը:

Մրցույթի մասնակցության հայտերը՝ 3.1. կետում նշված մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթով, ներկայացվում են սոսնձված եւ սառագրված ծրարով՝ անձամբ կամ փոստով: Փոստով ուղարկված հայտերի (ծրարների) ներկայացման ժամկետ է համարվում ծրարի Հայաստանի Հանրապետության կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն մուտքի օրը եւ ժամը:

4.2. 4.1. կետին չհամապատասխանող հայտերն առանց ծրարը բացելու վերադարձվում են հայտ ներկայացնողին:

4.3. Մրցույթի հայտատուները՝ մինչեւ մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտը (մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալը) կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը: Մրցույթի հայտերի փոփոխությունը կատարվում է հայտերի ներկայացման կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «Փոփոխում» բառը:

Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտից հետո (մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո) ներկայացված հայտի փոփոխության կամ հետ վերադարձման դիմումները ենթակա չեն ընդունման:

4.4. Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է առանձնացված լինեն թվային ցուցանիշերով եւ փոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքից (տես 4.12 կետը):

4.5. Մրցութային ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով: Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կդադարեցնեն հանձնաժողովի կողմից:

4.6. Ծրարը պետք է հաստատված լինի մրցութային հանձնաժողովի՝ նշելով մասնակցելու օրվեկի անվանումը եւ մրցույթի ծածկագիրը (ծածկագիր՝ 472-Ն-1):

4.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաեւ ֆախիֆիլային կարով: Սեղմված փաստաթղթերը ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում դրվում են ծրարի մեջ եւ փակվում:

Ներկայացված ծրարները ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից կնքվում եւ նույնացվում են:

4.8. 6.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվում:

4.9. Մրցույթի հայտը գրանցվում է հատուկ գրանցամատյանում՝ հայտատուին տալով սեղմված մրցույթի մասնակցության հայտը ընդունելու վերաբերյալ:

4.10. Մրցույթի հայտատուները 6.2 կետում նշված հատուկ հաշվին մուծում են մրցույթի մասնակցության նախավճար 6.1 կետում նշված գումարի չափով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի նախավճարն ընդգրկվում է մասնակցի կողմից բաժնետոմսերի մասնավորեցման համար առաջարկված գնի մեջ: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից մրցույթի արդյունքների արձանագրությունը չստորագրելու, հետագա վճարումները կատարելու եւ (կամ) պայմանագիր կնքելու դեպքում նախավճարը չի վերադարձվում եւ մասնավորեցումը (օտարումը) հանվում է կարգից:

Մրցույթում հաղթող չճանաչված մասնակիցները, ինչպես նաեւ մասնակցի կարգավիճակ չստացած հայտատուները, մրցույթի մասնակցության նախավճարի վերադարձման նպատակով պետք է դիմեն ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն:

Հաղթող վարձակալության ընդունուս ժամկետում մրցույթում հաղթող չճանաչված հայտատուի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից համաձայնություն դիմում չներկայացնելու դեպքում մրցույթի մասնակցության նախավճարը հաշվանցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե համաձայնության հաշվին:

4.11. Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

4.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները:

մասնավորեցվող բաժնետոմսերի համար առաջարկվող գինը (նվազագույն գինը՝ 120 399 հազ. դրամ), ներդրումների չափը՝ առաջիկա 3 տարիների կտրվածքով,

սոցիալական երաշխիքներ, այդ թվում՝ ափաձաստեղծների եւ միջին ափաձավարձի վերաբերյալ:

4.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

5. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

5.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում սանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

5.2. Մրցույթի հաղթողը բաժնետոմսերի գինը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստանալու օրվանից մեկ կանոնյա ժամկետում, ՀՀ արժույթով՝ բաժնետոմսերի վաճառի գնի 70 տոկոսն ուղղելով ՀՀ պետական բյուջե, իսկ 30 տոկոսը՝ հանրապետական հանրային ֆոնդային բյուջե՝ ըստ գույքի գտնվելու վայրի:

5.3. Համաձայն ՀՀ կառավարության 08.02.07թ. N 472-Ն որոշման, մրցույթի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո երկամսյա ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը գնորդի հետ կնքվի մասնավորեցման պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 561600 դրամ վճարը (նեղայլ ավելացված արժեքի հարկը), 10-օրյա ժամկետում ապահովել ընկերության կողմից ՀՀ պետական բյուջեի նկատմամբ բաժնետոմսերի գծով ունեցած 144.6 հազ. դրամ պարտքի մարումը, ինչպես նաեւ գույքային իրավունքների գծով գրանցման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.4. Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդը հանդիսանում է նաեւ գնահատման պահից հետո առաջացած իրավունքների եւ պարտավորությունների իրավահաջորդը:

5.5. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նաեւ հետ չի վերադարձվում, եւ մրցույթը հանվում է կարգից:

6. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

6.1	Մրցույթի նախավճարի չափը	6 020 հազ. դրամ
6.2	Մրցույթի նախավճարի մուտքագրման հատուկ հաշիվը	Մինչ 1 տարվան գանձապետական բաժանմունք դրամական - 900013145017
6.3	Մրցույթին առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	2008 թվականի հուլիսի 29-ը , ժամը՝ 13:00
6.4	Մրցույթին առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Տիգրան Մեծի 4, ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն,438 սենյակ
6.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը	2008 թվականի օգոստոսի 1-ը, ժամը՝15:00 ք.Երեւան, Տիգրան Մեծի 4, ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
6.6	Ֆախֆիլային կարդ	(37410) 581441
6.7	Ինտերնետ	URL : //www.privatization.am

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ 581441 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչության ղեկի 07.06.2007թ. թիվ 76-Ա հրամանով սահմանված

Պետական գույքի մասնավորեցման եւ օտարման մրցութային հանձնաժողով

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱԳՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱԳՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ 2008 թ. հուլիսի 10-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ «ԱԳՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23, 4-ՐԴ ՀԱՐԿ)
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՀՀ կառավարության 01.12.99թ. որոշմամբ լուծարվող «Առարատ»ԼԿՁ-ի (հասցեն՝ ք. Երեւան, Ազատամարտիկների 2ա) հաշվեկշռում գտնվող գույքը՝

N	Գույքի անվանումը	Թող բերման տ/թ.	Քանակ	Մեկնարկ գինը դրամ	Նախավճար (դրամ)
1	Ավտոմեքենա «ԳԱԶ 21061» շարժիչը՝ 1757666	1991	1	1000000	50000
2	Ավտոմեքենա «ԳԱԶ 3102» շարժիչը՝ 0079871	1989	1	1147000	57350

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով: Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ հանձնվեցները, որոնք մինչեւ ա/թ. յուրաքանչյուր աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը17:00 աճուրդային հանձնաժողովին են ներկայացել.

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիր: մուտագրման հաշիվն է «ԱՏԲ-Հայաստան Բանկ» թիվ 16000665 1014 դրամային հաշիվը.

-անձնագիր, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթեր:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական:

Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում աճուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհանդիսացող այն անձինք, որոնք վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք.Երեւան, Դ. Անհաղթի 23/4-ոդ հարկ) մինչեւ յուրաքանչյուր աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00, իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները վաճառվող լոտին (գույքին) կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր երեքշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9.00-ից մինչեւ 17.00 (բացառությամբ ժամը 13.00-ից մինչեւ 14.00):

Գույքի պահպանումը իրականացնում է ընկերությանն առընթեր աճուրդային հանձնաժողովի կողմից:

Նախնական աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցի, ներկայացված մասնակցի վկայական հանդիսացող հանձնարարագրի համար հանձնում է համարանիշ: Աճուրդը վարում է աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին հայտնում գնային հայտը: Նվազագույնը հաղթանակ (քայլ) չափով: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, որը պետք է գնահատվի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտ: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, ապա հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդի հաղթած մասնակից է հայտ, որը պետք է գնահատվի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտ: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ չի ներկայացրել, ապա աճուրդի հաղթող է հանդիսանում աճուրդավարի կողմից նշանակված մասնակիցը: Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող հանդիսացող մասնակիցը ստանում է 30 ժամվա ընթացքում, վճարել իր առաջարկած գնի հանդիսանում է աճուրդի հաղթած մասնակից: Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող հանդիսացող մասնակիցը ստանում է 30 ժամվա ընթացքում (10 օրյա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, որը սահմանված ժամկետում (10 օրյա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, որը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 ժամվա ընթացքում)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ
«Սյունիք» ռեստորանի գույքի, այդ թվում 975 քառ. մ. մակերեսով բենզի մրցույթի անցկացման մասին
(ծածկագիր՝ 472-Ն-2)

Ի կատարումն ՀՀ կառավարության 2008թ.-ի մայիսի 22-ի թիվ 472-Ն որոշման 2-րդ կետի՝ ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու «Սյունիք» ռեստորանի գույքի, այդ թվում 975 քառ. մ. մակերեսով բենզի (այսուհետ՝ գույք) մասնավորեցման մրցույթին (ծածկագիր՝ 472-Ն-2):

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1	Գույքի հասցեն	ՀՀ Վայոց Ձորի մարզ, քաղ. Եղեգնիկ
1.2	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N 472-Ն, 22.05.2008թ.
1.3	Գույքի գնահատման ամսաթիվը	21.01.2008թ.
1.4	Սնուցում գույքի մակերեսը (քառ.մ.)	975
1.5	Գույքի գնահատված արժեքը (հազ. դրամ)	13 784
1.6.	Գույքի զբաղեցրած, օգտագործման եւ սպասարկման համար անհրաժեշտ հողաբաժնի (հա)	0.28
1.7.	Հողամասի 11.6.-ի կադաստրային արժեքը (դրամ)	810*
1.8.	Սնուցում գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայագրի համարը, ամսաթիվը	N 2378718, 05.11.2007թ.

* 1.7. կետը լրացվել է համաձայն ՀՀ ԿԱՆ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վայոց ձորի տարածային ստորաբաժանման կողմից տրամադրված տեղեկանքի:

2. Գնահատման ցուցանիշներ (01.10.2007թ. դրությամբ)

Ա/Հ	Գույքի անվանումը	Գնահատական արժեքը (հազ. դրամ)	Գնահատված արժեքը (հազ. դրամ)
2.1.	Ընդհանուր ակտիվներ, այդ թվում	246 842	13 759.8
2.1.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում՝	246 842*	13 759.8
•	բենզին /1 հատ/	243 423	13 663
•	արտ. սնց. գույք, գրենիք եւ այլն /15 հատ/	3 419	96.8
2.2	Շրջանառու ակտիվներ	24 509	24 509

* Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը (տես 6.1 եւ 6.2 կետերը) եւ 6.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցույթի մասնակցության հայտ (ձեւը կարելի է ստանալ ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունից, 438 սենյակ), որը ներառում է հետեւյալ փաստաթղթերը՝
- գրավոր առաջարկ մրցույթի պայմանների վերաբերյալ (տես՝ 4.12 կետը),
- նախավճարի մուծումը հաստատող փաստաթղթի պատճենները,
- գրանցման եւ հիմնական փաստաթղթերի պատճենները (իրավաբանական անձանց համար), հարկատուների համար՝ անձնագրի պատճենը, սոցիալական քարտի պատճենը,
- հայտատուի կողմից տրված լիազորագիր (եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը),
- գործառնական ծրագիր,
- իրավաբանական անձանց համար նաեւ գրավոր հաստատում առ այն, որ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ դիմումի (հայտատուի) կանոնադրությամբ տվյալ գույքը ձեռք գնելու համար պետական համապատասխան մարմինների կամ ներին մարմինների (խորհուրդ, ընդհանուր ժողով) հաստատությունը չի պահանջվում, կամ պահանջվող հաստատությունները ստացված են՝ կցելով այդ հաստատագրերը:

3.2. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ օրենսդրությամբ հողի սեփականության իրավունք ձեռք բերելու իրավունք ունեցող անձինք:

4. Մրցույթի մասնակցության հայտերի ներկայացման կարգը

4.1. Մրցույթին մասնակցելու հայտերը՝ 3.1. կետում նշված մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթով, ներկայացվում են սոսնձված եւ ստորագրված ծրարով՝ անձամբ կամ փոստով: Փոստով ուղարկված հայտերի (ծրարների) ներկայացման ժամկետ է համարվում ծրարի Հայաստանի Հանրապետության կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն մուտքի օրը եւ ժամը:

4.2. 4.1. կետին չհամապատասխանող հայտերն առանց ծրարը բացելու վերադարձվում են հայտ ներկայացնողին:

4.3. Մրցույթի հայտատուները՝ մինչեւ մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտը (մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալը) կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտը: Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է հայտերի ներկայացման կարգով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

Մրցույթի մասնակցության հայտերի ընդունման վերջնական ժամկետի ավարտից հետո (մինչեւ 6.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո) ներկայացված հայտի փոփոխության կամ հետ վերադարձման դիմումները թույլատրելի չեն ենթակա:

4.4. Մրցույթի մասնակիցների՝ մրցույթին պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է առանձնացված լինեն թվային ցուցանիշներով եւ փոխ չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքից (տես 4.12 կետը):

4.5. Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տոպրակի կամ պարզ ընթերցելի ծրարով:

Մրցույթին առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով: Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

4.6. Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը եւ մրցույթի ծածկագիրը (ծածկագիր՝ 472-Ն-2):

4.7. Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաեւ ֆաքսիմիլային կարով: Ստացված փաստաթղթերը ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում դրվում են ծրարի մեջ եւ փակվում:

Ներկայացված ծրարները ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից կնքվում եւ մուտագրվում են:

4.8. 6.3 կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվում:

4.9. Մրցույթի հայտը գրանցվում է հատուկ գրանցամատյանում՝ հայտատուին տալով ստացական մրցույթի մասնակցության հայտը ընդունելու վերաբերյալ:

4.10. Մրցույթի հայտատուները 6.2 կետում նշված հատուկ հաշվին մուծում են մրցույթի մասնակցության նախավճար 6.1 կետում նշված գումարի չափով:

Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի նախավճարն ընդգրկվում է մասնակցի կողմից գույքի մասնավորեցման համար առաջարկված գնի մեջ: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից մրցույթի արդյունքների արձանագրությունը չստորագրելու, հետագա վճարումները չկատարելու եւ (կամ) պայմանագիր չկնքելու դեպքում նախավճարը չի վերադարձվում եւ մասնավորեցումը (օտարումը) համարվում է չկայացած:

Մրցույթում հաղթող չճանաչված մասնակիցները, ինչպես նաեւ մասնակցի կարգավիճակ չստացած հայտատուները, մրցույթի մասնակցության նախավճարի վերադարձման նպատակով պետք է դիմեն ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը:

Հայտային վարձավճարի ընդհանուր ժամկետում մրցույթում հաղթող չճանաչված հայտատուի (կամ նրա լիազոր ներկայացուցչի) կողմից համապատասխան դիմում չներկայացնելու դեպքում մրցույթի մասնակցության նախավճարը հաշվանցվում է հայտատուի հանրապետական պետական բյուջեի համապատասխան հաշվին:

4.11. Մրցույթի դիտումներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցութային առաջարկը հանվում է հետագա քննարկումից:

4.12. Մրցույթի հաղթողի որոշման համար առաջադրվում են հետեւյալ պայմանները.

մասնավորեցվող գույքի համար առաջարկվող գինը (նվազագույն գինը՝ 13784 հազ. դրամ) (կշիռը՝ 0.4), ներդրումների չափը՝ առաջիկա 3 տարիների կտրվածքով (կշիռը՝ 0.6):

4.13. Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4.14. Մրցույթում հաղթողին է օտարվում գույքի զբաղեցրած, օգտագործման եւ սպասարկման համար անհրաժեշտ 2800 քառ.մ. հողաբաժինը՝ կադաստրային արժեքով:

5. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

5.1. Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

5.2. Վճարումները կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության արժույթով՝ գույքի վաճառքի գնի 70%-ն ուղղելով ՀՀ պետական բյուջե, 30%-ը՝ համապատասխան հաշվեմնի ֆոնդային բյուջե՝ ըստ գույքի գտնվելու վայրի, իսկ հողամասի կադաստրային արժեքը վճարել հաշվեմնի բյուջե:

5.3. Համաձայն ՀՀ կառավարության 2008թ.-ի մայիսի 22-ի թիվ 472-Ն որոշման՝ մրցույթի հաղթողի կողմից առաջարկված գնի եւ հողամասի կադաստրային արժեքի վճարումից հետո մեկամսյա ժամկետում ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը գնորդի հետ կնքի առուվաճառքի պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճար՝ 312600 դրամ (նեղության ավելացված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքը՝ օրենքով սահմանված կարգով:

5.4. Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդը հանդիսանում է նաեւ գնահատման պահից հետո առաջացած իրավունքների եւ պարտավորությունների իրավահաջորդը:

5.5. Սահմանված ժամկետում վճարումները կկատարելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, եւ մրցույթը համարվում է կայացած:

6. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

6.1	Մրցույթի նախավճարի չափը	5 000 դրամ
6.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հատուկ հաշիվը	Հիմք 1 տեղական ինքնակառավարման բաժանմունքի դրամական - 900013145017
6.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	2008 թվականի հուլիսի 18-ը, ժամը՝13:00
6.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	Երեւան, Տիգրան Մեծի 4, ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն,438 սենյակ
6.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը	2008 թվականի հուլիսի 22-ը, ժամը՝15:00 Երեւան, Տիգրան Մեծի 4, ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
6.6	Տեղեկատվության կարգ	*(37410) 581441*
6.7	Էլեկտրոնային հասցե	*URL : //www.privatization.am*

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ 581441 հեռախոսահամարով:

ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 07.06.2007թ. թիվ 76-Ա հրամանով սահմանված՝
Պետական գույքի մասնավորեցման եւ օտարման մրցութային հանձնաժողով

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ՝ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ
ՎԱՃԱՌՔՈՒՄ Է

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. դեկտեմբերի 20-ի թիվ 1544-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի մարտենության օտարման ենթակա տրանսպորտային միջոցը

Ա/Հ	Գույքի անվանումը	Թողարկման տարեթիվը	Գնահատված արժեքը 10.10.07թ. դրությամբ /դրամ/	06.06.08թ. աճուրդի		23.06.08թ. աճուրդի		08.07.08թ. աճուրդի		23.07.08թ. աճուրդի	
				մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «ԱՍՀՕ-21213» (գր.հ. 846 LS 57)	2000թ.	936000	936000	46800	748800	37440	599040	29952	479232	23962

Ա/Հ	Գույքի անվանումը	07.08.08թ. աճուրդի		22.08.08թ. աճուրդի		08.09.08թ. աճուրդի		23.09.08թ. աճուրդի		08.10.08թ. աճուրդի	
		մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «ԱՍՀՕ-21213» (գր.հ. 846 LS 57)	383386	19170	306709	15336	245368	12269	196295	9815	157036	7852

* Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. դեկտեմբերի 20-ի թիվ 1544-Ն որոշման՝ "

Հայաստանի Հանրապետության դատական դիտարտանների դեկավարը ամուրի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո ամուրի հաղթողի հետ ծանուցված ժամկետում կնքում է առուվաճառքի պայմանագիր, դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճար՝ 180000 դրամ (նեղության ավելացված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքներ պետական գրանցման հետ կապված օրենքով սահմանված վճարներն ու տուրքը:

Սնուցումը կանցկացվի դատական (գնի աճուրդանքն) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 12:00-ին:

Սնուցումով՝ չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջող աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին ամուրի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Սնուցումը կդադարեցվի դեպքում հաջող աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Սնուցումին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ հանձնվածները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար ամուրին նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ Ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-ր հարկ) ներկայացրել.

-սնուցի նախավճարի մուտքան անդորագիրը, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտագրման հաշվին է «ՀՍՀԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը:

-աճուրդի մասնակցության վճարի անդորագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈՒՀԿ-ի դրամարկղը), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձերն իրենց գրավոր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Սնուցումին չեն կարող մասնակցել այն անձերը, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Սնուցի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Սնուցումին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհանդիսացող այն անձերը, ովքեր վճարել են ամուրի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Սնուցի մասնակիցները վաճառվող լոտին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Նախնական աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցի, տրամադրում է ֆաս:

Սնուցը վարում է աճուրդավար: Սնուցավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Տանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուտքին երրորդ հարվածը, նվազեցնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կողմից նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հայտնելով (հայտի չափով):

Վերջին անձնաբարձ գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուտքին երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից:

Սնուցավարի կողմից աճուրդի հաղթող հռչակված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր սանդուղքից 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվանցվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում՝ չի վերադարձվում եւ ամբողջ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող հռչակված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր սանդուղքից 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, արդա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Սնուցում չհաղթող մասնակիցն, ովքեր նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմումից հետո եռօրյա ժամկետում:

Գույքն զննվում է՝ Տավուշի մարզ, Դիլիջան, երիտասարդական 1 հասցեում: Վաճառվող լոտին ծանոթանալու համար զանգահարել՝ 091-490494 հեռախոսահամարով:

Սնուցի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, ցանկանալու դեպքում գնահատման ենթարկ վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել (հասցե՝ Ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-ր հարկ) հասցով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, էլեկտրոնային՝ URL: //www.privatization.am:

ՀՀ կառավարությունն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀԱՄՈԼԻՄՈՒՄ

«Մանկերգանվագի ժամանակներ»

«Եթե հանդարտ ըլլամ, չեմ կրնար գծել...»

Գրիգոր Նորիկյանը բեյրութահայ նկարիչ է: Նախնական կրթությունը (փորագրություն, յուղանկար) ստացել է Բեյրութում, առա շարունակել Եվրոպայում, 1965-ին՝ Իտալիայում, 1969-ին՝ Ֆրանսիայում: 28 տարի ապրել է Փարիզում: Ցուցահանդեսներ է ունեցել ԱՄՆ-ում, Կանադայում, Բեյրութում, Փարիզում: Վերջին ցուցահանդեսը կազմակերպվեց ամիսներ առաջ, ԱՄՆ-ում: Երեւան առաջին անգամ եկավ անցած սեպտեմբերին: Իր նկարչությանը Հայաստանում ժանոթ չեն: Իմքնատիպ մոտեցումով, բավական կտուկ, իսկական ու ճակատային դիտորոշումներով ակնեստագետ է: Հայաստան եկել է Բեյրութում տարիներ առաջ գործող «Ախթամար» տուրիստական ընկերակցության ծրագրով: Ընկերակցության ղեկավարը, մասնագիտությամբ ճեմիստ Օննիկ Գանթարճյանը հայաստանյան ուղեւորություններին հատուկ բնույթ է հաղորդում, հատկապես Հայաստան առաջին անգամ այցելող հայի մեջ հետաքրքրություն ու սեր առաջացնող իր սքենար-ծրագրերը կազմված են մեր երկիրը հրաշալի ճանաչող եւ արժեքները գնահատող առանձնահատուկ վերաբերմունքով:

Գրիգոր Նորիկյանը մեր զրույցից մի քանի ժամ անց մեկնեց, կարծում եմ հոգեպես հարուստ տպավորություններով, թերեւս ջերմ զգացողություններով: Զրույցն ընթացավ տարերային, քանի որ դժվար է նկարչի հետ (արվեստային իմաստով) խոսել ըստ էության, եթե ոչ միայն գոնե մի երկու կտավ չես տեսել, այլ նույնիսկ՝ կատալոգը: Այս զրույցը շատ ավելի ներկայացնում է բեյրութահայ մեր հայրենակցին՝ գեղարվեստի հանդեպ ունեցած վերաբերմունքով եւ տալիս ընդհանուր պատկերացում արտերկիր-Հայաստան հարաբերությունների, դրսում ստեղծագործող մարդու, արվեստագետի զգացողությունների, ակնկալիքների, վիճակի, ներաշխարհի մասին:

Արվեստում ամենակարեւորը մտածողության իմքնատիպությունը, ստեղծագործական երեւակայությունն ու զգացմունքայնությունն են, որոնք իմ տպավորությամբ Գրիգոր Նորիկյանին շատ բնորոշ են:

«Կտրել, տաղալել եւ նորը ստեղծել: Եթե չես գիտեր տաղալել, նորը չես կրնար ստեղծել, բան մը պետք է փոխվի», այսպիսի մոտեցումով է ստեղծագործում Նորիկյանը: Մեջտեղ ափոսսանքն է խոսում, որ միշտ է առաջանում, երբ լսում կամ կարդում եմ, թե որեւէ արվեստագետ իր այսինչ գործը դեռ է նետել, այրել, մի խոսքով անհետացրել է: «Բայց ստեղծագործություններ են ոչնչանում», հարցնում եմ:



Այսօր հայ նկարիչը, որ հայրենիքն կերթա, անունն ալ չփոխե նե, կոնակը զորավոր է, պետություն մը կա: Ես, որ Լիբանանեն կերթամ, ինձի իբրեւ հայ չեն ընկալեր: Ինձի հայ նկարիչ կընդունին, թե՞ պարզ նկարիչ մը: Ես ըվարած եմ, չեմ գիտեր:

- Արվեստում ազգայինը այդչափ առաջնայի՞ն է:

- Կարեւոր չէ ազգային ըլալը, մենք կազգայնացնենք ադիկա: Ամեն ինչ մեր իսկ ազգային է, մեր եկեղեցին ազգային է, մեր մյուզիքը ազգային է: Եկեղեցիին մեջ աղոթքի ատեն ազգը ինչ կապ ունի:

- Եկեղեցին արվեստին առչվո՞ն է: Ձուլ հավատը դուրս է իհարկե ազգային պատկանելությունից: Ազգային աղոթք հո՞ չենք անելու:

- Արվեստի հետ ամեն ինչ կապ ունի, մարդկությունը կապ ունի, ազգը կապ ունի, մտածելաձեւը: Իմ մասիս ինչ գրած եմ, միշտ ազգային ձեւով գրած եմ, ինչո՞ւ ազգային, մարդկային ձեւով գրեցեք: Ես հայության, հայու տառապանքը չէ, որ միայն կնկարեմ, այլ՝ մարդու տառապանքը: Լուգրողները զիս ազգայնացուցին, իրենց փափագն էր, որ ես ադանկ ըլլայի: Ես ուզածս գծած եմ, կըսեն՝ ջարդերու պատկերներ են ադոնք: Եղբայր, ո՞ւր է, հոս ջարդված մարդ չկա: Ուրիշ ազգով դիտեցեք: Իրենք, որովհետեւ խառակուսիացած մտածողությամբ կուզեն դիտել, այդ ձեւով կընկալեն. իրենց գիտնալին է: Տառապանքը միեսակ մեր ազգինը չէ, կրնա որեւիցե ազգի համար ըլլալ: Սփյուռքի մեջ մտածելաձեւը ասանկ է, գողները, թոթակիցները ամեն բան կապած են հայու տառապանքի հետ՝ իրենց գոյության իմաստ մը տալու, շարունակելու համար:

- Թվում է, թե դրսում ավելի հետաքրքիր է համամարդկային ըմբռնումներ ու մտածողություն կրել: Բայց թերեւս տեսակը չկորցնելու բնազդային, ենթագիտակցական պաշտպանական մեխանիզմն է գործում, եւ՝ ավելի սրված:

- Այո, ճիշտ է, ինչ որ ըսի՝ թե կուզեմ կործանել, ամենը պատռել, էջը դարձնել եւ սա միակ ձեւն է նոր արտահայտություն գտնելու:

«Հիշողություն»

- Թեմատիկ ստեղծագործական փուլեր, կամ շրջաններ՝ կապված Բեյրութի, երկրի հետ, ունենակավայրի, երկրի հետ, ունեցած 28 տարի Փարիզում եք ապրել:

- Փարիզ կընկալիս, թե որեւէ այլ տեղ՝ տարբերություն չունի: Իմ ներշնչումս է կարեւորը: Փարիզը գեղեցիկ է, կատարեալ ատոր մեջը, գիկ հաղար է, կատարեալ ատոր մեջը, կերթամ աղվոր մյուզեները կոչտիմ, ամենեն, պաբար մը կուտա հոգեկեսնեմ, ոչաբար մը կուտա հոգեկան: Կոնամ ուրիշ տեղ երթալ, լեռան գագաթը կենալ ու նույն ձեւով արտահայտվիլ, ավելի լավ կըլլա արտահայտումը: Երկիրը ընդհանուր պատաբար մը կուտա: Անցյալին, երբ սովետական նկարիչներ կուգային Լիբանան, կըսեի իրենց՝ դուք կոմունիզմի մեջ կատարելիզմի նկարչություն կընեք, մենք արտասահմանի մեջ՝ սոցիալիստ նկարչություն:

- Ձեր նկարչությունն ավելի ռեալիզմի՞ն է հարում, թե՞ վերացարտաբերությանը:

- Վերացարտաբերությունը շարժում մըն է, փորձառություն մըն է, տեղ մը հասավ ու կեցավ: Ամբողջը իրար խառնված է հիմա, եւ նոր բան մեջտեղ կուգա: Քաղաքականությունը չեմ ուզեր արվեստի հետ կապել, բայց երբ երկիրը աղվոր, հանդարտ երանակ մը կունենա, դուն բան մը չես կրնար արտահայտել, մոնոտոն եւ գեղեցիկ ձեւեր կփորձես գտնել: Բայց երբ կատարեցնեն, անհանգիստ կընեն, կկսիս առավել զորավոր արտահայտություն մը գտնել, ստեղծել ու վրձինդ ավելի կատաղի ձեւով հաղորդակցության դեմ, մարդու իրավունքներու համար կրնա պայքարիլ: Երբ որ հանդարտ է, կխառնես, որ անհանգստություն մեջտեղ գա: Ինձի կըսեն՝ հանդարտ է քու նկարչությունդ: Ինչպե՞ս հանդարտ կրնա ըլլալ: Եթե հանդարտ ըլլամ, չեմ կրնար գծել, բան մը ինձի կխայթե, որ նկարեմ:

- Եվ ինչ է դա:

- Եթե գիտնայի. այդ ինքն է, այդ հարցումը՝ մեծ ինքն է: Ներքին աշխարհդ, պիտի անկախ ըլլա: Անպայման բան մը կուգա, կդառնա, ինքդ կանհանգստացնե, արվեստագետը չի կրնար ըլլալ առանց ատոր: Երեւակայությունն ալ շատ կարեւոր է: Արվեստի մեջ ամեն ինչ երեւակայությամբ կսկսի:

- Հոգեւոր թեմատիկան կարծես բավականին տեղ է գրավում Ձեր ստեղծագործության մեջ, այո՞:

- Մեկ անգամ պատվեր ունեցա եկեղեցիին կողմե: Անգամ մը հայր Հարություն Պզտիկյանը ինձի խնդրեց Աստվածածին մը գծեմ եկեղեցիին համար: Միտքիկ կրնամ ըլլալ, գործերուս մեջ միստիցիզմը կա, սակայն ադիկա կապ չունի եկեղեցիին հետ: Ես այդ եկեղեցիի թեմաները, որ գծեցի, բան մը կա, որ սիրեցի:

- Ունե՞ք նոր ծրագրեր:

- Բոլորովին նոր սիստեմ մը գտա, նոր ձեւ մը, ամեն ինչ իրար-իրար կբերեմ, կտոր-կտոր, ինչ-որ միտիս մեջ կա, առաջ կոմպոզիտիոնը ավելի կլասիկ ձեւով կըլլար, հիմա ամենը կտրտում է՝ փակցված կոլաժի ձեւով, ներկ մը վրան «պատահաբար» թափված...

«Մխիթարիկ վշտացյալց»

տեսա իրականը, զգացումս եւ իրականությունը բավականաչափ մոտ էին իրարու: Երեւակայությանս մեջ էր Հայաստանը, հոս կոխեցի հողը, դպա, հարց սիրեցի, տեղ մը գացիմ, առանձնացա, ականջս դրի քարին վրա, անանկ, որ կրնա ձայն մը ելլել մեջեն: Աղվոր է՝ քարի մեջեն երգեցողություն արթնցնել, լսել: Գեղեցիկ բաներ են ասոնք:

Դարաբաղ ալ գացիմ, մեծ տպավորություն ունեցա, ինչ մարդ կա Դարաբաղի մեջ, ամայություն կա, բայց գեղեցիկ հաղորդներ կան, այն մարդիկը, որ ճամփան տեսա, զիս տպավորեցին: Արտաքինով ուրիշ տեսակ են՝ հարթանդամ են, անցյալ հոմնական ժամանակները կիհեցնեն: Մեկ բան կըսեմ, այդքան տարածություն ունիմ, պիտի լեցնեմ այդ տարածությունը:

Մենք մեր պրոբլեմները ունինք արտասահմանի մեջ, դուք՝ ձերը՝ հայրենիքի մեջ: Ես հոս իբրեւ նկարիչ կու գամ, եթե գնահատեն, արժանի տեսնեն, ինձմե պիտի ուզեն, որ նկար նվիրեմ: Ամենը կհարցնեն «Գործ մը նվիրա՞ծ ես Հայաստանին»: «Ինչո՞ւ պիտի նվիրեմ», կհարցնեմ: «Հայ ես, դուն»: «Եղբայր, գնե, տար դո՛ւն նվիրե»: Հայրենիքը մեզմե բան մը կսպասե: Բայց մենք կուզենք մեզի արժեք տան, մենք ալ մեր արժեքները իրենց տանք: Ես միանակ կարիք, իմ նկարները որո՞ւն պիտի ձգեմ: Մարդը տարիքը առավ՝ նվիրատվություն կուզե ընել, ըսենք հանդակագործ մը կուզե նվիրատվություն ընել, հանդակ մը ծանր է, ինչպե՞ս պիտի ուղարկե: Ուրիշ բան մըն ալ կա. մարդը կրնա ըսել՝ ես ինձմե բան մը ուզեցի՞: Պիտի ճանչնան արվեստագետը, կազմակերպություն մը հայրենիքին մեջ պիտի ընե այդ գործը: Նվիրելու, տալու ձեւը կա:

Գլենդելի մեջ ինձի ըսին՝ միտ ունինք թանգարան մը շինելու: Ըսի՝ չըլլա անանկ սխալ ընեք: Ամամանակ դուք հոս եք: Եթե պիտի շինեք, այդ դրամը ավելի արժանի կըլլա Հայաստանի մեջ գործածել:

Շարունակ

ՄԱՔՐՈՒՀԻ ԲԱՐԱՆԵՏԻՆ

Մեկնաբան

ՈՒՐԵՄՆ ՓՈՐՁԵՆՔ

Բնական է, որ մարդը ինչ-որ գաղափար իրագործելով՝ որոշակի նպատակ է հետապնդում: Նույնհան բնական է, որ յուրաքանչյուր նոր գաղափար ունի ոչ միայն իր կողմնակիցները եւ հակառակորդները, այլեւ աջակցում է առնչվող միջավայրը:

Լիովին կիսում եմ «Անշուշտ փորձանք չէ, բայց...» հոդվածի մտահոգությունը. ի տարբերություն անկախության առաջին տարիների, հայերենը այսօր իսկապես անտեսված է: Օտար լեզուները անկասկած պետք է սովորել եւ իմանալ, եւ թեեւ պետք չէ տրտնջալ դրանց նկատմամբ հանրության ուշադրության պատճառով, սակայն մեզ համար ամենակարեւորը հայերենն է: Կարծում եմ, որ կառավարությունը, հեռատեսությունը, մամուլը պետք է հատուկ ուշադրություն դարձնեն լեզվին, եւ ոչ միայն խոսքով, այլեւ տարբեր դրամավորվող ծրագրերով: Այդ առումով լավ օրինակ են Ռուսաստանը եւ Ֆրանսիան:

Սակայն ժամանակավրեպ է հոդվածագրի հետեւյալ տրամայությունը. «Այսօր հայերենը դժվար թե որեւէ պահանջարկ ունենա»: Մինչեւ անկախությունը հայերենը ընդամենը ԽՍՀՄ-ի մի փոքր ժողովրդի լեզու էր: Քիչ օտարազգիներ կային, որոնք ցանկանում էին սովորել հայերեն: Բայց այսօր մեր ժողովրդի եւ հայերենի կարգավիճակը փոխվել է: Մենք անկախ պետություն ենք, ազատորեն ճանապարհորդում ենք, որտեղ էլ որ լինենք՝ երկրի ներսում, թե սփյուռքում, ազդում ենք անգամ ԱՄՆ-ի նախագահի ընտրության վրա: Եվ տարեցտարի ավելանում է այն մարդկանց թիվը, որոնք այս կամ այն պատճառով կարիք ունեն սովորելու հայերենը՝ մեր բոլորիս սովորող արտասահմանցի ուսանողները (որոնց մինչ այս ռուսերեն էին սովորեցնում), դեսպանությունների աշխատողները, հայությունը «վերականգնել» ցանկացող նեռգաղթած հայրենակիցները, սփյուռքից դեպի երկիր ձգտող երեխաները: Եվ հենց նրանց համար են «համապատասխանեցված» սեղմավեպերը, այլ ոչ թե մեր պատգամավորների կամ դպրոցականների համար (թեեւ մեր ֆաղաքացիների որոշ մասին չէր խանգարի գոնե համառոտաբար կարդալ դասականներին): Սեղմավեպը ուսումնական գրականություն է «հայերենը որպես օտար լեզու» սովորողների համար: Եվ, հետեւաբար, պետք է շարադրված լինի պարզ, հասկանալի, գեղարվեստական «ավելորդություններից» զերծ լեզվով եւ ծանրաբեռնված չլինի, ասենք, Քանաթեռի բարբառով. այդտեղ պետք է ժամանակակից արեւելահայերենով եւ սահմանափակ բառապաշարով շարադրված լինի ամենակարեւորը՝ մեր վեպերի սեղմ բովանդակությունը: Հայերենը սովորելու համապատասխան ձեռնարկներ կան, սակայն չկան դյուրին կարդացվող «արդարացված» գրքեր, որոնց կարդալու միջոցով պետք է ամրապնդվի հայերենի իմացությունը: Այն պատճառը, որ սեղմավեպերը մինչ այս չեն հրատարակվել, հավանաբար եղել է հայերենի, որպես մի աննշան փոքր ժողովրդի լեզուն սովորելու ցանկության պակասը օտարազգիների եւ հայերեն չիմացող հայերի կողմից: Այսօր մենք այլեւս այդ ժողովուրդը չենք: Եվ հրատարակելով սեղմավեպերը՝ հույս ունենք, որ նոր պայմաններում դրամի կխթանեն այդ ցանկությունը: Միգուցե հետո էլ առաջանա ամբողջական վեպը կարդալու ցանկությունը:

Ինչ վերաբերում է արեւմտահայերենից արեւելահայերեն (եւ ընդհակառակը) ամբողջական թարգմանություններին, արդա ոչ մեկը, ոչ էլ մյուսը սրբազան կով չէ, եւ եթե արեւելահայերեն կարդացողի համար անհասկանալի է արեւմտահայերեն գրված գրի բովանդակությունը (եւ ընդհակառակը), արդա պետք է թարգմանել, որպեսզի հասկանա: Ի վերջո, թարգմանությունը անհասկանալի լեզվով գրված գրի բովանդակության ներկայացումն է հասկանալի լեզվով՝ իհարկե պահպանելով գեղարվեստական բոլոր արժանիքները, բայց դա այլ խնդիր է: Ի դեպ, նշեմ, որ «Անշուշտ փորձանք չէ, բայց...» հոդվածի հեղինակը աղավաղել է իմ միտքը. ըստ իս՝ գիրքը բովանդակություն է «նախ եւ առաջ», այլ ոչ թե «միայն»: Ասում են, որ անգլիացիները մեզ նախանձում են, որովհետեւ Շեքսպիրի երկերի հայերեն թարգմանությունը գրված է ժամանակակից լեզվով եւ, ի տարբերություն բնագրի, հասկանալի է ժամանակակից մարդուն: Միգուցե եւ Վարուժանը, եւ Դուրյանը, եւ Շահնուրը կինչեն նորովի եւ նոր շունչ կտանան Շեքսպիրի թարգմանության դեպքում: Ի դեպ, պարզվեց, որ առաջարկությունս այնքան էլ նոր չէ. ձեռքիս են Պոլսում 1902 թ. արեւմտահայերեն հրատարակված Հ. Թումանյանի «Փարվանան», եւ 1912 թ. հրատարակված «Շունն ու կատուն»:

Այն օրուանէ մինչեւ այս օրն ալ
Շունն այդ բանը կրնայ մոռնալ.
Որեղ կատուին որ դպատահի,
Իսկոյն վրան դիտի նետուի,
Վրան նետուի, վրան հարձ
Ու իր մորթը ետ դպահանջէ.
Իսկ սեւերես կատուն յանկարծ
Ետ կը դառնայ ու բարկացած
Ֆըշ-ֆշ մը կ՚ընէ, իբր թէ նոր եմ
Տրցած տուեր, որ դեռ կարեմ:
Գեղեցիկ է, չէ՞: Ուրեմն փորձենք:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՂԱԲԵԿՅԱՆ,
«Գիտակ» հրատարակչության տնօրեն

Իսկ ո՞ւր է գրողի հեղինակային իրավունքը

Շարունակում ենք հեռակա երկխոսությունը «Գիտակ» հրատարակչության տնօրեն պրն Ավ. Աղաբեկյանի հետ՝ սեղմագիր վեպի առիթով: Վերեւում հրատարակելով մեզ ուղղած նոր երկրորդ անդրադարձ-գրությունը ներկայացնենք մեր մի քանի նկատառում-դիտարկումները եւ բաստերագծ Վարդիկ Գրիգորյանի արձագանքը:

Կարծում ենք՝ ազատությունը լավագույն վիճակն է ինքնադրսեւորման-ինքնարտահայտման համար՝ թե անհատի, թե ժողովրդի համար: Դրանց որակները պայմանավորված են տվյալ միավորի գիտակցական վիճակով ու ներքին կազմակերպվածությամբ: Թե ինչ որակներ դրսեւորեց հայ հանրությունը հետանկախության շրջանում՝ յուրաքանչյուրը թող ինքը դատի: Ռուսերենի գերակայության շրջանում լայն տարածված ուսաբանությունը հատենայն դեպս այդքան չէր վտանգում հայոց լեզվի ինքնությունը, որքան անկախության շրջանում հայերենի հանդեպ մեր իսկ գործադրած բարբարոսությունները: (Ի դեպ, օտար լեզուների իմացությունը հաճառում ենք շատ անհրաժեշտ եւ այժմեական հարց): Բայց միաժամանակ վստահ չենք, թե իր իսկ բնօրանում նկատացած լեզուն ունակ կլինի օտար հետաքրքրություններ իր հանդեպ առաջացնել: (Զանազան դրդապատճառներով եւ անհրաժեշտությամբ հայերենն ուսանելու օտարների անհատական ցուցումներ միշտ էլ կարող են լինել: Իսկ առհասարակ, ինչպես նախկինում, նաեւ այսօր աշխարհի տարբեր հայագիտական կենտրոններում եւ նշանավոր համալսարանների հայագիտական ամբիոններում հայերենն ուսումնասիրվել է օտարների կողմից որպես գիտական հետաքրքրություն: Թեեւ, անշուշտ, տակավ պայմանավորված են նաեւ անկախ Հայաստանի առավել «ակտիվ» միջազգային կարգավիճակով):

Շատ միջազգային փորձագետների, մասնագետ-ուսումնասիրողների, ոմն արդարացի աշխարհում առավել տիրապետող են լինելու անգլերենը, չինարենը եւ իսպաներենը, մնացած լեզուների գործառույթները սահմանափակվելու են տեղական երկրների սահմաններում: Այնպես, որ ինչպես Տաճաս ավագ քհն. Դավիթյանն էր ասում «Վէմ» ռադիոկայանով ունեցած մի զրույցում, հայերենը հարկավոր է գրողներ մեր ազգային ինքնության համար եւ դա պետք է անել գրաբարի ուսումնասիրությամբ եւ դասական գրականության քարոզչությամբ: Սեղմավեպի վերաբերյալ գրականությունը որքանով է նպաստելու հայերենի գրագիտությանը - ժամանակը բան է: (Սեղմավեպի փորձերը մեզանում արվել են նաեւ նախընթաց շրջանում՝ հայերից Հ. Աբովյանի «Վերք Հայաստանի», օտարներից՝ Սերվանտեսի «Դոն Քիխոտը», Ռաբլեի «Գարգանտյուա եւ Պանտագրուելը»): Գուցե այսօրվա անընթեռնելիությունը սերնդին ավելի հարմար տարբերակ է (օտարներին մի դեպի հանգիստ թողնենք): Շատերը միտված են կարծելու, որ սեղմավեպի «ժամանակը» դարձյալ հայոց լեզվի ինքնության տեսանի փոփոխությանը, երբ հարցերի մի մասը գրականություն առակն եւս ընդգրկեց: Բազմաձայն մանկավարժական փորձով մի ուսուցչուհու կարծիքով սեղմավեպը ի սկզբանե դասադարձված է՝ դպրոցական ծրագրերին չբավարարելու պատճառով: Սեղմավեպ (օրինակ Ռաֆֆու «Սամվելը», կամ Դեմիրճյանի «Վարդանանքը») կարդացած աշակերտը դժվարանում է պատասխանել բազմաթիվ հարցերի: Դասախոսներից ոմանք նույնպես դեմ են դրան, բայց սեղմավեպի միջազգային փորձը նկատի առնելով, հանգիստ են վերաբերում հարցին եւ հույս ունեն, որ գոնե այս կերպ նոր սերունդը տեղյակ լինի անցյալ դարի հայ վիպագրությանը:

Մեր ավագ գրողներից մեկը սեղմավեպը համարում է գրականության կործանումը, որը ոչ մի կերպ չի արդարացվում, որովհետեւ գրականությունը ամբողջությամբ գեղարվեստական մանրամասների վրա է կառուցված, եթե պիտի հանվի, թողնվի կմախքը. դա գրականություն չէ, գրականության մահն է: Տրտսոյը մի արտահայտություն ունի, արվեստը , «կտրեկտրե»-ի վրա է, ասում է, դա սեղծում է մթնոլորտ, արվեստ, եթե դա հանես, կմնա չոր կմախքը»:

Արվեստից զատ, սակայն, այս հարցում անկարեւոր չէ նաեւ հեղինակային իրավունքի պարագան: Մենք ծանոթացանք Շ. Շահնուրի «Նահանջը առանց երգի» 78 էջանոց գրքույկին: Ընթերցանության հետաքրքրությունը կարելի է պայմանավորվել վեպի թեմատիկ արդիականությամբ եւ սյուժետիկ գրավչությամբ, իհարկե, նաեւ ուսուցչուհու վարպետ հանձնարարությամբ: Սակայն որտե՞ղ փնտրել Շահնուր գրողի առանձնահատկությունն ու արեւմտահայերենին բնորոշ նրա լեզվամտածողությունը, իր բուն միջավայրը (թեեւ Թումանյանի «Շունն ու կատուն» գործի ներկայացված արեւմտահայերեն տարբերակը, իրոք, գրավիչ է):

Կարելի էր իրեն վերաբերություն ընտրել, օրինակ, «Նահանջը առանց երգի» վեպը՝ ըստ Շահան Շահնուրի: Խնդիրն ունի նաեւ իրավաբանական կողմ: Շահնուրի սեղմավեպի հեղինակ-հրատարակիչները, օրինակ, մտածել են արտոնության համար դիմելու նրա կտակակատար, Փարիզի «Յառաջ» օրաթերթի գլխավոր խմբագիր Անիկ Մանսկյանին: Գեթ հարցրել են նրա կարծիքը:

Հարգարժան հրատարակիչը իր գրության «Նախեւառաջ» բառի փոխարեն մեր կողմից «միայն»-ի գործածումը համարում է հեղինակային մտքի աղավաղում: Լավ: Իսկ որքան «Նախեւառաջներ», էլ չասած ամբողջական գլուխներ, հատվածներ, բառեր եւ արտահայտություններ են դուրս մնացել Ռաֆֆու, Դեմիրճյանի, Աբովյանի, Շահնուրի վեպերից: Իսկ այդ մարդիկ իրենց հեղինակային մտքի աղավաղումների դեմ ոմանք բողոքեցին: Ջո՞ւր են այդման էջեր գրել: Սա էլ հարց է, չէ՞:

ՍԵՒՈՒԱՏ ԲԱԴԱԼՅԱՆ,

Մի հայտարարի բերելու ցանկությամբ

Նախապես ասեմ, որ գրական սեղմավեպերի միտքն ինձ երկար է զբաղեցրել, ավելի ճիշտ, այն օրվանից, երբ առաջին անգամ հաղորդվեցի դրանց: 1973-ին արտասահմանյան շրջագայության ժամանակ, Բեռլինում, վերելակում ծանոթացա անգլիացի նշանավոր հասարակական գործիչ Ալֆրեդ Դանմանի հետ: Դուրս գալով վերելակից, ուղեւորվեցինք ճաշարան եւ յուրաքանչյուրս զբաղեցրինք մեզ հատկացված տեղը՝ ընդարձակ սահում: Վերջում, երբ պատրաստվում էի վեր կենալ՝ թիկունքիս մեկը պարզեց ձեռքը եւ առջեւս դրեց շատ գունեղ ու գրավիչ մի ֆանի գիրք: Անգլերեն էր. Շեքսպիր: Վերելակի ծանոթ էր. մտածել էր հաճելի բան անել: Իսկապես հաճելի էր: Շատ թերթելով եւ դրամատիկական երկխոսության չհանդիպելով, ես տարակուսեցի եւ Դանմանը բացատրեց, որ դա դեռահաս ընթերցողին եւ օտարազգիներին Շեքսպիրին ծանոթացնելու եւ լեզու սովորեցնելու միտում ունի: Իհարկե, այդ գրքերը մանագետիս այնքան էլ չհետաքրքրեցին եւ ես նվիրեցի Ռուբեն Զարյանի շեքսպիրյան գրադարանին, բայց մտմտոցը մնաց ու մի քիչ էլ բարի նախանձ, թե մեծ ազգերն ինչե՞ր են անում՝ իրենց հոգեւոր հարստությունն օտարներին հասցնելու համար: Այսօր արդեն մեզ մոտ էլ են գտնվել մարդիկ, որոնք արդեն գործնականորեն խորհում են ազգային գրական երկերը սեղմ մատուցելու մասին: Առաջին հայացքից՝ գրավիչ միտք է, բայց իսկույն էլ սուզվում ես մտահոգող աղերսվող խնդիրների մեջ: Սուզվում ես ու անմիջապես ցավ զգում, իսկ այդ սեղմագրության մեջ ինչ է մնալու հեղինակից: Հեռու չգնանք: Ես չեմ տեսել-կարդացել Շահնուրի վեպի սեղմագիր տարբերակը, բայց, մանավանդ արեւելահայերենով «թարգմանվելու» պարագայում ինչ պատկերացում կարող է ընթերցողն ունենալ հեղինակի լեզվառնական առանձնահատկությունների մասին. ասենք, **ինչ-որ բան բնորոշ, որոշ, ոչ մեծ հաստվածներով մատուցվի**: Գուցե այս կերպ «թարգմանիչը» կամ վերապատմողը հնարավորություն ունենա հեղինակին հարազատ ոճաբանությամբ պիտիպատել: Չեմ կարծում, թե դա առանձին բարդաբանություն ներկայանա ընթերցողի համար: Չի բացառվում, որ տվյալ հատվածի բովանդակությունը նաեւ մատչելիորեն շարադրվի: Բոլոր դեպքերում գործը նոր է սկսված, բայց կամա-ակամա իմ սերնդի մարդկանց խորապես մտահոգում է. ինչո՞ւ, ինչի՞ց այսքան անընթեռնելիություն դարձավ իմ ժողովրդի նորագույն սերունդը: Ես հիշում եմ, թե ժամանակին գաղափարագեղարվեստական որոշիչ՞ ուղղվածություն ունեին մեր ռադիո եւ հեռատեսության հաղորդումները: Գեղական մարդկային-բարոյական-հոգեւոր արժեքների պահանջն ու հարգությունն էր, եւ մարդիկ հասունանում-ձեւավորվում էին այդ տրամադրությունների միջավայրում: Ինչո՞ւ անցնողից, հնից չպահպանել լավագույնը: Հիմա իմ միտքս նակեց մի հեռավոր հիշողություն: 19-րդ դարի երկրորդ կեսերին, ավելի ճիշտ վերջերին թուրք սուլթանը հասուկ Ֆրանսիայից հրավիրում էր պարոդ-պարոտիիների եւ ամենուր հարգում «բալո երթալու», պարաոյանդեսներում լինելու ընտելություն: Մենք գիտենք, թե դրանք ինչ ազդեցություն ունեցան բարերի վրա, հանիցս ծանակումի առիթ դառնալով հայ դեմոկրատական մամուլի եւ հատկապես Պարոնյանի, Օշականի եւ այլոց համար... Այն ժամանակ սուլթանին հարկավոր էր ստեղծել սոցիալ-քաղաքական հասունացող որոշակի խնդիրներից... Իսկ հիմա՞, երբ բոլորս ջանում ենք մեր նոր պետությունն ստեղծել ոչ միայն ժամանակի հատարակական-քաղաքական եւ մշակութային համարժեք չափումների ու հրամայականների մթնոլորտում, միաժամանակ պահպանելով ազգային հոգեբանության ու մտածողության լավագույնը՝ ինչո՞ւ բավականաչափ հեռատեսություն հանդես չենք բերում... Պարզից էլ պարզ է, որ հարգչական բոլոր միջոցներն են ձեռավորում մարդկային հոգեբանությունն ու նկարագիրը. ուրեմն ինչո՞ւ է մշակույթ հասկացության տակ որոշ տնօրենների պատշաճ թվում միմիայն թեթեւ շոուն, սուտ ճիշն ու խանդավառությունը, այն, որ հեղեղի պես թափվում է մեր փոքր էկրաններից. լինի դա «թեժ տասնյակների», «32 աստ»-ակուսքի, երգիծանքի հավակնությամբ ստեղծված եւ վարվեցուցիչ կերպով շահարկված «Բերնադ շոուի» անունով: Հիշում եմ, թե ինչպես էինք օրերով ու շաբաթներով ճկռում հաղորդումների վրա, որպեսզի դրանք հանկարծ փուչ ու դատարկ տեղ չունենան: Մեր թերթի այսօրվա «աստղերին» արդյոք հուզո՞ւմ են այս եւ նման հարցեր: Պետք է որ հուզեն, ճանքի վերջերս վարչապետի խոսքում էլ պատշաճորեն ինչեց՝ գործել ոչ թե զորբայությամբ, այլ գիտելիքներով: Իսկ ինչ վերաբերում է ազգային գրականության սեղմավեպերին՝ դա շատ լուրջ խնդիր է եւ թվում է՝ պետք է խուսափել հախուռն գործելակերպից:

ՎԱՀԱՆ ԳԵՐՇԳՈՐՅԱՆ,
Հետերագետ, արվ. վաստ. գործիչ

Դրսից

ՀԻՆ ՀԵՆՔԵՐԻ ՎԻՐԱԲՈՒՅԺԸ

Հայկական հանդերձներ դյուսելդորֆյան կառույցներին

«Իմ տունն իմ ամրոցն է» անգլիացիներին վերագրվող ասույթը մարդիկ իրավամբ սեփական խրճիթում էլ կարող են կրկնել, բայց այս դեպքում, անձնական փորձից գիտեմ, 100-ամյա ավերակները նրա «ոլլասիկ վիրահատության» արդյունքում վերածվում են իսկական ամրոցի:

«Իմ նախագծածն ու կառուցածն այնպիսի ավարտուն տեսք ունի, որ առանց վարանելու ցանկություն ունենամ հենց այդ տանն ապրել», գեղեցիկ ձեւ ու ամուր որակ փնտրելու իր ձգտումն այսպես պարզ է ձեւակերպում դյուսելդորֆաբնակ մեր հայրենակիցը՝ 46-ամյա ճարտարապետ Ալբերտ Սեփնյը:

Նրա մասին կարելի է ասել՝ ամեն ինչ ունի. ինտելեկտ, լավ մասնագիտություն, խարիզմա, ֆինանսներ, հավատարիմ ընկերներ:

Մասնագիտական հաջողություններն են բաս, ֆինանսները եւս, ու դրանց հարաճուն՝ նաեւ բաժնաստացողներն ու սեփական վայրէջքը հենց նրա՝ հաջողակի վերելքով պայմանավորողները:

Այդպիսի ասպիրանտ է կյանքը՝ բարձրանում-իջնում ես, բայց վերելքի ճանապարհին, ինչպես իմասունները են պնդում, կարեւոր է չմոռանալ նրանց մասին, ովքեր դեռ սողոսում են: Նկատել եմ՝ միտք ունի նաեւ նրանք, ովքեր հենակ են փնտրում: Իր չունեցած ժամանակի մեջ, զարմանալի բան է, որպես առաջնահերթություն միտք տեղավորում է ուրիշի հոգսերը հոգալու պարտականությունը: Դրանից մասնագիտությունը երբեմ չի տուժում՝ ընտանիքը միգուցե, որ սակայն համակերպվել է համբերատար, խոնարհ իր կարգավիճակին:

Լավ ձայն ունի: Թիկնեղ ու առնական նրա ֆիզիկական կերպը ենթադրել է տալիս, թե երբ հանձայնի երգել, խորխոչ, հաղթական ոիթմեր է ընտրելու: Տխուր մեղեդիներն ամուր կոված են հոգու լարերին, ինչպես հայրենիքի փոխարեն ծննդավայրի պատկերները, մոր ինքանքի փոխարեն մեծ մոր հոգատարությունը:

Հոր կողմից ասորի, մոր կողմից հայ Ալբերտ Սեփնյը ծնվել, մեծացել է Պոլսում, 18 տարեկանում եկել է Գերմանիա, ճարտարապետություն ուսանել Հագենի համալսարանում: Իր դեկավարած ճարտարապետական planen + bauen (նախագծել+կառուցել) գրասենյակը հաստատել է հիմնովին վերանորոգել Դյուսելդորֆի մոտ 30, Քյոլնի 3 շենքեր, իսկ դրանցից 10-ին հայկական հանդերձ հագցրել:5-6 տարի է արդեն, ինչ Հայաստանից ներկվող տուֆը, տարվերտիցը, բազալտը, ֆելզիտը երանգավորում են Հյուսիս Հռենոս Վեստֆալիայի մայրաքաղաքը: Ճարտարապետի բաստատությամբ՝ պատճառ առաջին հերթին հայկական քարի գեղեցիկ երանգներն են:

2008-ի ապրիլին Ալբերտ Սեփնյին երկրամասային շինարարության նախարարությունն ու ճարտարապետների պալատը արժանացրին մրցանակի. բնակության համար ոչ պիտանի տարածները բնակելի դարձնելու նպատակ հետապնդող հիբրիդ մրցույթում՝ երբեմնի հանրախանութը 2007-ին փեղ բազմաբնակարանների վերափոխելու Ալբերտ Սեփնյի ճարտարապետական մտահղացումն ու իրական արդյունքը հեղինակավոր մասնագետներից կազմված ժյուրիին երկմտելու առիթ չեն տվել:

Առաս լույս, ընդարձակ տարածքներ, հսկայ գեր, ամուր կառուցվածքներ, բնական նյութեր՝ փայտ, քար... գույնը, երանգը գտնելու հրաշալի հմտություն:

Դյուսելդորֆի «ոլլասիկ վիրաբույժը» հինն արդիականացնելու եզակի զգացողություն ունի, թուղթուժաթիի պարտադիր սեւագրությունը հաճախ փոխարինվում է բանավոր բացատրությամբ, որ շինարարներին զարմանք պատճառելուց բացի պարտադրում է գերկենտրոնացման: «Մի քանի ուղեղ ունի», հիշում եմ մեր զրույցում այսպես դժգոհեցին շինարարները: Պերֆեկցիոնիստ է. սա ափխասակիցների ու նաեւ շրջապատի հետ բախման ամենահիմնական կետն է, բայց եւ ամենասոսկալ ճանապարհը նրա մասնագիտական հաջողության:

Գերմանացու համար ավելի հետաքրքիր է հենց սկզբում մասնագիտական հավաստմամբ ձեւավորել ու հավատարիմ մնալ դրան. միգուցեն նախ ճանապարհ պիտի անցնի. առաջին տարիներին չմոռանալով սեփական հնարավորությունները՝ նախ ֆինանսներ կուտակի, հետո ճանապարհի գեղեցիկն ու փորձի դրանով իմաստավորել իր ստեղծածը, ասում է պարոն Սեփնյը պատմությունների զերծ մեր զրույցում: Մեր հաղորդակցության լեզուն մեր երակներում հոսող երկու հնագույնները չեն՝ նորագույն գերմաներենն է, որի տարածման սեփական եսի պատմությունները նահանջ են ապրում՝ դիմացինին լսելու ընդգծված ուշադրությունը գերակա դարձնելով:

Մասնագիտությունը նվիրվածությունը հավատար արտահայտություն է գտնում հայկական համայնքային աշխատանքում, որ տեսակի ժամանակ էաս ակտիվ մասնակցություն ուներ՝ հատկապես մշակութային ձեռնարկներ կազմակերպելիս, պարտաճանաչ ներկայանում էր նաեւ եկեղեցական երգչախմբի փորձերին: 3 տարի առաջ համայնքային ակտիվ գործունեությունը գնահատելով՝ Ամենայն հայոց կաթողիկոսի ձեռամբ Ալբերտ Սեփնյին հանձնվեց ս. Սահակ ս. Մեսրոպ շքանշանը:

Գեղեցիկ իրականություն դարձնող մասնագիտությունի՞ց, թե՞ սփյուռքյան փորձառությունից է, որ համարձակ որոշումներ կայացնելու վճռականությունը նրա մեջ նահանջ չի ապրում: Այսպես՝ 3 տարի առաջ բարեկամություն սկսեց իրենց պատյանը դժվար բակող խլյնաբնակ մի ընտանիքի հետ ու կնոհայր դարձավ փոքրիկ Սեւան-Պետրոսին, ով գեղասպանության հետեւանքով բռնի բդացած այդ հայ ընտանիքի շառավիղն է:

Առաջինը լինելու ցանկությունը, բնական է, միտք կա, բայց ավելի հաստակ ուղղվում է, երբ նվիրատվության առիթ է լինում: Գյուլբենկյան ազգանվանը մոր կողմից ունեցած առնչությունն է միգուցե նրա երակներում հիշեցնում բարոյական պարտքի մասին՝ «առիթը ներկայացել է օգնելու՝ նեցուկ եղիր» ձեւակերպումը պարտապան ու պարտատեր բառերի տեղը խառնելով իրար:

Հայրական ավիշն էլ չի դադրվել. Հվեդիայում տարիներ առաջ նրա ֆինանսական ջանքերով հիմնվեց ափխարհում գոյություն ունեցող արամեերեն 7-րդ Suroyo TV հեռատատեսությունը:

Ասում է՝ երբ իմնություն ունեմ՝ հայկական, ասորական, գերմանական:Չգիտեմ՝ տարբերությունն ու հյուրասիրությունը, բնատուր խելքն ու ճշմարտության տեսական որոնումն ավելի շուտ հայկական, թե՞ ասորական գեներին վերագրել (միգուցե՝ երկուսին էլ հավասարաչափ) , բայց մի բան հաստատ է՝ նրա վարագծում ամուր դրոշմ դրած կարգապահությունն ու ճշտապահությունը գերմանական նվերներ են: «Շատ սիրում եմ Գերմանիան, բայց միտք հիշում եմ, որ միգրանտ եմ», ասում է:

Երբ իմնություն, բայց մեկ հայրենիք՝ Հայաստանի ամեն քար, ամեն գյուղ ու շեն անգիր գիտեն նաեւ Ալբերտ Սեփնյի ընտանիքի անդամները: «Հաճախ ոիթի գնանք, թե չէ մեր տնկած ծառերը կչորանան», ասում են դրացիները:

Ալբերտ Սեփնյի ունեցած ամենամեծ կապիտալը նրա հրաշալի ընտանիքն է. ժամանակակից ճարտարապետության վառ նմուշ է նրանց՝ առաս լույսով, հայկական մոխրաթանաքագույն տուֆով, հայ արվեստի ստեղծագործություններով ձեւավորված դյուսելդորֆյան տունը, որ միտք հյուր կա՝ ափխարհի թե արեւելյան, թե արեւմտյան կողմից, թե հյուսիսից, թե հարավից: Ու այդ տան կիսապատերով բաժանված ընդարձակ տարածքի ծկուն սյուները՝ իգական հատվածը, այնքան հեռամուտ է, որ հյուրն հանկարծ չդադակսի: Մատուցվող ճաշերը, որ անզուգականը պարսկահայ գեղեցկուհի կնոջ՝ Շաֆեի բուրավետ բրնձով փլավն է, պարտադիր հյուրասիրության մի բաժինն են, երկրորդում՝ անոթյանն մշակութային ծրագիրն է՝ Ալբերտը հաճախ է երգում, մեծ դուստրը՝ Նաիրին մասներով «տոյում» է դաշնամուրը, ու Բաբաջանյանի մեղեդին դառնում է մեր ականջելու օրը, միգնելը՝ էդեսսան, որ իր ջութակի նման փխրուն հոգի ունի, նաեւ լավ պարում է , իսկ փոքրիկի՝ Նիլայի հետ հյուրերի համար ներկայացումներ են բեմադրում:

«Իմ տունն իմ ամրոցն է», համոզված եմ՝ խոստովանում է նաեւ մեր ընթերցողներին արդեն ծանոթ ճարտարապետը՝ տեսնելով, որ իր ամուր կառույցի ընտանեկան հենասյուներն են կայուն:

ԼՈՒԻԶԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Գողանալը հեշտ է, գողոնից ձերբազատվե՞լը

«Ազգ» փետրվարի 13-ի եւ 20-ի համարներում տեղեկացել էր դարի կողոպուտը համարվող Ցյուրիխի թանգարաններից մեկում իրականացված 4 արժեքավոր կտավների հանդուգն հափշտակման եւ մեկ շաբաթ անց դրանցից 2-ի հայտնաբերման մասին: Անդրադառնալով թեմային, ***ՄԻԼՏՈՆ ԷՍՏԵՐՈՒԸ*** *(Ամանդա լին Գուանկի համագործակցությամբ) գրում է «ARTnews»-ի ադրիլյան համարում:*

Այն բանից հետո, երբ դիմակավոր երեք հանցագործներ զենքի սպառնալիքով Ցյուրիխի մի թանգարանից անցյալ փետրվարին հաջողությամբ դուրս բերեցին իմպրեսիոնիստների 4 գլուխգործոցներ (163 մլն դոլար արժողությամբ) ոստիկանությունը հայտնեց, որ կողոպտիչներից մեկը գերմաներեն էր խոսում սլավոնական զգալի շեշտադրությամբ: Դրանից 4 օր առաջ Ցյուրիխի մերձակա խաղաքարերից մեկում գողացվել էր 4.4 մլն արժողությամբ Պաբլո Պիկասոյի երկու կտավներ: Կարդ ուներին այդ 2 կողոպուտներն իրար հետ: Ոչ էր այդ սլավոնական շեշտադրությամբ խոսող կողոպտիչը: Նա՞, որ ութ օր հետո վերադարձրեց 4 գլուխգործոցներից երկուսը (Կլոդ Մոնեի «Կակաչի դաշտ Վետեյնեի մոտ» (1879 թ.) եւ Վան Գոգի «Ծաղկող շագանակենու ճյուղեր» (1890 թ.) կտավները այն բանից հետո, երբ խաղարի հոգեբուժարանի տարածքում կայացած սպիտակ ավտոմեքենայում հայտնաբերվեցին դրանք, թե՞...

«ARTnews»-ի այս համարը տպագրության հանձնելու պահին հանցագործները դեռ չէին հայտնաբերվել: Ոչ էլ մյուս երկու կտավները՝ Էդգար Դեգայի «Կոմս Լրոմիկը եւ նրա դուստրերը» (մոտ. 1871 թ.) եւ Պոլ Սեզանի «Կարմիր Ժիլետով տղան» (մոտ. 1895 թ.):

Կորսված կամ գողացված արվեստի գործերի գտնվելու մասյան տեղեկություններով Դեգայի եւ Սեզանի կտավներից կորած կամ գողացված են համարվում համապատասխանաբար 79 եւ 52 գործեր: Պիկասոն գլխավորապես 574 գործերով: Վերոնշյալ 4 կտավները գողացվել էին Ցյուրիխի «Էմիլ Գ. Բյուլլե հավաքածու» հիմնադրամից, որտեղ ցուցադրվում են նաեւ Ռենուարի, Գոգենի, Մանեի եւ Պիկասոյի գործերը: Բյուլլեն, որ վախճանվել է 1956 թվին, համարվում էր Շվեյցարիայի արվեստի ամենակարեւոր հավաքողներից մեկը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նա եմաշխարհային պատերազմի ժամանակ նա եմաշխարհային պատերազմի ժամանակ նա եմ

Գրքերի տեսություն

Ներկայացնում է ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

Վահե Քաջա. «Արարչի ութերորդ օրը գիշատիչների խնջույքը»

Երեւան, «Լուսաբաց» հրաս., 2006, 146 էջ:

Վահե Քաջայի վեպերն ու վիպակները վաղուց են հայտնի հայ ընթերցողին՝ դեռ այն ժամանակ, երբ էլեն էին ծանոթ էմիստենցիալիզմի գրականությանը: Վահե Քաջան Ֆրանսիայում հանրաճանաչ արձակագիր է՝ Ֆրանսիայում օտարազգի գրողներին տվող ամենահեղինակավոր Ռիվարոլի մրցանակի դափնեկիր: Ժամանակին նույնիսկ նրա վեպերն ավելի մեծ տարածանակով են վաճառվել, քան ֆրանսիական էզիստենցիալիզմի խոշորագույն ներկայացուցչի՝ Ժան-Պոլ Սարտրի վեպերն ու վիպակները: «Արարչի ութերորդ օրը» վիպակը եւ «Գիշատիչների խնջույքը» վեպը վերահրատարակվել են (թարգմ. Ալ. Թոփչյան):

«Արարչի ութերորդ օրը» վիպակի առանցքը մահվան թեման է: Քաջան արծարծում է էզիստենցիալիստական՝ կյանքը մահվանը հաշտեցնող մոտիվը:

«Գիշատիչների խնջույքը» Վահե Քաջայի լավագույն վեպերից մեկն է՝ անթերի մտահղացված գլուխգործոց: Վեպի «իրադարձությունները» տեղի են ունենում 1942 թ.՝ օկուպացիայի շրջանի Փարիզում՝ Բրիժիտ Մանսենի տարեդարձի օրը: Քաջան իր հերոսներին այստեղ կոչված, «սահմանային իրավիճակի» մեջ է դնում, որից հետո խնամով հանում է նրանց դիմակները: Խնջույքի սեղանի շուրջ հավաքված են բարեկամները, հաճոյախոսում են, ջերմ խոսքեր փոխադարձում միմյանց հասցեին եւ հանկարծ ներս է մտնում գեստապոյի մի մայոր եւ երկու պատանդ պահանջում՝ նրանց որոշակի ժամանակ հայտնելով, որ-ոչքի խնջույքի մասնակիցներն իրենք իրենց միջից ընտրեն պատանդին... Ումն կընտրեն բարեկամները որպես պատանդ, ով է ավելորդը... եվ այստեղ բարեկամների խնջույքը փոխվում է գիշատիչների խնջույքի:

Վլադիմիր Վիսոցկի. «Տուշարձան»

Երեւան, «Զանգակ 97» հրաս., 2007, 400 էջ:

«Զանգակ 97» հրատարակչությունը Հովհաննես Սարոյանի թարգմանությամբ լույս է ընծայել ռուս մեծ բանաստեղծ Վլադիմիր Վիսոցկու բանաստեղծությունների ընտրանին: Թարգմանություններն ունեն որոշակի անճշտություններ եւ թերություններ, հաճախ դրանք չափազանց հավատարիմ են բանաստողծին, թերեւս, բնագրի ոգին փոխանցելու միտումով: Թարգմանություններին կից տպագրված են նաեւ բանաստեղծությունների բնօրինակները:

Վ. Վիսոցկին հայերիս հարազատ է իր պոետիկ նկարագրով, նրա երգը մեզանում արտասավորված է ռուսերենով, նաեւ երաժշտությամբ, իհարկե: Նրա բանաստեղծությունների թարգմանությունները անբավարարվածության զգացողություն են առաջացնում: Ընթերցողը Վ. Վիսոցկու բանաստեղծությունների կատարյալ թարգմանություն է ակնկալում, այնպիսի թարգմանություն, որ նաեւ հանդիսանա լինի մեծ բարի երաժշտությանը: Այդ մասին թարգմանիչն ինքն էլ է խոսում. «Ճնշված երգի անկրկնելի կատարմամբ եւ անզուգական ձայնով՝ հաճախ դուրս չենք գալիս երգից ստացած գեղագիտական հաճույքի շրջանակներից՝ ըմբռնելու բանաստեղծությունների բառա-ծա-իմաստային հաճույքը»:

Ասվածների ժամանակը. հին եգիպտական պոեզիա

Երեւան, «Սարգիս Խաչենց», 2007 թ., 402 էջ:

«Սարգիս Խաչենց» հրատարակչությունը 2007 թ. «Գրական կոթողներ» մատենաշարով լույս է ընծայել հին եգիպտական պոեզիայի հայերեն լեզվով առաջին ամբողջական՝ «Ասվածների ժամանակը» վերնագրված ժողովածուն՝ բանաստեղծ, գրականագետ Հենրիկ Էդոյանի արտակարգ թարգմանությամբ եւ «Բառերի սահմանից այն կողմ»՝ արժեքավոր առաջաբանով ու ծանոթագրություններով, որոնք հին եգիպտական պոեզիայի բարդ խորհրդահամակարգի, հին եգիպտացիների կոսմոգոնիական աշխարհայացքի մասին ժամանակակից ընթերցողի համար շատ անհրաժեշտ մեկնաբանություններ են:

«Ուսանողի գրադարան» մատենաշարով 1982 թ. լույս տեսած «Հին արեւելքի պոեզիա» ժողովածուի մեջ հատվածներ կային նաեւ «Մեռյալների գրքից»: «Ասվածների ժամանակը» ժողովածուում «Մեռյալների գիրքը» զետեղված է ամբողջությամբ (առանձին գրքով՝ Հենրիկ Էդոյանի թարգմանությամբ «Մեռյալների գիրքը» լույս է տեսել նաեւ 2004 թ):

«Մեռյալների գրքից» բացի «Ասվածների ժամանակը» ժողովածուն ամփոփում է նաեւ հին եգիպտական սիրային պոեզիայի լավագույն նմուշները, հիմներ, խորհրդածություններ, ողբեր, խրատներ՝ պոեզիա՝ որ բարձր գեղարվեստականությամբ, խորհրդավորությամբ, տագնապահարույց զգացողություններով ու պոետիկայով ունակ է զարմացնել ժամանակակից ընթերցողին:

Գրքի ձեւավորումը՝ պատկերազարդումը, տառատեսակի ճշգրիտ ընտրությունը, տպագրական թղթի որակն ու որակյալ կազմը հաճելի են դարձնում այն թերթելն ու ընթերցելը:

Երվանդ Քոչար. «Ես եւ դուք»

Երեւան, «Մուտնի» հրաս., «Գասպրինս» տպ., 2007 թ., 200 էջ:

Խորհրդային Հայաստանն ամեն ինչ արեց ներգաղթած հանճարի ոգին ամլացնելու եւ բզկտելու համար: Մողեռն արվեստի եվրոպացի ականավոր տեսաբաններից մեկը՝ Վոլդեմար Ժորժը, նրան է վերագրում պլաստիկ նկարչական նոր ձեւի՝ տարաբական նկարչության ստեղծումը:

Այս սանչելի գիրքը, որ տպագրել է «Մուտնի» հրատարակչությունը, XX դարի համաշխարհային կերպարվեստի ամենահետաքրքրական երեւույթներից մեկի՝ նկարիչ արձանագրող Երվանդ Քոչարի դասախոսությունների, հուշերի, գրառումների, հանդոցագրությունների ընտրանին է: Գիրքն ամփոփում է Լեոնարդո դա Վինչիին, Միքելանջելոյին, Պիկասոյին, Թոմաս Ռոսլինին, Հակոբ Գյուրջյանին, Բաժբեուկ-Մելիքյանին, Մարտիրոս Սարյանին եւ այլոց նվիրված հոդվածներ, դասախոսություններ հանդոցագրություններ ու ելույթներ, սոցիալիստական ռեալիզմի, գույնի եւ ձեւի, մոնումենտալ պեյզաժի, նկարի շրջանակի, մողեռն գեղարվեստի էության, մողեռն արձանագրության, գեղարվեստական գրի պատկերազարդման մասին հոդվածներ եւ խորհրդածություններ, հուշեր եւ հանդարեղ նկարչի ու հեստրիոնի մտածողի գրական-գեղարվեստական ուշագրավ ժառանգությունը: Դրանց մեջ կան եւ պիեսներ՝ «Աբել եւ Կայեն», «Կալիոստրո» եւ գրոտեսկ մի պատմվածք եւ «Փոռանոներ» խորագրով ասույթներ արվեստի, մարդու եւ կեցության մասին:

Գրքի նյութերի փոքր մասը տպագրվել է ֆրանսիական եւ հայաստանյան մամուլում, իսկ սպառ մասը առաջին անգամ է ներկայացվում ընթերցողին:

Գիրքը կնքված է զույգի ձեւով շարադրված «Ես եւ դուք» մենախոսություն - էսսեի վերնագրով:

Հանճարի մտքերն ամփոփող այս նկարազարդ գիրքը կազմել եւ խմբագրել են Անահտի Հովհաննիսյանն ու Լալա Մարտիրոսյան-Քոչարը:

Տպագրվել է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հովանավորությամբ:

«Ազգ. Մշակույթ-հավելվածում» անցյալ տարի տպագրվեց արվեստաբան Պողոս Հայթայանի ընդարձակ անդրադարձը գրքին:

Նոր գրքեր՝ Ազգ-ի գրադարանում

«Ազգ»-ի գրադարանը, ի թիվս բազմաբնույթ գրքերի, վերջերս հարստացավ նաեւ հոգեւոր գրականությամբ՝ Մայր աթոռ Ս. Էջմիածնի եւ ԵՊՀ ասվածաբանության ֆակուլտետի հրատարակչությունների տպագրությամբ: Ֆակուլտետի հիմնադրման 10-ամյակի առիթով տպագրված «Տարեգիրք»-ն հատորյակը դասախոսական կազմի՝ 2006-ին կատարած ասվածաբանության, կոսմագիտության եւ հայագիտության ուսումնասիրությունների հավաքածու է, գրքերն նույնաբնույթ Բ հատորյակը նվիրված է Գարեգին Բ կաթողիկոսի գահակալության 8-ոդ տարեդարձին (մեկնաբան՝ Վահե Հարությունյան): Եվս մեկ՝ «Հայ ասվածաբան» գիտական հոդվածների ժողովածուն դարձյալ ներկայացնում է նույն հրատարակչությունը՝ տեր եւ տիկին Ջաղի եւ Դիանա Մխիթարյանների մեկենասությամբ:



Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամի նախաձեռնությամբ «Կրթությունը՝ զարգացման նախապայման» ժողովածուն ամփոփում է 2007-ի հունիսին Ծաղկաձորում կազմակերպված համագումարի զեկուցումները՝ կրթական բարեփոխումներին, արտադպրոցական, միջին մասնագիտական կրթությանը, հիսուսեանական դաստիարակությանը վերաբերող: Հրատարակվել է եկեղեցական զարգացման ծառայության Գերմանիայի բողոքական եկեղեցիների միության ֆինանսական օժանդակությամբ:

Մայր աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչությունը ներկայացնում է Սուրբ Անտոն Մեծի «Խրատներ»-ը, մեկնաբաններ՝ տեր եւ տիկին Սարո Սարուխաններ, տեր եւ տիկին Ռաֆֆի Սարուխաններ:

Միջնադարյան բարոյախոսական զրույցների ժողովածուն (1480) լեհերենից թարգմանել է Ստեփանոս Լեհացին 1651-ին, որի ներկա տպագրության «Հայելի վարուց» խորագրով ժողովածուի հայերեն թարգմանիչներն են Մայր աթոռի միաբաններ Իսահակ աբեղա Պողոսյանը եւ Ռուբեն աբեղա Ջարգարյանը, մասնակցել է նաեւ Քնարիկ Տեր-Դավթյանը:

Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ ընդգրկված «Սուրբ Գրիգորի վարդապետությունը» ծավալուն հատվածը սկզբնավորում է հայ ասվածաբանական մտի ուղղությունը եւ համարվում է հայ ասվածաբանական եզակի երկերից: «Սուրբ Գրիգորի վարդապետությունը» տպագրվել է տեր եւ տիկին Արմեն եւ Նունե Սարգսյանների մեկենասությամբ:

Արտակ Տեր-Միքելյանի հեղինակությամբ 20-ոդ դարասկզբին լույս տեսած «Հայաստանյայց սուրբ եկեղեցու քրիստոնեականը» դավանաբանական դասագիրք է: Սույն ձեռնարկն առաջին անգամ համակարգված ներկայացնում է հայ եկեղեցու դավանությունը գիտական մակարդակով: Մայր աթոռի հրատարակչական բաժինը, նկատի ունենալով գրքի այժմեականությունը, վերահրատարակությունը պատրաստել է դասանաբնագրային ուղղագրությունը պահպանելու սկզբունքով եւ առի արեւելահայերեն ուղղագրությամբ (գրաբարյան մեջբերումները՝ մեսրոպյանով):

623 էջից բաղկացած 3 մասանոց ուսումնասիրության առաջին բաժինը՝ «Ասված եւ Նորա գործերը»՝ 18 գլուխներով ընդգրկում է ասվածաբանական տեսանկյունից, «Աստուծո գոյությունը», «Աստծո գոյության հավաստիքը բնազանցական գննությամբ», «Աստծո գոյության հավաստիքը գիտական հետազոտությամբ», «Ս. Երրորդություն», «Աստծո արարչությունը», «Աստծո նախախնամությունը», «Մարդու սկզբնական վիճակն ու պատվիրազանցությունը», «Սկզբնական մեղքի ժառանգական հետեւանքները»: 2-րդ բաժինը՝ «Ասվածորդու փրկագործությունը» խորագրով, ուսումնասիրություն-մեկնություն է Հիսուս Քրիստոսի ասվածային ծագման ու նրա մարդեղության հարցի՝ «Միածնի Մարդեղությունը», «Քրիստոսի ասվածամարդկային կյանքի խորհուրդը», «Փրկչաբանական մոլորություններ»: Երրորդ մասը՝ «Փրկության տնտեսությունն ու կատարումն» խորագրով, Սուրբ Հոգու, Սուրբ Հոգու գալստի ու շնորհաբաշխության, եկեղեցու, Սուրբ Գրքի, եկեղեցու սուրբ խորհուրդների մասին է:

Հայ եկեղեցու միջնադարի նշանավոր հայրերից **Ներսես Լամբրոնացու** (XII դ.) «Հավատամքի» եւ «Հայր մերի» մեկնությունները տպագրվել են տեր եւ տիկին Արմեն եւ Նունե Սարգսյանների աջակցությամբ: Առաջաբանում ներկայացված է Ներսես Լամբրոնացու վարքը:

«Մեծյան մատենաշարի» Ձ հատորը հեղինակել է Անուանական եպս. Ժամկոչյանը: Նա «Կոմիտաս» գիրքը նվիրված է ասվածաբանության ֆակուլտետի հիմնադիր-դեկան Շահե արք. Մեծյանի եւ Դերենիկ վրդ. Դավթյանի հիշատակին: Հեղինակն անդրադարձել է Կոմիտաս վարդապետի կյանքի, ուսումնասիրության տարիներին, էջմիածնում նրա կատարած հայ հոգեւոր եւ ժողովրդական երգերի հավաքման ու վերամշակման աշխատանքներին (հեղինակային հրաս.):

«Մեծյան մատենաշար» Ը-ն ներկայացնում է «Տաղավար տոներ հայոց գրական անդրադարձներում» գիրքը՝ Գետրգ սարկավագ Դուրյանի հեղինակությամբ: Անդրադարձ է արված հայ առաքելական եկեղեցու 5 տաղավար տոների ծագմանը (Սուրբ Ծնունդ եւ Աստվածահայտնություն, Սուրբ Հարություն Հիսուս Քրիստոսի կամ Զատիկ, Պայծառակերպություն Հիսուս Քրիստոսի կամ Վարդավառ, Վերափոխումն Սուրբ Աստվածածնի, Խաչվերաց) դրանց առնչվող ժողովրդական սովորույթներին ու գրականության մեջ արտացոլումներին:

Ռ. Վարդանյանի մենագրությունը (հեղինակային հրաս.) նվիրված է «Պատճեն Տուտարի Հայոց»-ի խմբագրություններին: Տիգրան սարկավագ Բաղումյանի «Արեւմտյան Բենգալիայում բաղված հայ հոգեւորականները» ուսումնասիրությունն անդրադառնում է Հնդկաստանի, Արեւմտյան Բենգալիա նահանգի երբեմնի հայաբաշ քաղաքներում բաղված հայ հոգեւորականների տարաբնույթ արձանագրություններին, նրանց կյանքին ու գործին: Հեղինակային տեսքին առընթեր ներկայացված տարաբնույթ, գեղեցիկ նմուշներ, եկեղեցիների գունավոր լուսանկարները գիրքը դարձնում են առավել տպավորիչ եւ ուշագրավ:

Ս. Բ.

Անհանգիստ վիճակ Կովկասում

«Մտինչն միտոր սպեֆթնյթր» շաբաթաթերթից ՄԱՐԿՈՍ ՊԱՊԱԴՈՊՈՒԼՈՍԻ ստորեւ որոշ կրճատումներով թարգմանաբար ներկայացվող հոդվածն առաջին անգամ հրատարակվել է «Ռելիգիս ինֆորմացիոնս» լոնդոնյան կազմակերպության օնլայն տեղեկատվական կայքում:

Ալեքսանդր Պուշկինը մի առիթով գրել էր. «Գիտեմ ինչպես օգտագործել դաշույնը, Կովկասում եմ ծնվել»: Խորհրդային Միության փլուզումից հետո այս երեքում տարածաշրջանում առաջացած հակամարտությունները (Ղարաբաղ, Հարավային Օսիա, Աբխազիա եւ Չեչնիա) ցույց են տալիս, որ Պուշկինի նկատառումները Կովկասի վայրագ բնույթի վերաբերյալ այսօր էլ համապատասխանում են իրականությանը:

Ինքնուսականների ընթացքում բնամական մի շարք գործողություններ տեղի ունեցան Կովկասի այնպիսի շրջաններում, որոնց մասին գաղափար չունեին Արեւմուտի նույնիսկ ամենահմուտ դիվանագետները:

Խորհրդային ժամանակներում իշխանությունները ցարական Ռուսաստանից ժառանգված պատմական բնամանները կարողանում էին ճնշել երկաթյա բռունցքի եւ գաղտնի ծառայությունների հետեւողական հսկողության միջոցով: Միասնական ազգային (խորհրդային) ինքնության գոյությանը նպաստում էր տարբեր ազգություններին միմյանց հետ կապելը, ինչպես էլ այդ կապը թույլ լիներ:

Միխայիլ Գորբաչովի Կրեմլ մուտք գործելուց եւ «պերեստրոյկա» ու «գլասնոստ» խաղախականության գործադրումից հետո վերահսկողությունն այդ անհանգիստ տարածքներում այնպես թուլացավ, որ նախկին բնամանին ու ատելությունը դարձյալ սկսեցին գլուխ բարձրացնել եւ կարճ ժամանակում վերածվել դաժան պատերազմների, որոնց հետեւանքով հազարավորներ զոհվեցին կամ տեղահանվեցին:

Առաջինը Լեռնային Ղարաբաղի մեծամասնությամբ հայերով բնակեցված տարածքն էր, որի Ազգային խորհրդի հայ պատգամավորների 1988 թվի Հայաստանին միանալու որոշումը պատճառ դարձավ լարվածության սրման եւ պատերազմի: 1994-ին հրադադար հայտարարվեց: Այսօր Լեռնային Ղարաբաղը «դե ֆակտո» անկախ պետություն է, բայց պաշտոնապես դեռեւս մաս է կազմում Ադրբեջանի:

Հաջորդը Վրաստանի 2 տարածքներն էին. Հարավային Օսիան եւ Աբխազիան, որոնցում ռուսական զորքերը դեռեւս կարողանում են պահպանել դրտության խաղաղությունը 1992-93 թվերի մարտերից հետո:

Ամենակատաղի եւ արյունալի մարտերը Չեչնիայում էին: 1817-64 թվերի կովկասյան պատերազմների ժամանակ Ռուսական կայսրությանը կցված մահմեդականներով բնակեցված այս տարածքը իրադաշորդ ռուսական կառավարությունների համար «փուշ» է եղել եւ շարունակում է մնալ, գլխավորապես չհիմնավորված մեղադրանքների հետեւանքում մեկ միլիոն չեչեն բնակչությանը Կենտրոնական Ասիա տեղահանելու Ստալինի կարգադրության պատճառով:

Այսօր Չեչնիայում հարաբերական կայունություն է: Ռուսական եւ չեչենական հատուկ ծառայությունները կարողացել են համաձայնության գալ: Հանրաքեությունի այժմ ռուսամետ նախագահ Ռամզան Կադիրովի իշխանությունը զբաղված է տեղական խնդիրների կարգավորմամբ:

Հակամարտության վերասկզբնավորման վտանգը, սակայն, հավերժական է: Հակամարտության սաղմերը թափանցել են նաեւ հարեւան Դաղստանի եւ Ինգուշիայի մահմեդական հանրաքեությունները: Մոսկվան սահմանած է զորքի եւ բյուջեի զգալի մասը հատկացնել կովկասյան տարածաշրջանին՝ հակադրձելու իսլամական սպառնալիքին եւ թույլ չտալու, որ այն ներթափանցի այլ տարածքներ:

Մյուս կողմից, ուժային մրցակցության հետեւանքով բոլորովին նոր հակամարտություն է հասունանում Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ: Միխեիլ Սաակաշվիլու նախագահ դառնալուց ի վեր հարաբերությունները Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ զգալիորեն վատացել են: Ամերիկայում կրթված իրավաբանն իր առաջ երեք խնդիր է դրել: Հարավային Օսիան եւ Աբխազիան Թբիլիսիի իրավասության տակ բերել, միանալ Եվրամիությանը եւ անդամակցել ՆԱՏՕ-ին: Վաշինգտոնի աջակցությունը վայելող Սաակաշվիլին լի է վճռականությամբ եւ ինքնավստահությամբ:

Սակայն այդ ինքնավստահությունը կարող է պատճառ դառնալ Կովկասում ավելի մեծ պատերազմի սանձազերծման, եթե երկու անջատողական շրջաններից ակնկալվածը:

1990-ականների ընթացքում Մոսկվան ռուսական անձնագիր տվեց Հարավային Օսիայի բոլոր այն հաղթացիներին, ովքեր ցանկանում էին ունենալ, որի հետեւանքով այսօր այդ տարածքների բնակչության 90 տոկոսը ռուսահպատակներ են: Որեւէ սպառնալիքի դեպքում Ռուսաստանը, համաձայն իր սահմանադրության, պարտավոր է պաշտպանել նրանց անվտանգությունը: Ռուսաստանի կառավարությունը վերջերս վերահաստատեց այդ պարտավորվածությունը, երբ ՆԱՏՕ-ն հաստատակամություն ցուցաբերեց Վրաստանին ընդունելու իր շարքերը: Դրանով Մոսկվան հստակորեն ակնարկեց, որ Կովկասում ինքն է դեռեւս գերիշխող ուժը եւ իր շահերը պաշտպանելու համար անհրաժեշտության դեպքում չի վարանի ուժ գործադրելուց:

Բազմաթիվ փաստեր խոսում են, որ Ռուսաստանն ու Վրաստանը պատերազմի եզրին են. ՄիԳ-29 լրտեսական ինքնաթիռի վայրէջքը Աբխազիայում, վրացական զորքերի կուտակումները Կոդորի կիրճում, ռուսական հավելյալ զորքերի տեղակայումը Աբխազիայում եւ այլն:

Մոսկվան զայրացած է ՆԱՏՕ-ի դեմքի արեւելյի ընդարձակման նկրտումներից եւ Լեհաստանում ու Չեխիայում հրթիռային պաշտպանական գոտիներ ստեղծելու Վաշինգտոնի ծրագրերից: Նաեւ Կոսովոյի հարցում իր կարծիքն անտեսելու Արեւմուտի դիրքորոշումից:

Հիմա, երբ Ռուսաստանը սկսել է վերականգնել իր երբեմնի գերտերության կարգավիճակը (ամերիկացի մի բարձրաստիճան պաշտոնյա վերջերս խոստովանել է, որ «Ռուսաստանը անկասկած դարձյալ թիվ 2 գերտերությունն է աշխարհում»), Կրեմլը վճռական է տրամադրված ցուցադրելու իր ուժը այն տարածաշրջաններում, որոնք մտնում են իր ազդեցության ծիրի մեջ:

Վաշինգտոնն ու Թբիլիսին զգուշավորություն պետք է ցուցաբերեն իրենց հաղթականությունը վարելիս, որպեսզի պատերազմը Ռուսաստանի հետ անխուսափելի չդառնա: Ռուսաստան-Վրաստան պատերազմի բռնկման դեպքում Վրաստանը հաղթանակելու հույս չի կարող ունենալ, իսկ իր հովանավոր Մ. Նահանգները, բացի ՄԱԿ-ում նրան նեցուկ կանգնելուց, այլ օգնություն չի կարող ցուցաբերել:

Կովկասը կարող է դառնալ կատաղի մարտերի թատերաբեմ: Եվ այս անգամ մասնաբերները կգերազանցեն նախորդներին, քանի որ խոսքը մեծ տերությունների հակամարտությանն է վերաբերում: Այնպես որ, այս արյունաթաթախ եւ երերուն տարածաշրջանը դեռեւս շարունակում է մնալ անհանգիստ՝ խոչընդոտելով տեւական խաղաղության հաստատմանը:

Թարգմ.՝ Հ. Ծ.

Եվրամիությունը կվերացնի Կուբայի դեմ ուղղված պատժամիջոցները

Եվրամիության արտաքին հարաբերությունների հանձնակատար Բենիտա Ֆերերո-Վալդները հայտարարել է, որ Եվրոպան վերացնելու է Կուբայի դեմ ուղղված պատժամիջոցները: Ոլորտը զգոնությունը հարդարում է, որ Բրյուսելում անցկացվող ԵՄ գագաթաժողովում միության անդամ բոլոր 27 երկրների նախարարները համաձայնել են, որ հարկավոր է չեղյալ հայտարարել հիշյալ պատժամիջոցները: Ֆերերո-Վալդները հաստատել է, որ Եվրամիությունը կարող է վերանայել պատժամիջոցների վերացման որոշումը, եթե Կուբայում մարդու իրավունքների հետ կապված վիճակը չբարելավվի եւ շարունակվեն այլախոհների հալածանքները:

Եվրամիությունը Կուբայի դեմ պատժամիջոցներ ձեռնարկեց 2003-ին, երբ հաղորդումներ ստացավ Կուբայում այլախոհների զանգվածային հալածանքների մասին: Պատժամիջոցները ներառում են բարձրաստիճան պետական պաշտոնյաների հետ բանակցությունների արգելումը, սակայն չեն պահանջում սնունդի եւ առեւտրական սահմանափակումներ: 2005-ին պատժամիջոցների գործողությունը կասեցվել էր:

Ոլորտը նշում է, որ պատժամիջոցների վերացումը պետք է դիտարկվի որպես Կուբայի նոր ղեկավար Ռաուլ Կաստրոյին ընդառաջ կատարած քայլ, որը խոստացել է երկրում անցկացնել տնտեսական եւ քաղաքական բարեփոխումներ:

Պատժամիջոցները վերացնելու ԵՄ որոշումը արդեն հարուցել է ԱՄՆ-ի բողոքները: Այդ երկրի պետդեպարտամենտի պաշտոնական ներկայացուցիչ Թոմ Քելիին Ֆրանսիայի թղթակցին հայտարարել է, որ Կուբան առաջվա պես մնում է ավտորիտար պետություն եւ որ պատժամիջոցների վերացումը վաղաժամկետ է:

Քելիի խոսքերով, Ռաուլ Կաստրոն առաջին կատարել է չնչին փոփոխություններ, իսկ արմատական վերափոխումներ դեռ չեն նկատվում: Նա հույս է հայտնել, որ ԱՄՆ-ի «ժողովրդավար բարեկամներն ու դաշնակիցները չեն օգնի Կուբայի վարչակազմին»:

Իսրայելը զորավարժություններում նմանակել է Իրանի վրա հարձակումը

Հունիսի սկզբներին Իսրայելում անցկացված զորավարժությունների կապակցությամբ ամերիկացի մասնագետները այն կարծիքն են հայտնում, որ դրանց նպատակը եղել է Իրանի միջուկային օբյեկտներին հասցվելիք հարվածների նախապատրաստումը: «Նյու Յորք թայմս» թերթը գրում է, որ Արեւելյան Միջերկրածովում անցկացված զորավարժություններին մասնակցել են 100-ից ավելի F-16 եւ F-15 ռազմօդանավեր, ինչպես նաեւ ուղղաթիռներ:

Թերթի տեղեկությունների համաձայն, ռազմօդանավերը եւ ուղղաթիռները թռիչքի ընթացքում լրացուցիչ վառելիք են ստացել «ավելի քան 900 մղոն, որը համապատասխանում է Իսրայելի եւ իրանական Նաթանս քաղաքի միջուկային կենտրոնի հեռավորությանը»:

Իսրայելցի պաշտոնյաները հրաժարվում են ինքնակել այդ զորավարժությունների թեման: «Նյու Յորք թայմս» նշում է, որ Իսրայելը չի փորձել թաքցնել զորավարժությունների անցկացման փաստը: Պենտագոնում կարծում են, որ զորավարժություններն ունեցել են մի քանի նպատակ: Ամերիկացի զինվորական պաշտոնյաներից մեկի խոսքերով, առաջին նպատակը օդում լրացուցակվելով հեռավոր թռիչքներ կատարելու մարտավարության մշակումն է, ինչպես նաեւ Իրանի միջուկային օբյեկտներին եւ հրթիռակայաններին հասցվելիք հարվածների մշակումը: Երկրորդ նպատակն է ԱՄՆ-ին եւ մյուս երկրներին հասկացնել, որ Իսրայելը պատրաստ է գործել, եթե Իրանի միջուկային ծրագրի դադարեցման ուղղված դիվանագիտական ջանքերն արդյունք չտան:

Հոդվածում հիշատակվում է Իսրայելի փոխվարչապետ Շաուլ Մոֆազի վերջերս արած այն հայտարարությունը, թե իսրայելցիները պատրաստ են հարված հասցնել Իրանին: Թեհրանում Իսրայելի սպառնալիքներին վերաբերվում են լրջորեն:

Հակահրթիռային համակարգը ԱՄՆ նախագահական ընտրությունների կիզակետում



Նախագահական ընտրություններից առաջ Սպիտակ տունը ուժեղացնում է ճնշումը Ռուսաստանի վրա, որպեսզի հասնի եվրոպայում իր պայմաններով հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղաբաշխման հարցի լուծմանը: Հանրաքեությունների օրինակին սկսել են հետեւել դեմոկրատները՝ ճախագծիության թեկնածու Բարաք Օբամայի գլխավորությամբ: Բուշ ԱՄՆ-ում հակահրթիռային համակարգի գաղափարը լրջորեն քննադատվում է, ուստի Բուշի համար կարեւոր է առյագա նախագահին կանգնեցնել «կատարված փաստի» առջեւ, որպեսզի նա չկարողանա նահանջել, այս կապակցությամբ գրում է մոսկովյան «Նեզավիսիմայա գազետա» թերթը:

Այս առումով հատկանշական է ԱՄՆ պետքարտուղար Կոնդոլիզա Ռայսի ելույթը, որը Վաշինգտոնում կայացած արտահայտություններով Ռուսաստանին կոչ արեց ընդունել ՆԱՏՕ-ի հակահրթիռային պաշտպանությանն առնչվող առաջարկությունները: Ընդսմին նա բնավ չհիշատակեց ռուսների առաջարկած այլընտրանքային ծրագիրը: Ռայսի խոսքերով, ՆԱՏՕ-ն Ռուսաստանին ըստ էության ասել է. «Դատապարտեք ԱՄՆ-ի հետ համագործակցությանը. դա կհամապատասխանի հենց ձեր շահերին»:

Ռուսաստանն ավելի վաղ ԱՄՆ-ին առաջարկել էր համատեղ օգտագործել Գաբալայի ռադարը, բայց ամերիկացիները համառորեն փորձել էին առաջ մղել իրենց ծրագիրը, անտեսելով Ռուսաստանի շահերը: Ռայսի ելույթից նաեւ երեւում է, որ Ուկրաինային եւ Վրաստանին ՆԱՏՕ-ի անդամ դարձնելը ԱՄՆ-ի համար արդեն լուծված հարց է: Այսպիսով, ամերիկացիները փորձում են ՆԱՏՕ-ի գործունեության ոլորտում ընդգրկել նաեւ նախկին ԽՍՀՄ հանրաքեությունների եւ ընդհուպ մոտենալ Ռուսաստանի սահմաններին:

Զինաթափման հարցերի ռուսաստանցի հայտնի մասնագետ Ալեքսանդր Պիկաեւի կարծիքով, ամերիկյան վարչակազմի այս կտրական ոճը բացատրվում է նոյեմբերին կայանալիք նախագահական ընտրություններից առաջ հակահրթիռային պաշտպանության համակարգի հարցը լուծելու Բուշի վարչակազմի մտադրությամբ: ԱՄՆ հաջորդ նախագահը կարող է չլինել հակահրթիռային համակարգի գաղափարի կողմնակիցը, բայց հարցը որոշակի կետի հասցվելուց հետո նրան կմնա միայն շարունակել Բուշի քաղաքականությունը:

Օբամայի ընտրարավը չի ֆինանսավորվի պետության փողերով

Նախագահության դեմոկրատ թեկնածու Բարաք Օբաման հայտարարել է, որ ինքը պետության միջոցները չի օգտագործի իր ընտրարավի ֆինանսավորման համար: BBC-ն այս կապակցությամբ նշում է, որ պետությունից փող ստացող թեկնածուներն իրավունք չունեն ընտրարավն անցկացնելու մասնավոր նվիրատուների հաշվին:

Օբաման փաստորեն հրաժարվում է այն 84 մլն դոլարից, որը կարող էր ստանալ պետական կառույցներից: Այդ գումարը գոյանում է հարկատուների 3 դոլարանոց նվիրատվություններից, որոնք արվում են հարկային հայտարարագրերի լրացման ժամանակ: Հանրաքեությունների թեկնածու Ջոն Մակքեյնը նույնպես օգտվում է մասնավոր նվիրատուների միջոցներից: Մարտի վերջերին Օբամայի ընտրական շտաբի օգտին հանգանակվել էր ավելի քան 265 մլն դոլար, իսկ Մակքեյնի շտաբը մայիսի վերջերին ուներ 115 միլիոն: Օբամայի այս առավելությունը կպահպանվի, եթե Մակքեյնը որոշի օգտագործել պետության միջոցները:

ԱԶԳ

Մշակույթ

Քաց նամակ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին

Կուզենայի նամակս ուղղել նաեւ ՀՀ նախագահին, սակայն որոշեցի խնայել. ախր այնքան շատ են նրա հոգսերը եւ հետո մտածում եմ. մեր եռանդուն ու գործնական վարչապետն էլ կկարողանա այդ խնդիրը կարգավորել:

Ամենուր խոսվում է մեր մեծ հայրենակցի՝ ակադեմիկոսական գրող ու մտավորական Վիլյամ Սարոյանի մասին, բայց ինչ է տալիս մեզ մոտ: Նույնիսկ «Ինչպես դառնալ միլիոնատեր» եւ նմանատիպ հարցազրույցներում կորած-մոլորած ամեն հարց կգտնես, իսկ Սարոյանին վերաբերող՝ ոչինչ:

Ակադեմիկոս մի քաղաքում այնքան Սարոյան չի բեմադրվել, որքան մեզ մոտ եւ հատկապես հեռուստատեսային թատրոնում: Լինելով մասնակիցն այդ երանելի թատրոնի գործունեության, զգացել եմ, որ Սարոյանի ամբողջ ստեղծագործությունը մեր ժողովրդի հոգեւոր կերտվածքի ազնվագույն մասն է, դարի երաշխիքն ու բարության մանիֆեստը, «կյանքարանը»: Ոչ մի գրողի ոչ մի ստեղծագործությունը բարության ներգործության այն անկասելի եւ հզոր ուժը չէ, ինչ Սարոյանի յուրահանչյուր մեծ ու փոքր պատումը: Ես հիշում եմ 1991-ի աշունը, երբ մուրացկան, սուլի մասնվածներս, ի լրումն այդ ամենի, զօրուգիտեր սիրելված էինք նաեւ կուլ տալ ամեն օր կենտրոնական հեռատեսիլով մեզ վրա թափվող թուղանախաղերը, հեծծել անզորության եւ նվաստացման մեջ, գիտերները գեթ մի՞ ինչ ելնելու-անջատելու համար զոր ելաբերներ էինք ընդունում.. Եվ հանկարծ սեպտեմբերի 10-ին հրաշքով երեկոյան երկու ժամով լույս ունեցանք եւ դիտեցինք Սարոյանի «Մարդկային կատակերգությունը» (սեժ. Յոտի էրոյան) եւ մեզ հետ հրաշք կատարվեց: Առաջին անգամ այդ գիշերը մենք խորը քուն մտանք... Ինչ ամոթից քուն... Հաջորդ օրը մենք միմյանց հետ խոսում էինք այդ հրաշք ներգործության մասին, որ Սարոյանը կատարել էր, երբ մեր լարված-խայտված նյարդերին ոչ մի ցավազրկող չէր օգնում: Մենք դիտում ու մտածում էինք բնությունից մարդուն շռայլորեն տրված բարության, դեռի բարին կողմնորոշվելու բնաթին նկարագրի մասին եւ զգնում, որ Սարոյանի հատկապես այդ գործը պետք է ոչ միայն գեթ ամիսը մեկ ինչի եթերում, այլեւ ներկայացման ժամավենը բազմացվի եւ ցուցադրվի մեր բոլոր կալանավայրերում եւ հատկապես ուղղիչ գաղութներում: Հավատացեք. մարդ առարածի հոգեւոր աշխարհում այս շատ ավելին կանի, քան քարոզչական բազում միջոցներն ու ձեռնարկները: Եվ մի՞թե միայն դա: Սարոյանի յուրահանչյուր գործը ներծծված է մարդկային անօրինակ, անոյարագիծ բարությամբ: Ուրեմն ինչպե՞ս հասկանալ, որ նույնիսկ մեր մեծանուն հայրենակցի 100-ամյակի առիթով մի դաժան ձեռ փակել է հսկա հառստության դուռը եւ ոչ մի պատում եթեր չի տալիս: Հայտնում եմ, որ միմիայն հեռուստեսային 17 անուն ներկայացում է պատրաստվել մեր եթերում (հիմա՝ 31), որոնց մեծ մասը գտնվում է տեխնիկական անցյալ տեսագրական ժամավենի վրա (Տեմպ-3). հարկ կլինի դրանք արտագրել եւ թիսանի դարձնել այսօրվա սարքերի միջոցով: Ըստ որում, բեմականացվել են ոչ միայն Սարոյանի հայտնի պիեսները («Քարանձավի բնակիչները», «Հեյ, ովկա», «Խենթացած մի գնա»), այլեւ արձակի հիման վրա ստեղծված շատ գործեր («Տարեկանի արտում», «Պինգ-պոնգ խաղացողները», «Սովալները», «Հայը եւ հայը», «Հանճարը», «Պատմություն երիտասարդի եւ մկան մասին», «Հնատարազ սիրավեպ», «Ոտ ես ծնվել եմ՝ մարդիկ այնտեղ բարեկիրթ են» եւ այլն):

Քանի՞ տարի է այդ մասին ասվում-խոսվում է՝ բայց ազգային մտածողությունից հեռու եւ թատրոնայաց (իրենք դա հայատարում են) գործի տերերին ոչ մի կերպ չենք կարողանում խոսք հասկացնել: Վախենամ, որ Ձեզ եւս փորձեն «մոլորեցնել». ասելով, թե այդ ժամավենները հնացած են, ոչ պիտանի: Ցավատամ, պահանջեմ ուղղակի արտագրել եղածը: Ախր, նախ՝ դրանք գանձ են, առա՝ դրանց դերակատարներից շատերը այլեւս չկան եւ հնարավոր չէ դրանք կրկին նկարահանել...

Միայն Ձեզ վրա է մեր հույսը. միայն Դուք կարող եք ինչ-որ կարգադրած անհաղթահարելի պատնեշը բանդել: Սարոյանը պետք է մեզ, ամենիս, այսօր եւ հավեր: Չէ՞ որ դրանք կարելի է տարածել եւ մեզանում եղած մյուս հեռուստաալիքներին:

ՎԱՐՈՒԺԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ավ. վաստ. գործիչ, բանաստեղծ, հեռ., թատրոնի գործիչ եւ պատմության երկիրագրության հեղինակ

Այսօր բացվում է «Երաժշտության տոն»

Ճիշտ 26 տարի առաջ Ֆրանսիայի իշխանությունները նախաձեռնեցին «Երաժշտության տոն» միջոցառումը, տարվա ամենաերկար օրը՝ հունիսի 21-ին ու այն առ այսօր տոնվում է աղեղն 5 մայրցամաքների 110 երկրներում եւ 340 քաղաքներում: Հայաստանը երկրորդ տարին է, ինչ ժողովրդի նախաձեռնության եւ մեր երկրում Ֆրանսիայի դեսպանության հետ սերտ համագործակցությամբ, մասնակցում է այդ տոնին:

Երեկ ՀՀ մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը** եւ ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան **Սերժ Սմեսովը** մամուլասաս ներկայացրին տոնը եւ գոհունակություն հայտնեցին, որ համագործակցությունը գնալով ավելի է զարգանում ու նոր ծրագրեր են մշակվում: ՀՀ մշակույթի նախարարը նշեց. «Այս տարվա միջոցառումը ամենաաբավալունն է: Ներկայացվելու է տարբեր ժանրերի երաժշտություն եւ դեսպանության հետ ինքնարկումների առդյունքում եկանք այն եզրակացության, որ Երեւանի ամբողջ կենտրոնական մասը դառնա իրադարձությունների կենտրոն»:

Երաժշտության տոնը կմեկնարկի «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի առջեւ՝ ջազային համերգով, ժամը 17.30-ին: Մինչեւ կեսգիշեր քաղաքի կենտրոնը ողողված կլինի ջազային, ռոք, ժողովրդական, փոփ եւ այլ երաժշտության հնչյուններով: Դեսպան Սերժ Սմեսովը նշեց. «Մենք բոլորս լիցքաթափվելու կարիք ունենք: Երաժշտության տոնի մասնակիցները երաժիշտներ են ու կամավոր են մասնակցում տոնակատարությանը»:

Դեսպանը բարձր գնահատեց երկաստեղ համագործակցությունը եւ մանրամասն նշեց հետագա ծրագրերը:

Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Չիվան Գասպարյանը սոլո կատարումով հանդես կգա Լոնդոնում

Հունիսի 27-ին Լոնդոնի «Hyde Park» ամենամեծ եւ տեսարժան զբոսայգում անց է կացվելու բացօթյա համերգ-ակցիա՝ նվիրված Նելսոն Մանդելայի ծննդյան 90-ամյակին (1993 թ. Նոբելյան մրցանակի դափնեկիր, Աֆրիկյան ազգային կոնգրեսի կրկնակի պրեզիդենտ, ավելի քան 50 միջազգային համալսարանների պատվավոր անդամ, Հարավաֆրիկյան պետության 1994-99 թթ. պրեզիդենտ):

Համերգին մասնակցելու են աշխարհին հայտնի ռոք ու փոփ մեծաթիվ աստղեր, նաեւ ներկա են գտնվելու ԱՄՆ նախկին նախագահ Բիլ Քլինթոնը, Անգլիայի վարչապետ Գորդոն Բրաունը, աշխարհահռչակ դերասաններ Ռոբերտ դե Նիրոն եւ ուրիշներ: Միջոցառումը բացելու հավեր է սպասել 80-ամյա հայտնի դաշնակահար Չիվան Գասպարյանը, որը հանդես կգա իր ստեղծագործության սոլո կատարումով: Բարեգործական համերգ-ակցիան արբանյակային հեռարձակմամբ դիտելու են աշխարհի 30 մլն բնակիչ, իսկ համերգին ներկա է գտնվելու 200 հազար հանդիսատես: ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը տեղեկացրեց, որ Հայաստանում նույնպես կարող են դիտել համերգի ուղիղ եթերը:

Մ. Մ.

ԳԵՐՄԱՆԻԱ

Մանկապատանեկան փառատոնը բացվեց հայ միմերի բեմելով

Հունիսի 19-22-ը գերմանական Թյուրինգենի Ռուդոլշտատում անցկացվում է մանկապատանեկան թատերական խմբերի միջազգային առաջին փառատոնը, որին ի թիվս Խորվաթիայի, Ռուսաստանի, Լեհաստանի, Չեխիայի, Գերմանիայի մասնակցում է նաեւ Հայաստանը:

6-25 տարեկան 130 միմեր հանդիսատեսի, այդ թվում միջազգային 50 մասնագետների դատին կհանձնեն իրենց բեմադրությունները, այնուհետեւ կքննարկեն դիտածը: Էլեկտրոնային լրատվամիջոցներից քաղած այս տեղեկությունն իրազեկում է, որ փառատոնի բացումը վերադարձած է հայաստանյան խմբին. Երեւանի գեղագիտական դաստիարակության ազգային կենտրոնի 6-16 տարեկան սաներ են մասնակցում «Ֆանտաստիկ» անվանյալ փառատոնին՝ ներկայացնելով «Օֆելյայի սվերների թատրոնը»:

Երեւանի գեղագիտական կենտրոնի սաները

«Մեր երեխաներն ու պատանիները դերասանության ու պարի հիմունքներն են սովորել, ոգեւորությամբ ներկայացնում են մի պատմություն, որ առանց բառերի էլ հասկանալի է», «Օսթյուրինգեր ցայտունգին» ասել է բեմադրիչ **Վահան Բաղալյանը**: Նրա բեմադրած հեքիաթային-նոստալգիկ բեմադրությամբ հինգշաբթի՝ հունիսի 19-ին բացվեց փառատոնի վարագույրը:

